

Հայոց
պատմութեան

Տիգրա Ալեքսանդրի

2399

9(47.925)

9 - 47

Գիշեակ
1924

2012

ԳԵՐՐԴ-ՄԵՍՐՈՊ

(31)

ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Միջին Ա. ՏԱՐԻ


Դ. ՏՊԱԳՐՈՒԹՅՈՒՆ



2004

ԳՐԱՑՈՒՆ ՄԵՍՐՈՊ

ՖԻԼԻՊԻ



Տպագր. Յ. Մ. Ակադեմիա

1924

9(47 925)

4-47

ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

(ՄԻԶԻՆ Ա.)

ԱՆԴԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ՀԱՅԿԱԶԱՆՑ ՀԱՐՍՏՈՒԹԻՒՆ

Ա. Դ. Ա. Ա

Հ Ա Յ Կ Ե Ւ Հ Ա Յ Ո Յ Ծ Ա Գ Ո Ւ Մ Ը

Ջրհեղեղին ետքը նոյի կամ Քսիսութրի զաւակները բազմացան։ Հաւաքուեցան Բաբելոնի մօտ ընդարձակ դաշտ մը, որուն անունն էր Սենար։ Հոն սկսան աշտարակ մը շինել, որպէս զի եթէ դարձեալ ջրհեղեղ պատահի, անոր վրայ ելլելով ազատուին։

Անոնց խորհուրդը անկատար մնաց, որովհետեւ Աստուած անոնց լեզուները խառնակեց։ Աշտարակը կիսատ մնաց։

Անոնք սկսան իրարու հետ կոռուիլ և իրարու վրայ բռնանալ։ Ով որ քաջ և զօրաւոր էր, իրեն կը հնաւ զանդեցնէր ուրիշները։ Բանի ուժով միասին կ'ուզէր դառնալ։ Տիտանեան Բէլը այնպիսի հոկատ մըն էր, որ

72767 - սեւ.

2003

435-84

Պօրութեամբ և խորամանկութեամբ շատերը
իրեն հպատակեցնել :



ԱՅՏԱՎԱԼԱԾԻՑՈՒԹԻՒՆ

Այդ հսկոներուն մէջ անուանի էր Հայիլ, որ նոյի
Յարեմ որդին թռն էր և թորգոմի որդին: Հայկ
ՎՅ 184

քաջ էր, հաստաբազուկ, զանգուր մազերով, ամրա-
կազմ, զուարթ աչքերով ազեղնաւոր մըն էր:

Ան ըմբռատացաւ և բնդդիմոցաւ Բէլի նման բոլոր
բոնականերու դէմ: Ճամբայ ելաւ դէպի Արարած




Հայկ Նահապետ

Կրկիրը, որ Բարեկոնի հիւսիսային կողմը կ'իյնայ: Անոր
հետ էին նաև իր որդիներն ու ազդիկները, թռները
և իրեն հպատակող քաջերը իրենց կիներով: Անոնց
թիւը երեք հարիւրի չափ կար:

Հայկ եկաւ բնակեցաւ ընդարձակ գաշտ մը, Կոր-
գուաց լեռներուն մօտ: Հն բնակութեան տառն շինեց

և իր կարմու անուն թոռանը յանձնեց։ Կաղմոս Արմենակի որդին էր։ Հայկ առաւ իրենները և գնաց աւելի վեր։ Հասաւ լեռնադաշտ մը որ Վանայ ծովին հիւսիւ-



Հայկի բնակած երկիրը

սային արեւմտեան կողմը կը գտնուէր։ Հոն բնակեցաւ, լեռնադաշտակին անունը դրաւ Հարք, որ հայրեա կը նշանակէ, այսինքն՝ հոտ բնակողները Հայերու հայրեն

են։ Հարքի մէջ շինեց գիւղ մը Հայկաշին անունով։ Այդ կողմերը կը բնակէին նաեւ առաջուրնէ հոն գացած մարդեր, որոնք իրենց կամքովը հնազանդեցան Հայկին և անոր լեզուն սորվեցան։

Հարք գաւառը այժմ կը կոչուի Պուշանը։

Ա.ՄՓՈՓՈՒՄ

Զրհեղեղէն ետք նոյի որդիները Սենաարի մէջ աշտարակ մը կը շինեն. Աստուած անոնց լեզուները կը խառնակէ։ Ով որ ուժով է կ'աշխատի իրեն հնազանդեցնել ուրիշները. ատոնցմէ մէկն էր Թէլ։ Հայկ կ'ըմրոստանայ եւ իրեններով կը դիմէ Արարատ։ Հայկ իր անունով գիւղ մըն ալ կը շինէ եւ կը կոչէ Հայկածեն, իսկ գաւառն ալ Հարք։

Զարգացման բաժին. = Կ'արժէ իւրաքանչյուր դասէ հանել ինչպէս բարոյական թելադրութեան նոյնպէս մտրի զարգացման նիւթ։ Աշակերտներու մտրի ծանօթութիւնները բազմացներու համար անհրաժեշտ է այս Այսպէս օրինակ՝ այս առաջին դասի առիթով. ուսուցիչը, նկատի ունենալով աշակերտներուն մտրի վիճակը, կրնայ լայն ծանօթութիւններ տալ Զրհեղեղի, աւտարակի մասին։ Յիշել թէ հին ժամանակները մեծ քաղաքներ չկային, այլ գիւղեր, աւաններ միայն. Հայկածեն։

Բ. ԴԱՍ

ՀԱՅԿԻ ԵՒ ԲԵԼԻ ՊԱՏԵՐԱԶՄԸ

Բէլ շատերը իրեն հնազանդեցնելէն ետք, իմացած ըլլալով որ Հայկ մեկնած է և գացած հաստատուած է հիւսիսային կողմը, իր որդիներէն մէկը զրկեց և պատուիրեց անոր ըսել։

— Բնակեցար այդ ցրտոթեան ու սառնամանիքի մէջ, սիրտդ ու հոգիդ ալ սառոյց դարձեր են: Կակուղե՛ր, մեղմացի՛ր և հնազանդէ՛ ինծի, և բնակէ իմ երկրիս մէջ ուր որ կը փափաքիս:

Հայկ խիստ ու խրոխտ պատասխանով ետ դարձուց Բէլի պատղամաւորները, Ապա Բէլ բարկացած զօրք ժողվեց և քալեց դէպի հիւսիս, Հայկի վրայ:

Երբ որ հասան կորդուաց լեռներուն մօտ, Կաղմոսի բնակութեան մօտերը, Կաղմոս վախցաւ և փախաւ, իր առջեւէն սուրհանդակ դրկեց Հայկին ըսելով.

— Գիտցի՛ր, ո՛վ դիւցազուններու մեծ, որ Բէլ քուվրայ կուգայ քաջերով ու հսկաներով: Ան արդէն հասած է իմ երկիրը, և ես կնոջս ու զաւակներուս հետ փախստական ահա կուգամ քու մօտ, Շո՛ւտ ըրէ, ինչ որ պիտի ընես ըրէ' :

Իսկ Բէլը ահագին թիւով և մեծ ամրոխով, լեռնէ մը վար վազով ջուրի հոսանքի մը պէս, կը փութար Հայկին բնակած տեղը հասնիլ, վատահելով իր զօրաւոր մարդոցը վրայ:

Ուշիմ, խոհեմ, քաջագանգուր և զուարթ աչքերով Հայկը իսկոյն հաւաքեց իր որդիներն ու թոռները, քաջ ու աղեղնաւոր հսկաները, թիւով քիչ և առանց վախնալու գէմ գնաց:

Երբ հասան Աղի ծովին եղերքը, կանգնեցուց իր սակաւթիւ զինուորները և ըսաւ.

— Ո՛վ ազատասէր Թորգոմեաններ, ձեզմէ ո՞վ կ'ուզէ սարուկ թաւալիլ հպարտ Բէլի ոտքերուն տակ: Յարձակինք նոյն իսկ այնտեղ, ուր բոնակալը կեցած ըլլայ իր քաջերուն մէջտեղ: Թող կամ փառքով ամէնքս մեռնիք և չտեսնենք մեր գերդաստանին գերի տարա.

ուիլը, կամ ցոյց տանք անոր մեր ձեռքի աջողականութիւնը:

Այսպէս խօսեցաւ Հայկ և առաջ տարաւ իր կըտրիձները, մինչեւ որ ասաւ զաշտի նման հովիտ մը՝ բարձր լեռներու մէջտեղ: Լեռնէն կը վաղէր ձորակ մը:

Հայկ նոր հաստատուեր էր այդ ձորակի մէկ եղերքը, երբ անոր քաջերը տեսան որ դիմացի լեռուն վրայէն կ'իջնէ թշնամին: Անոնք բոլորովին խասն ի խուռն կերպով վար կ'իջնէին:

Բէլ ձորակի միւս ափը, բլրակի մը վրայ, մի քանի ընակիր հսկաններով շրջապատուած, գոսող ու հպարտ կերպով կը դիտէր չորս կողմը: Բէլ բաւական հեռու կեցած էր իր խառնիձագանձ զինուորներով: Հայկ ինկոյն ճանչցաւ Բէլի խումբը ու տեսաւ բոնակալը:

Բէլ հագած էր երկաթէ գլխանոյ՝ պապուն ծայրերով, լանջքին ու թիկունքին վրայ՝ պղինձէ տախտակներ, սուքերուն բարձերուն և ձեռքի բաղուկներուն վրայ՝ պահպանակներ, մէջքը կապած էր գոտի և ձափ կողմէն կախած երկարի սուրը: աջ ձեռքը ունէր ամուր նիզակ մը, իսկ ձախ ձեռքը՝ վահան, ընտիր երիտասարդներ ալ կանգնած էին անոր աջ ու ձախ կողմերը:


Այս տեսնելով, Հայկ չուառվ կարգի դրաւ իր սակաւթիւ զօրքը. Արմենակը՝ իր եղբայրներուն հետ՝ կեցուց աջ կողմը, իսկ Կաղմոսը՝ ուրիշ երկուորդիներու հետ՝ ձափ կողմը, ինքն անցաւ ամէնքին գլուխիր. իսկ միացածները չարեց ետեւը: Այսպէս եռանկիւնի ձեւով կազմեց իր գունդը և դիմեց առաջ:

Հայկ քիչ մը կանգ առաւ և հեռուէն Բէլին ըսաւ. . . ի՞նչ ետեւէս ինկած ես և այստեղ եկեր ես:

Դարձի՛ր, գնա՛ քու տեղի, եթէ ոչ կը մհոնիս դուն
այսօր իմ ձեռքէն, Միթէ մոռյած ևս որ իմ նետը
երբեք չվրիպիր :

Պատասխանեց Բէլը և ըստւ.

— Եթէ չես ուզեր իյնալ իմ փոքրիկ զինակիրիս
ձեռքը և մեռնիլ անոր սուրէն, եկուր քու կամքովդ
մտի՛ր իմ իշխանութեան տակ և խաղաղութեամբ



Հայկի եւ Բելի պատերազմը

ապլէ՛ իմ տանը մէջ : Ես քեզ կը կարգեմ իբրեւ վարիչ
իմ որսորդ զինուորներուն և չուներուն :

Զի համբերեց Հայկ և սկսաւ անարդել .

— Շուն ես դուն և շունի խումբ էք դուն ու
քու ժողովուրզը : Ահա եկայ որ քու վրայ պարպեմ
իմ կապարձը (նետի պարիը) :

Եւ իրար խառնուեցան երկու կողմի հսկաները .
ահազին դղրդիւն բարձրացաւ երկրի վրայ անոնց ընդ-
հարումէն և ահուսարսափ կը ձգէին իրարու սրտերու
մէջ : Քիչ հսկաներ չտապալեցան : Բայց ոչ մէկ և ոչ
միւս կողմը չէր յաղթեր : Զարհուրեցաւ Բէլը և սկսաւ
ետ ետ քաշուիլ, բարձրանալ այն րլուրը ուրկէ իցեր
էր : Նա մտալիր էր այնտեղ ամրանալ, մինչեւ որ հաս-
նէր մնացած զօրքը, և այնուհետեւ դարձեալ նորոգուէր
կռիւը :

Հայկ անմիջապէս հասկցաւ անոր միտքը : Առաջ
նետուեցաւ, մօտեցաւ Բէլին . քաշեց իր լայնալիճ
ամուր աղեղը և նետը դպցուց անոր կուրծքին : Նետը
ծակեց անոր կուրծքի պղնձէ տախտակը, դուրս ելաւ
կռնակի կողմէն և գետնի մէջ մխուեցաւ :

Պարծևնկոտ Տիտանեանը գետին զարնուեցաւ և
շունչը փչեց, իսկ անոր գտնդը ու ամբոխը, տեսնելով
քաջութեան այս ահազին գործը, սարսափահար փա-
խան տափն անդին : Հայկի քաշերը ինկան անոնց
ետեւէն և խլեցին անոնց ձեռքէն անթիւ ձիեր, ջորի-
ներ, ուզեմեր եւայլն :

Իբրեւ իր յաղթութեան լիշատակ՝ Հայկ պատերազմի
գաշտին վրայ շինեց զիւղ մը և անուանեց Հայք, այդ
պատճառով վերջը գաւառը կոչուեցաւ Հայոց ձոր,
իսկ այն րլուրը, ուր ինկաւ Բէլ, Հայկը անուանեց
Գերեզմանիք: Հայոց ձոր գաւառը այժմ կը կոչուի նոյն-
պէս Հայոց ձոր և կը գտնուի Վանայ ծովին հարաւ
արեւելեան կողմը :

Բէլի մարմինը նա պատել տուաւ զեղերով, զմռաել
տուաւ և հրամայեց տանիլ Հարց և թաղել բարձր լեռան
մը վրայ, որ կիներն ու որդիները տեսնեն իրենց ամու-
սիներուն ու հայրերուն քաջութիւնը :

Պատերազմի աւարէն Հայկ մեծ բաժին հանեց իր կադմոս թռուան, և պատուիրեց երթալ նախկին բնաշկութեան տեղը, կորդուաց աշխարհը, իսկ ինքը դարձաւ Հայկաշէն, ուր շատ տարիներ ապրելէն ետքը մեռաւ:

Մահէն առաջ ան իր ամբողջ ազգը յանձնեց Արամենակ աւագ որդիին:

Հայկի անունով մեր ժողովուրդը կոչուեցաւ Հայ, իսկ ամբողջ երկիրը Հայաստան:

Ա.Ս.Փ.Ռ.Փ.Ջ.Խ.Մ.

Հայկ ըմբոստացած ըլլալուն համար, թէլ կը բարկանայ, նախ յորդորելով ապա բռնի կ'ուզէ իրեն հնազանդեցնել. Հայկի վրայ կը բալէ: Թէեւ ամուր զաններով պաշտպանուած էր, բայց կուռին մէջ կ'սպաննուի Հայկի նետովը: Հայկ պատերազմին տեղը գլուղ մը կը շինէ Հայք անունը, գաւառը կը կոչուի Հայոց ձոր, թէլի ինկած բլուրն ալ՝ Դեւեզմանէ: Հայկի անունով մեր ժողովուրդը կը կոչուի Հայ, իսկ մեր երկիրը՝ Հայաստան:


Զարգոցման բաժին . — Մանրամասն կերպով կարելի է բացատրել աշակերտներուն՝ պատերազմական հին զէնքիրը, աղեղ, նետ, նիզակ, վահան, կապարճ, եւայլն: Ծանօթացնել նաեւ մեռներ զմռսելու մասին. խօսիլ մոմիաներու վրայ:

Գ. Դ. Ա. Ս.

ՀԱՅԿԻ ՅԱԶՈՐԴՆԵՐԸ

Հայկ նահապետ մըն էր, այսինքն ընտանիքին մեծն էր, Հիմակուան թագաւորներուն կամ իշխաններուն պէս չէր: Անոր որդիիներն ալ իրենց հօրը մահէն ետքը եղան մէյմէկ նահապետներ:

Երբ որ Հայկ մեռաւ, անոր որդիիները սկսան ցըր-




Արագած լեռ

ուիլ զանազան կողմեր: Արմենակ նահապետ ըլլալով, իր կողմէ և Մանաւազ եղբայրները Հարք գաւառին մէջ ձգեց, և իր ընտանիքով քաշուեցաւ դէպի հիւսիսային արեւելք:

Նա բնակեցաւ յեռան մը մօտ, դաշտին մէջ: Այս լեռը անոր անունով կոչուեցաւ Արագած, իսկ գաւառը՝ Արագածոնան:

Արմենակի իր բնակած դաշտին մէջ գտաւ առաջուց Երուած մարդեր և իրեն հնագալանդեցուց :

Երբ Արմենակ մնուաւ, անոր որդին Արմայիսը նա հասկետ եղաւ, որ չինեց Արմաւիր անունով քաղաքը բլուրի մը վրայ :



Արմաւիրի բլուրը


Այս քաղաքը յետոյ ընդարձակուեցաւ և երկար ժամանակ հայ նահապետներու բնակավայրը դարձաւ :

Արմայիս ունէր շատակեր և շատ զաւակ ունեցող որդի մը, որու անունն էր Շարայ: Արմայիս Շարան իր մօտէն հեռացուց և տուն ու տեղով զրկեց Արագածի միւս կողմը, այն բարեբեր և արգաւանդ դաշտը, որ մինչեւ հիմակ նշանաւոր է իր առաւտ հունձքերով: Շարայի անունով այս դաշտը կոչուեցաւ Շիրալի: Շարայի շատակերութիւնը այնքան նշանաւոր էր որ մեր հայերը եթէ շատակեր մարդու մը հանդիպէին, կ'ըսէին.

«Թէ fn Շարայի որկորն է,
Մեր Շիրալայ ամբարֆն չեն:»

Այսինքն. «Եթէ որկորդ Շարայինն է, մեր ամբարները Շիրակինը չեն»: Հսել կ'ուզէին թէ ամենք քեզ պահելու համար Շիրակի լեցուն ամբարները չունինք»: Շիրակ դաւառը այժմ կը կոչուի Ալեքսանդրապոլ:

Հարք դաւառին մէջ մնացած Արմայիսի եղբայրներէն առաջ եկան երեք տաւանձին նախարարութիւններ կամ տոհմեր. Մանաւագեամները, Խորխառումինները և




Արարատեան դաշտ

Բզնունիները: Բզնունիները բնակեցան Վանայ ծովուն եղերքը, այդ պատճառաւ նոյն ծովը կոչուեցաւ Աղի կամ Բզնունիաց ծով: Մանաւագեամները բնակեցան Վանայ ծովին հիւսիսային կողմը, և իրենց անունով այդ երկերը կը կոչուի այժմ Մանավելեր, համանուն քաղաքով: Խորխառումինի ևս բնակեցան Մանազկերտի հարաւ արեւմտեան կողմը, անոնց երկերը այժմ կը կոչուի Արծիկ և Խշար:

Արմայիսի մեռնելէն ետքը անոր յաջորդեց իր որդին Ամասիա, որ իր բնակութիւնը հաստատեց բարձր լեռան մը մօտ գտնուած դաշտին մէջ։ Բարձր լեռան մօտ ուրիշ քիչ մը փոքր լեռ ալ կար։ Այդ լեռներուն անունները դրաւ՝ իր անունին նման։ Մեծ Մասիս և Փոքր Մասիս։ Ենինց նուև Ցղակլուց անունով քաղաք մը և ուրիշ քաղաքներ ու գիւղեր։

Հայկին յաջորդները հետզնեաէ կր բազմանային։ Ատոր համար ստիպուած էին նոր նոր բնակութեան տեղեր փնտուել։ Ատոնք կ'զբաղեին խաշնարածութեամբ



Գեղամայ ծով

և երկրագործութեամբ։ Երկրագործութեամբ պարագողները ստիպուած էին տեղ մը մնալ և հող մշակել, իսկ անոնք որ խաշնարած էին, տեղէ տեղ կը շրջէին ու նոր երկիրներ կը փնտուէին իրենց ոչխարները արածելու համար։

Ամասիայի ժամանակ բոլոր հայկացուները, այսինքն

Հայկի սերունդէն եղողները, ընդարձակ երկիր մը գրաւած էին և տէր էին Արարատեան լայնածաւալ դաշտերուն։

Ամասիայի յաջորդեց իր որդին Գեղաս, որ իր բնակութիւնը հաստատեց Արմաւիրէն դէսի արեւելեան հիւսիսային կողմը անուշ ջուրով ծովակի մը եղերքը։ Այդ ծովակին անունը դրաւ Գեղամայ ծով, իսկ գաւառը իր անունով կոչեց Գեղարյունիք։ Գեղամ որդի մը ունեցաւ, անոր անունը Սիսակ դրաւ։ Սիսակ քաջ, գեղեցիկ և ճարտարախօս մէկն էր։ Նա իր հօրը պէս նոր ստացած երկիրները չէնցուց։ Անոր անունով այդ երկիրը կոչուեցաւ Սիսական Կամ Սիւնիք, որ հիմակ կը կոչուի Զանգեզուր և Ղարաբաղ։ Սիսակէն առաջ եկաւ Միւնիեաց միծ նախարարութիւնը։

Գեղամին յաջորդեց իր որդին Հարմա։ Մինչեւ Հարմայի օրով Հայերը բազմանալով շատ երկիրներու տէր դարձեր էին, բայց սրբինեուեւ իրարմէ հեռու և բաժնուած կ'ապրէին, այդ պատճառով չկրցան դիմադրել մէկ երկու թշնամիներու։

Ա. Մ Փ Ո Փ Ո Ւ Մ

Հայկ նահապետի յաջորդեց իր որդին Արմենակ, որ իր նոր եւ Մանաւազ եղայրները Հարք գաւառուն մէջ զգեց, եւ ինքը զնաց բնակիցաւ լեռան մը մօտ, զաշտի մը մէջ։ Լեռը կոչուեցաւ Արագած, զաշտը՝ Արագածոն։ Արմենակի յաջորդեց անոր որդին Արմայիս, Արմաւիր քաղաքը շինեց։ Արմայիսի որդին էր շատակեր Շարայ։ Շարայի բնակած զաշտը կոչուեցաւ Շիրակ։ Արմայիսի յաջորդեց Ամասիա։ Անոր անունով երկու միծ լեռները կոչուեցան։ Մեծ Մասիս, Փոքր Մասիս։ Ամասիայի յաջորդը եղաւ իր որդին Գեղամ։ Անոր անունը տրուեցաւ Գեղամայ ծովին։ իսկ Գեղամին յաջորդը եղաւ Հարմա։

Զարգացման բաժին. — Ծանօթութիւններ տալ խաշնարած ու երկրագործ ժողովուրդներու բարրի մասին, հին տոհմերու ընտանեկան լնդհանուր կազմի մասին Խաջուն։

Ա. Ր. Ա. Մ. Ն. Ա. Հ. Ա. Պ. Ե. Տ.

Հարմանահապետի որդին էր Արամ, որ քաջ տխելցի մէկն էր : Նա աշխատասէր էր և հայրենասէր : Լաւ կը համարէր մեռնիլ իր պապերու թողած ժառանգութեան համար, քանի թէ իր աչքերովը տեսնել թէ ինչպէս օտարազգիներ կը կոխկրտին ու կ'աւերեն հայրենի սահմանները, գերի կը դարձնեն իր ազգականները և արիւնակից հարազատները :

Արամ քաջութեան ա'յնպիսի գործեր կատարեց, ա'յնքան պատերազմներու մէջ յաղթեց, Հայոց աշխարհը ա'յնչափ ընդարձակից ամէն կողմէն, որ անոր անունը փառաւորսւեցաւ, և օտարները անոր անունով Հայերը կոչեցին Արմեն կամ Էրևենիիսկ Հայաստանը Արմենիա:

Արամի օրով Հայոց երկրին մօտերը դանուող ազգերը տեսնելով որ Հայ նահապետները բաժնուած իւրարմէ հեռու կ'ապրին, Հայաստան արշաւելով սկսան նեղել Հայերը : Արամ բոլոր հայ նահապետները միացուց և անոնցմէ քառասուն հազար (40,000) զօրք ժողվեց ու կարգի դրաւ : Ապա մէկ մէկ յարձակեցաւ իր թշնամիներուն վրայ :

Դրեթէ երկու տարիէ ի վեր արեւելքէն, Երասխի միւս կողմէն, Հայաստան մտած էր Մարաց Նիւֆար իշխանը, որ գոռող ու պատերազմասէր մէկն էր : Անոր զինուորները ամէն չարիք կը գործէին . Հայերէն տուրք կ'առնէին, կը չարչարէին, կ'սպաննէին,

Արամ յանկարծ յարձակեցաւ նիւքարի մբայ, Դեռ արեւ չծագած կոտորեց անորու զինուորները : Նիւքարն ալ գերի բռնից և զրկեց Սրբաւ իր : Հրամայեց որ Արմաւիրի աշտարակներէն մէկուն վրայ ճակատէն գամեն, որ ամէն անցորդ տեսնայ թէ Արամը ի՞նչպէս վրէժ կը լուծէ իր հայրենիքը ոսնակոխ ընողներէն :



Նիւքար իշխանը ճակատէն զամուած Արմաւիրի աւտարակին վրայ

Այս յաղթութենէն ետքը Արամ տուրք դրաւ նիւքար իշխանին երկիրին՝ այլինքն Մարաստանի վրայ : Եւ ետքը իր զինուորներով գնաց զէսփ հարաւային կողմը : որովհետեւ հոն ուլ Հայաստանի թշնամի մը կար : Բարշամ անունով մէկն էր ան : Ասորոց իշխանն էր : որ ունէր 40,000 հետեւակ և հինգ հազար հեծեալ :

Բարչամ յարձակելով Հայոց վրայ, ծանր տուրքեր կ'առնէր անոնցմէ և կը նեղէր զանոնք։ Արամ իր քաշերով գնաց անոր դէմ, յաղթեց անոր, Բարչամն ալ սպաննեց։ Որովհետեւ քաջ մէկն էր Բարչամ, անոր աղքակիցները իբրեւ աստուած պաշտեցին զայն։


Արամ Բարչամի երկրին մէկ մասն ալ իրեն հպատակեցուց և տուրք տուաւ անոնցմէ։ Այսպէս նա ոչնչացուց իր երկու թշնամիները։ Բայց ամէնէն վտանգաւորը Պայապիս անուն իշխանն էր, որ ամրադ կապապ. վկիան բռնած էր, Պռնտոսէն (Սեւ ծովէն) մինչև Միջերկրական ծովը։

Պայապիս այնքան դօրաւոր էր և մեծ ոյժ տնէր, որ Արամ յոյս չունէր անոր շուտով յաղթելու։ Ուստի Հայաստանի արեւելեան սահմաններու պաշտոպ. մութիւնը յանձննեց Սիսականներուն Սիւնեաց տոհմին, իսկ հարաւային սահմանները Կադմոսի սերունդին։ Այդ կողմերէն ապահով ըլլալէն ետքը, իր զինուորներուն վրայ աւելցուց 40,000 հետեւակ և 2,000 հեծեալ ես, ու գնաց Պայապիսի վրայ։

Պատերազմելով Արամ յաղթեց անոր և հալածեց Միջերկրականի կղզիներէն մէկը։ Անոր լոռով երկիրը, Եփրատէն մինչեւ Ալիս գետը Հայաստանի կցելով, երեք մասերու բաժնեց։ Առաջին, Երկրորդ և Երրորդ Հայ։ Այս երեքը միասին կոչեց Փոքր Հայ, իսկ բուն Հայաստանն ալ անուանեց Մեծ այ։

Փոքր Հայքի վրայ իշխան դրաւ Մշտկը, իր աղքականներէն մէկը, տալով անոր 10,000 դօրք։ Արմավիր վերադառնալէ տռած նա հրամայեց որ այդ կողմերու բոլոր բնակիչները սորվին հայերէն լեզուն և հայերէն խօսին։ Սակայն այդ կողմի մարդիկը բնաւ չսորվեցան հայերէն աղէկ խօսիլ։ Մշտկ՝ Ալիս գետին մօ-


տերը փոքրիկ պարսպապատ քաղաք մը շինեց ու իր անունով կոչեց Մակ, բայց տեղացիները չկարողանաւով ուղիղ հնչել Կ'ըսէին Մածակ կամ Մազակ։ Յետոյ այդ քաղաքը կոչուեցաւ Կեսարիա։ Հիմակ թուրքերը կը կոչեն Գայսէրի։



Մածակ կամ Կեսարիա

Երբ Արամ յաղթութիւններով կը զբաղէր, Հայաստանի հարաւային կողմերը Ասորեստանի վրայ հ'իշենք նիևու թագաւորը, որ Բէլի սերունդէն էր և նիևու անուն քաղաք մը շինելով կը բնակէր վառաւոր պալատի մը մէջ։

Նինոս իր նախահօրը Բէլի մահուան համար զայրացած մտադիր էր վրէժ լուծել։ Յարմար ատենի կը սպասէր Հայի ամրադ ցեղը ջնջելու համար։ Բայց Արամ քաջ էր և հզօր։ Ուստի վախնալով բարեկամացաւ Արամին հետ և իբր ընծայ մարդարիտներով բանուած վարսակալ մը դրկեց։



Նինուեի պալատը

Արամ 50 տարիի չափ իշխեց և երկիրը ազատեց օտար բարբարոս թշնամինեն :

Ա. Մ Փ Ո Փ Ո Ւ Մ

Հարմայի յաջորդեց Արամ նահապետ: Ասոր օրով շրջակայք հնամիները, օգտուելով հայ նահապետներու բաժնուած ապելէն, յարձակած էին Հայաստանի վրայ եւ մէկ քանի զաւառներ զրաւած: Արամ 40,000 զինուոր կը հաւաքէ. նախ կը յարձակի Նիքար Մեղացին վրայ: Կը յաղթէ եւ զերի բռնելով Արմաւիրի աշտարակին վրայ ճակատէն կը զամէ: Ապա կը յարձակի Ասորոց Քարշամի վրայ, կը յաղթէ ու կը սպաննէ: Ամէնէն ետքը կ'արշաւէ արեւմտեան կողմը Պայապիսի վրայ, կը փախցնէ: Կը զրաւէ անոր երկիրները, եւ կը կոչէ Առաջին. Երկրորդ, Երրորդ Հայք, ամէնը մէկէն Փուշ Հայք: Իշխան կը կարգէ Մշակը, որ իր անունով քաղաք մը կը շինէ, այն է այժմու Կեսարիան: Արամի անունով Հայերը կը կոչուին օտարներէն՝ Արմէն կամ Երմէնի, իսկ Հայաստանը Արմէնիս կամ Երմէնիսան:

Զարգացման բաժին. — Այս դասին մէջ ծանօթացնել աշակերտներուն Հայաստանը իր շրջակայ երկիրներով, Մարաստանը, Ասորեստանը, Միջագետքը, Կապագովկիան, Սեւ ծովն ու Միջերկրականը, Ալիս զետն ու Եփրամը եւն, համառօտ ու ամֆոփ Վերանի միայն, բայց միջտ բարտէսի վրայ: Քարտէս չզտնուած տեղնը, ուսուցիչները կրնան տախտակի վրայ գծել, մեր զրբին ծայրը տպուած բարտէսին օգտուելով:

Ե. Գ Ա. Ց

ԱՐԱ ԳԵՂԵՑԻԿ ԵՒ ՇԱՄԻՐԱՋ

Արամին յաջորդեց իր որդին Արա Գեղեցիկ: Ասոր օրով Նինուէլի Նինոս թագաւորը մեռնելով, անոր տեղ երկիրը սկսաւ կառավարել անոր կինը Շամիրայ թագուհին, որ խելացի բայց չար կին մըն էր:


Շամիրամ լսելով Արայի գեղեցկութեան համբաւը, ուղեց անոր հետ ամուսնանալ: Բայց որովհետեւ Արա ամուսնացած էր Նոււարդ անուն հայ իշխանուհիի մը հետ, չուղեց իր կինը ձգել երեսի վրայ և մերժեց Շամիրամի առաջարկը:

Շամիրամ քանի մը անդամ նորէն պատգամաւոր ներ դրկեց. Արայի, բայց անօգուտ: Այն ատեն զայրացած մնեծ զօրքով արշաւեց. Հայաստան և ուղեց բըռնութեամբ ամուսնանալ:

Արա իր պատիւը պաշտպանելու համար անոր դէմ

ելաւ իր սակաւաթիւ զինուորներով։ Պատերազմք սկսաւ։ Շամիրամի նպատակը Արան սպաննել չէր, ուստի նա իր զինուորներուն պատուիրեց որ Արան չսպաննեն, ողջ իրեն տանին։

Կռիւի տաք միջոցին, Շամիրամի զօրքերը չկրցան ճանչնալ Արան անոր քաջերուն մէջէն և առանց գիտնալու սպաննեցին զայն։ Հայերը յաղթուեցան։ Բայց տեսնելով իրենց առաջնորդին մահը, սկսան կատաղի



Արայի դիակը Շամիրամի առջեւ

կերպով կռուիլ Շամիրամի զինուորներուն դէմ, որպէս զի անոր մահուան վրէժը լուծեն և անոր դիակը խլին։

Շամիրամ անոնց առջեւը ելաւ և ըստաւ։


— Հրամայեցի իմ աստուածներուն որ Արայի վէրքերը լիզէն և զայն կենդանացնեն։

Շամիրամ ինքն ալ շատ սիրելով Արա Գեղեցիկը,

շատ ոլրաց անոր մահը, և կ'ըսէր թէ անկարելի էր որ այսպիսի դեղեցիկ ու քաջ մէկը մեռնի։

Այդ պատճառով հրաման ըրած էր որ անոր դիակը բարձր տեղ մը դնեն, որպէս զի Առջեզ կոչուած աստուածները լիզէն ու կենդանացնեն։

Երկու երեք օր ետքը Շամիրամի տեղով որ դիակը նեխի սկսած է, հրամայեց Հայերէն գաղտնի՝ թաղել։ Եւ որպէս զի Հայերը չիմանան ու չապստամբին, Արային հագուստները ուրիշ մարդու մը հազցուց և հեռուէն Հայերուն ցոյց տալով հաւատացուց, թէ աստուածները Արայի վէրքերը լիզէն ու կենդանացիկ են։ Իսաւ նահեւ թէ Արան մինչեւ իր մահը իր ավատի մնայ։




քոններ եւ մայրաքաղաք: Ամէնէն կարեւորները եղած են Անի, Արտաւած, Վաղարշապատ, Կարս, Վան (Աղքամար), Եղեսիա, Սիս, Դուին, Լամբրոն, Տարտոն, Սեբաստիա, Կարին, Երզնկա, Մուշ, Խարբերդ, Տիգրանակերտ, Ալեքսանդրապոլ, Երևան, Եւայն:

Անի քաղաքը հիմնուած էր ժ. դարուն, Առու Քագրատունի թագաւորին կողմէ: Եղաւ մայրաքաղաք Քագրատունեան թագաւորութեան: Մեծ ու վաճառաշահ կեղրոն մը դարձաւ. ունէր մէկ միլիոնի չափ բնակիչ, 1001 եկեղեցի, հսկայ պարիսպներ, շքեղ պալատներ, հոյակապ շէնքեր: Մէկ քանի անգամ երկրաշարժներէ կործանեցաւ ժԴ. դարուն: Անոր աւերակները սկսաւ փորել ուուս գիտնական Նիկողոս Մառ եւ երեւան եկան հայ ճարտարապետութեան գեղեցիկ շէնքերուն մնացորդները: Անիի աւերակները, Ախուրեան գետին եղերքը, ալժմ կը գտնուին թուրքերուն ծեռքը:

Արտաւած.— Հայոց Արտաշէս թագաւորը, հոչակաւոր Աննիբալի խորհրդով, շինեց այս քաղաքը, երասխ գետին եղերքը, Քրիստոսէ առաջ, երկրորդ դարուն: Անկէ ետք 5-600 տարի, ընդհանրապէս եղաւ մայրաքաղաք: Քանի քանի անգամ կործանեցաւ պատերազմներու միջոցին եւ վերատին շինուեցաւ: Այժմ աւերակ փորբիկ գիւղ մըն է երեւանի մօտերը:

Վաղարշապատ հիմնուած էր Հայոց Վաղարշակ թագաւորէն, Քասաղ եւ Հրազդան գետերուն մէջտեղ, դաշտին մէջ: Եղած է մայրաքաղաք: Այս քաղաքին քովիկ կառուցուած են Էջմիածնի վանքն ու եկեղեցիները, ուր կը նստի Հայոց Ընդհանրական Կաթողիկոսը: Վաղարշապատ այժմ փորբիկ գիւղ մըն է:

Կարս.— Նշանաւոր բերդաքաղաք մըն է: ժ. դարուն Քագրատունի թագաւորներէն մէկ միւզը իբրև թա-



Կարս բերդաքաղաք

գաւոր նստաւ այս քաղաքին մէջ եւ կոչուեցաւ «Կապոց թագաւորութիւն»: Կարսը քանի քանի անգամ պատերազմի վայր եղած է: 1920 ին զրաւուեցաւ Թուրքերուն կողմէ:

Վան.— Վանայ ծովին եղերքը նշանաւոր քաղաք մըն է, կառուցուած Ուրարտուի թագաւորներէն: Հին ատեն կը կոչուէր Տոսպ: Վան եղաւ մայրաքաղաք Անդրտունի թագաւորներուն, որոնք շքեղ պալատներ շինեցն ու ամրացուցին քաղաքը, մասնաւորաբար կը նստէն Աղքամար Կղզիին մէջ: Արծրունի վերջին թագաւորը՝ Սենեքէրիմ Վանը թողուց եւ մեծ քազմութեամբ՝ ժողովուրդով գաղթեց Սեբաստիա (Սփազ) եւ հոտ մեռաւ:

Սիս.— Կիլիկիոյ մէջ, Ռուբինեան իշխանութեան մէկ մայրաքաղաքը եղաւ. հիմնուեցաւ 1186 ին Լեռու թագաւորէն: Նշանաւոր էր Սիսի մայրավանքը, ուր

Զ. Դ. Ա. Ս

ԱՐԱՅԻ ՅԱԶՈՐԴՆԵՐԸ

Արայի մահէն ետքը Հայաստան Ասորեստանի գերիշխանութեան տակ ինկաւ։ Հայ իշխանները որդւոց որդի կը կառավարէին երկիրը, բայց տարեկան տուրք կը վճարէին Ասորեստանի։

Արա Գեղեցիկ իր նուարդ կնոջմէն ունէր Կարդոս անուն աղայ մը։ Երբ Արա մեռաւ, Կարդոս 12 տարեկան էր։ Շամիրամ անոր անունը փոխեց և Արա դրաւ։ Հօրը յիշատակին համար, Ասորեստանցիներուն կողմէ Հայոց վրայ զրուած առաջին իշխանը եղաւ Կարդոս-Արա, ուրիշ մինչեւ Պարոյր 28 իշխաններու անուն կը յիշտի բայց դժբախտաբար անոնց բոլորին գործերը յայտնի չեն, կորսուած է անոնց պատմութիւնը։

Այդ 28 իշխաններուն մէջ նշանաւորներն են Կարդոս, որ Շամիրամի օգնութեան երթալով պատերազմեցաւ Նինուասի գէմ։ Նինուաս Շամիրամի փոքրիկ որդին էր։ Շամիրամ իր բոլոր որդիները սպաննել տուած էր որ ինքը միայն իշխէ, բայց Նինուասը ազատուած ու փախցուած էր։ Նինուաս մեծնալով զօրք ժողվեց և իր մօրք վրայ պատերազմի զնաց։ Պատերազմի միջոցին Շամիրամ և Կարդոս սպաննուեցան։

Կարդոս որդի մը ունէր, որուն անունն էր Անուշաւան։ Անոր համոր կը պատմուի թէ շատ խելացի, իմաստուն մէկն էր։ Ան կը կոչուէր Սօս, որովհետեւ պղտիկ եղած ատեն նուիրուած էր Արմաւիրի մօտ գլուխուղ սրբազն անտառի սօսի ծառերուն։ Մեր պա-

պերը ծառերը կը պաշտէին, որովհետեւ կը կարծէին թէ անոնց մէջ ողի կայ։



Անուշաւան սօսիներու նուիրուի

Անուշաւան իր հօրը Կարդոսի մեռնելէն ետքը գերի տարուեցաւ Նինուէ՝ Նինուասի կողմէն։ Ան իր խելացիութիւնովն ու բարեկամներու օգնութեամբ իրաւունք ստացաւ իր հայրենի երկիրը կառավարելու, պայմանաւոր որ տուրք վճարէ Ասորեստանցիներուն։

Անուշաւան անորդի մեռաւ։

Անոր յաջորդեց հայկացուն նահապէտ մը, որուն անունն էր Պարէ։

Պարէտէն ետքը ամենէն նշանաւոր իշխանն է Զարմարը, որ Ասորեստանցոց Տեւդամոս թագաւորին օգնութեան դնաց, Տրուադա քաղաքը պաշտպանելու



Զարմայր կ'սպաննուի Ալիլեսէն

Համար հին Յոյներուն կամ Հեղիներուն դէմ։ Տրովագի իշխանը Զարմայրին ալ բարեկամն էր։ Զարմայր սպաննուեցաւ պատերազմն մէջ հերէն քաջէ մը, որուն անունն էր Ալիլես։



Սենեթերիմ քագաւոր

Զարմայրէն ետք ուրիշ անուանի իշխան մըն ալ ունէինք Ալիլերի անունով։ Անոր օրով Ասորեստանի Սենեթերիմ թագաւորին որդիները, Աղրամելիք և Ասմասար, իրենց հայրը սպաննելով Հայաստան փախան։

Սկայորդին սպատուով ընկունեց զանոնք և բնաւ կոթեան համար երկիր տուաւ անոնց։

Ա. Մ. Փ Ո Փ Ո Կ Մ

Արայի մահէն ետքը Ասորեստանցիներու գերիշխանութեան տակ հայ իշխաններ կառավարեցին երկիրը, տուրը տալով նինուէի թագաւորներուն։ Արայի որդին էր Կարդոս, որիէ մինչեւ Պարոյր 28 իշխաններ եղած են. Նշանաւորներն են Կարդոս, որ մեռաւ Շամիրամի օգնութեան երթալով նինուէի զէմ մզուած պատերազմին մէջ։ Անուշաւան, Կարդոսի որդին՝ Նշանաւոր՝ սօսիներուն նուիրուած ըլլալուն համար։ Զարմայրը անուանի է Տրովագայի պատերազմին մասնակցած ըլլալուն համար։ Իսկ Ալիլորդին օրով Հայաստան փախած են Սենեթերիմի երկու որդիները, Աղրամելիք եւ Սանասար, որոնք սպաննած էին իրենց հայրը։

Զարգացման բաժին.—Տրովագայի պատերազմին աւանդավէսի մասին մեր այս դասընթացքի Տարր. Բ. տարիի ԺՅ դասին ուղղութեամբ, քիչ մը աւելի լայն ծանօթութիւններ տալ աշակերտներուն։ Նոյնակէս Սենեթերիմի սպանութեան պարագան քիչ մը աւելի ընդլայնել։


Է. Գ. Ա. Ա

Պ Ա Ր Ո Յ Ր

Սկայորդիի որդին էր Պարոյր, որ Հայոց առաջին ժագաւորը եղաւ։

Պարոյրի ժամանակ Ասորեստանի կամ Նինուէի թագաւորները շատ զեղս ու անպարկելու կեանք մը ան-

ցընելով տկարացած էին : Իրենց երկիրը աղքատացած էր :
Ասորեստանի արեւելեան կողմը երկիր մը կար,
ուր կը բնակէին Մարերը կամ Մեղացիները : Մեղացի
Նիւքարի երկիրն էր ադ : Այդ երկիրն իշխանն էր
Կիաքսար :



Կիաքսար իր զինուորները կանոնաւորեց, երկիրը
բարեկարգեց և իր թշնամիները պատժեց : Ան ուղեց
Նինուէի վրայ երթալով քաղաքը պաշտօնել և գրաւել,
Ասորեստանի թագաւորն ալ սպաննել : Առաւ իր զին-
ուորները և գնաց պաշտօնեց :

Բայց ուրիշ բարբարոս վայրենի ժողովուրդներ իր

երկիրը յարձակեցան և սկսան թալանել : Կիաքսար
ստիպուեցաւ իր երկիրը պաշտպանելու համար թողուլ
Նինուէն և ետ դառնալ : Կոռուեցաւ բարբարոսներուն
հետ և յաղթուեցաւ : Խոնարհեցաւ և պարտաւորուե-
ցաւ տուրք տալ :

Քանի մը տարի վերջը սկսաւ ուրիշ զբացի իշխան-
ներու հետ բարեկամութեան դաշինք հաստատել : Պա-
րոյր իշխանին հետ ալ բարեկամացաւ : Օր մը բարբա-



Բարբարոսները (Ակիւրազի) իր պատրաստեն
իրենց զենքերը

բաներուն գլխաւորները խնջոյքի հրաւիրեց և խնջոյքի
մէջ՝ զինուցած ատեն՝ իր զինուորներով խպաննեց զա-
նոնք : Բարբարոսները սկսաւ վանտել իր երկիրէն :

Անկէ ետքը Պարոյրի և Բաբելոնի իշխանին հետ
նորէն յարձակեցաւ Նինուէի վրայ : Բաղաքը պաշա-
րեցին և գրաւեցին : Նինուէն հիմնայատակ կործանե-
ցին . խոկ Ասորեստանցիներու թագաւորը, Սարդանա-
րալ, թշնամիներուն ձեռքը չինալու համար, ինքինքը
կրակը ձգեց և իր ընտանիքին հետ իր պալատի բոցե-
րուն մէջ այրեցաւ :

Կիաքսար չնորհակալ ըլլալով Պարոյրին՝ անոր թաւ գաւորական թագ տուաւ։ Սյապէսով Հայերը Ասորեստանցիներուն տուրք տալէն ազատուեցան և ունեցան իրենց թագաւորը։

Ա.ՄՓՈՓՈԽ

Ակայորդիի որդին էր Պարոյրի ժամանակ Մարաց Կիաքսար թագաւորը զօրք ժողվեց եւ նինուէի վրայ զնաց, բայց բարբարոսներուն պատճառով ետ զարծաւ ու անոնցմէ յաղթուեցաւ։ Խնջոյրի մէջ սպաննեց անոնց զիսաւորները եւ մնացածները վոնտեց։ Բարեկամ եղաւ Պարոյրի եւ Բարելոնի իշխանին, որոնց հետ նինուէն զրաւեց եւ կործանեց։ Սարդանարալ ինքինը այրեց։ Կիաքսար թագով պատուեց Պարոյրը, որ եղաւ Հայերուն առաջին թագաւորը։

Զարգացման բաժին. — Կարելի է քիչ մը աւելի լայն ծանթութիւններ տալ բարբարոսներու (=Սկլիթացիներու) մասին, թուելով անոնց բարբարիկ բարբերը։

Ը. Դ. Ա. Ս


ՀՐԱԶԵԱՅ ԵՒ ԻՐ ՅԱԶՈՐԴՆԵՐԻ

Երբ Պարոյր մեռաւ. անոր յաջորդեց իր որդին՝ Հրայեայ։ Անոր այս անունը տուած էին, որովհետեւ գեղեցիկ դէմք. պայծառ երես ու բոցեղէն աչքեր ունէր։

Հրաչեայ իր հօրը պէս լարեկամ եղաւ Մարաց և Բաբելացւոց հետ։ Եւ այդ պատճառով Բաբելոնի Նաբուգոդոնոսոր թագաւորին օդնութեան զնաց։

Նաբուգոդոնոսոր և Հրաչեյ, ժողվելով իրենց զինուորները, արշաւեցին Հրեաներու երկիրը, երուսաղէմի վրայ։

Երկար ժամանակ պաշարեցին քաղաքը, որով սաստիկ սով ինկաւ բնակիչներուն մէջ։ Անոնք ստիպ-



ԵՐՈՒՍԱՂԵՄ

ուեցան անձնատուր բլալ։ Նաբուգոդոնոսոր Հրեաներուն թագաւորին աղաքը սպաննել տուաւ անոր աչքին առջեւ, յետոյ անոր աչքերը փորել տուաւ և Բաբելոն գերի զրկեց։

Հրաչեայ և Նաբուգոդոնոսոր մտան Երուսաղէմ։ Հոն վառաւոր տաճար մը կար, Սողոմոն իմաստունի շինած տաճարը. մտան անոր մէջ, թանկագին առարկաներ առին և ապա տաճարն ու քաղաքը կործանեցին։

Բազմաթիւ Հրեաներ գերի տարին Բարելոն : Հրաչ-
եայ այդ հրեայ գերիներէն խումբ մը բերաւ բնակեցուց
Հայաստանի մէջ : Այդ գերիներուն մէջ նշանաւոր էր
Շաբաթ կամ Սմբատ անունով իշխանը, որուն սերուն-
դէն առաջ եկաւ Բագրատունեաց մեծ նախարարու-
թիւնը :

Հրաչեայի յաջորդեց մէկ երկու հայ թագաւոր-
ներ, որոնց մասին դժբախտաբար մէծ բան մը չենք
գիտեր. անոնց պատմոթիւնը կորսուած է :

Ա. Մ Փ Ո Փ Ո Խ Ա Ր

Պարոյրի յաջորդեց Հրաչեայ, որ իր հօրը պէս բարեկամ եղաւ
Մարաց եւ Բարելացոց հետ: Նարուզողոնուորի օգնութեան եր-
թալով Երուսաղէմը առին եւ հրեայ գերիներ ըերին: Հրաչեայ
փորքի զաղթականութիւն մը բերաւ նստեցուց Հայաստան, Սմբա-
կամ Շամբաթ հրեայ իշխանէն սերեցան Բագրատունիները: Հրաչ-
եայի յաջորդներու մասին բան մը չենք գիտեր դժբախտաբար:

Զարգացման բաժին. — Ուսուցիչը կրնայ թիչ մը լայն ծա-
նօթութիւններ տալ Յուղայի թագաւորութեան, Երուսաղէմի մա-
սին: Վէտր է հասկնել թէ հին ատեն գերի վարել սովոր էին
ինքնակալներ որոշ նպատակներու համար: Կարելի է խօսիլ գերի-
ներու ազգնութեան մասին եւս, բայց ամենէն աւելի գերեվա-
ճառութեան ու անոր ջնջումի մասին:

Թ. Դ Ա Ս

Տ Ի Գ Ր Ա Ն Ե Ր Ո Ւ Ա Ն Դ Ե Ա Ն

Հրաչեայէն ետք Հայաստանի վրայ իշխաղ թագաւ-
որներէն մէկն էր Երուանդի, որուն պրէին էր Տիգրան
Ա.: Երուանդը քիչ ապրած ըլլալուն համար կը կոչուի
Սակաւակեաց, իսկ Տիգրանը իր հօրը անունով՝ Տիգրան
Երուանդեան :

Տիգրանը մեր թագաւորներուն ամէնէն գօրաւորը,
ամէնէն իմաստունը և քաջն էր: Մեր պապերն ու գու-
սանները այսպէս կը նկարագրէին Տիգրանը :

Սնոր մազերը չէկ էին ու գանգուր, երեսը զուարթ-
սպիտակ ու կարմիր, քաղցրահայեաց, մարմնով յաղ-
թանդամ, թիկունքը լայն, ազդիները լիցունկեկ, ոս-
ները չափաւոր: Իսկ ինքը պարկեցա էր ու չափաւոր:
ամէն բանի մէջ, թէ կէրուխումի և թէ զուարձու-
թիւններու մէջ: Նա ամէնքին վրայ հաւասար աշքով
կը նայէր, արդար էր և զթած:

Իր երկիրը բարեկարգելու համար հոգ տանելալ,
կանոնաւորեց իր զինուորները: Հեծելազօրքը բազմա-
ցուց, հետեւակ զօրքը կրթեց և ամէնուն ձեռքը սուր-
աէդ ու նիզակ տուաւ, վահաններով և զրահներով
զինեց:


Տիգրան այսպիսի ընտիր զինուորներուն գլուխը
անցնելով արշաւեց Հայաստանի արեւմտեան կողմը և
գնաց մինչեւ Միջերկրական ծովին եզերքները: Դրաւեց
շատ երկիրներ և անոնց վրայ հարկ դնելով գարձաւ իր
հայրենիքը:

Հայերը սկսան հարստանալ, վաճառականութիւն

ընել, իրենց պէտքերը հեռու տեղերէ կը բերէին. անկէ ետքը սկսան աղէկ հագնիլ ու զարդարուիլ:

Տիգրանի ժամանակ Մարաց թագաւորն էր Աշխահակ: Անոր թոռն էր Կիւրոս, որ Պարսիկներուն իշխանն էր: Կիւրոս կ'ուզէր իր պապին ձեռքէն թագաւորութիւնը խլել, ատոր համար բարեկամացաւ Տիգրանի հետ:

Աժդահակ, իմանալով Կիւրոսի և Տիգրանի բարեկամանալը՝ շատ վախցաւ. գիշեր ցերեկ կը մտածէր իր վիճակին վրայ:



Աժդահակի երազը

Գիշեր մը սոսկալի երազ մը տեսաւ: Իբրև թէ Հայոց ձիւնապատ լեռներէն մէկին վրայ ծիրանի հագած գեղեցիկ կին մը նստած էր: Նա յանկարծ երեք չա-

փահաս կտրիմներ ծնաւ: Անոնցմէ առաջինը առիւծի մը վրայ հիծաւ և արեւմտեան կողմը դիմեց, երկրորդը ինձի մը վրայ նստաւ ու դիմեց դէպի հիւսիս, իսկ երրորդը ահագին վիշապ մը սանձելով յարձակեցաւ Մարաց տէրութեան վրայ:

Երրորդը առիւծի նման թեւեր առած հասաւ Աժդահակի պալատին մօտ, որտն տանիքին վրայ Աժդահակ զոհ կը մատուցանէր, թուաւ դէպի թագաւորը և կ'ուզէր կուռքերը կործանել: Թագաւորը մէջ մտաւ ու կռուի բռնուեցաւ այդ կտրիմին հետ, բայց յաղթուեցաւ ու սպաննուեցաւ:

Աժդահակ ստրսակած արթնցաւ և իր մօտ կանչեց խորհրդականները, անոնց պատմեց իր երազը ու խորհուրդ հարցուց:

Ա.ՄՓՈՓՓՈՒՅ


Երուանդի որդին էր Տիգրան Ա., որ շատ գեղեցիկ, խելացի եւ քաջ մէկն էր: Ան կարգի դրաւ իր զինուորները, ծիաւորները բազմացուց, նոր զէնքեր տուաւ անոնց ամէն մէկին: Ապա քալեց Հայաստանի արեւմտեան կողմը, մինչեւ միջերեքական ծովք զբոնուած երկիրները զրաւեց: Բարեկամացաւ Պարսից Կիւրոս թագաւորին, որ Աժդահակի թոռն էր եւ կ'ուզէր իր պապին ծերքէն խլել իշխանութիւնը: Աժդահակ վախնալով երազ մը տեսաւ. հայոց լեռներէն մեկին վրայ կին մը երեք կտրիմ կը ծնի, երեքը մէյմէկ կենդանիի վրայ մէյմէկ կողմ կ'երթան. Երրորդը վիշապի մը վրայ նստած կուզայ կ'սպաննէ Աժդահակը, որ երազն արթննալով խորհրդականները կը կանչէ, խորհուրդ հարցնելու համար:

Զարգացման բաժին. — Կիւրոսի եւ անոր տոհմի մասին աւելի լայն ծանօթութիւններ աաւ:

Ժ. Գ.Ա.Ա

ՏԵՂՔՈՆ ԵՒ Ա.Ժ.Դ.Ա.Հ.Ա.Կ

Աժդահակները խորհրդականները մտածեցին և որոշեցին խարդախութիւնով սպաննել կամ թունաւորել Տիգրանը։ Աժդահակ դեսպան զրկեց ընծաներով Տիգրանի և խընդրեց, որ Տիգրանունի քոյրը իրեն կնութեան տայ։ Տիգրան ընդունեց և իր քոյրը դրկեց Մարաստան։ Աժդահակ սպասուով ընդունեց զայն։



Աժդահակ կ'ընդունի Տիգրանունին


Օր մը Աժդահակ Տիգրանունին իր մօտ հրաւիրելով ըստ անոր։

— Դուն չես գիտեր թէ որչափ նախանձու է Տիգրա-

նի կինը Զարուհին։ ան աչք տնկած է քու վրայ և մեր դէմ կը զրդու Տիգրանը, որպէս զի Տիգրանը Մարերու թագաւոր ըլլայ և ինքն ալ թագուհի։ Հնար մը գտիր այս խայտառակութեան վերջ մը զնելու համար։

Տիգրանունի շուտով հասկցաւ Ա.Ժդահակի միաքը, հաւատարիմ մէկու մը միջոցաւ գաղանի իմաց տուաւ Տիգրանին՝ Ա.Ժդահակի չար դիտաւորութիւնը։

Ուստի երբ Ա.Ժդահակ Հայոց թագաւորը հրաւիրեց որ երկու երկիրներուն սահմանազլուխը գայ՝ իրեւ թէ կարեւոր գործի մը վրայ խորհրդակցելու համար, Տիգրան իր զօրքն առաւ և Մարաց վրայ գնաց։



Տիգրանակերտ (Փարղին)

Տիգրանունի յարմար միջոցը գտաւ իր եղբօրը բանակը փախչելու համար։ Կոփւը սկսաւ, Տիգրան իր նիզակովը Ա.Ժդահակը սպաննեց։ Ծատերը սպաննուեցան։ Ա.Ժդահակի առաջին կինը, Անոյշ, և թագաւորա-

կան ցեղէն բազմաթիւ աղջիկներ ու պատանիներ գերի ինկան Հայոց ձեռքը:

Տիգրան իր սիրելի քոյրը բնակեցուց իր շինած Տիգրանակերտ քաղաքին մէջ, իսկ միւս գերիները տարաւ նստեցուց Մասիս լեռան մօտ: Անոնցմէ առաջ եղան Մուրացան (այսինքն Մարացւոց) նախարարութիւնը:

Տիգրանի բարեկամ կիւրոսը տէր եղաւ Աժդահակի թագաւորութեան ու երկրին:

Ա. Ա. Փ Ո Փ Ո Խ Վ


Խորհրդականներու խորհուրդին համեմատ Աժդահակ ամուսնացաւ Տիգրանուհի հետ: Ուզեց զայն զործիք լնել, սպաննելու համար Տիգրանը, բայց Տիգրանուհի լուր տուաւ: Երբ Աժդահակ Տիգրանը հրաւիրեց իրեւ թէ խորհրդակցելու, Հայոց թագաւորը զօրքով զնաց, բոյրն ազատեց, Աժդահակը սպաննեց: Քոյրը բնակեցուց Տիգրանակերտի մէջ, իսկ միւս գերիները Մասիսի մօտ, անոնցմէ են Մուրացանները:

Զարգացման բաժին.—Ծանօթացնել թէ Աժդահակ ի՞նչ կը նշանակէ (վիշապ), անոր շուրջ եղած աւանդութիւնները, Մարերու մասին թիչ կը աւելի լայն ծանօթութիւններով խօսիլ Վիշապութիւնը բացատրել Աժդահակով եւն:

Ժ. Ա. Գ. Ա. Ս

Տ Ի Գ Ր Ա Ն Ի Յ Ա Զ Ո Ր Դ Ն Ե Բ Լ

Տիգրանի մահէն ետք սնոր կը յաջորդէ իր ելրորդ որդին Վահագն, որ իր քաջադարձութիւններուն համար հին Հայերը աստուածացուցին զինքը: Մեր երգիչները զարմանալի բաներ կը պատմեն անոր մասին, անոնք Յոյներուն Հերակլէսին հետ կը համեմատեն:



Յարդողի նանապարհը

Կ'ըսէին թէ վիշապներուն հետ կռուած և յազթած է ան. այդ պատճառով կոչուած է նաև վիշապայն (վիշապ սպաննող): Կ'ըսէին դարձեալ թէ Ասորոց Բարշամ նահապետին յարդը գողցած ու երկինք տարած

է, բայց ճամբան յարդր թափթիելով մնացած ու աստղերու փոխուած է։ Մինչև հիմակ կայ և Յարդգողի ձանապահը կը կոչուի։

Ոչ միայն Հայերը առև և Վայիները անոր արձանը կանգնելով, կը պաշտէին զոհերով։ Այս կը նմանցնէին նաև առաւօտ ծագող արհեփն։


Վահագնէն ետք եղած են մէկ քանի հայ թագաւորներ, բայց անոնց վրա բան մը չենք գիտեր։ Անոնց մէջէն մէկն էր վան, որուն անունով Շամիրամակեր քաղաքը կոչուեցաւ վան, իսկ Աղի կամ Բզմունեաց ծովը՝ վանայ ծով։

Նոյնպէս այդ թագաւորներէն մէկն էր նաև վանի, որ քաջ մարդ մըն էր։



Մեծն Աղեսանդր

Մեծն Աղեսանդր բազմաթիւ զօրքով կ'արշաւէ Պարսիկներուն երկիրներուն վրայ։ Որովհետեւ վահէ Պարսից թագաւորին բարեկամն ու դաշնակիցն էր, իր զինուորներով օդնութեան կ'երթայ Պարսից թագաւորին։



Խոսի դաշը, Հայոց ծոցին մօս



Աղեսանդր ձի նեծած կը կռուի

Մեծ պատերազմ մը կը մղուի իսոս ըստած տեղը՝
Յետոյ Արքեց կոչուած քաղաքին մօտ։ Յոյները կը
յարձակին Պարսիկներուն վրայ, որոնք կը փախչին,
Հայերը տեսնելով որ Պարսիկները կը փախչին, իրենք
ալ կը քաշուին։ Վահէ կ'առնէ իր զինուորները և կը
դառնայ Հայաստան։

Մեծն Աղեքսանդր ուզեց հնադանդեցնել Վահէն,
ատոր համար քալեց անոր վրայ։ Վահէ գէմ ելաւ
անոր և քաջաբար կռուեցաւ։ Սահայն կռուի միջոցին
Աղեքսանդր նետով մը սպաննեց զայն։

Հայաստան անկէ ետքը ինկառ Աղեքսանդրի իշ-
խանութեան տակ։ Հայկազնոց իշխանութիւնը վերջա-
ցաւ Վահէի մահովը։

Ա. Ա. Ա. Ա. Ա. Ա.

Տիգրանի կը յաջորդէ Վահազն, որ իր բաջութեան համար
իբրեւ աստուած կը պաշտուի Հայերէն ու Վրացիներէն։ Անկէ ետ-
քը մէկ բանի անծանօթ թագաւորներ եղած են. անոնցմէ մէկն է
Վահ, ամէնէն նշանաւորն է Վահէ, որ Մեծն Աղեքսանդրէն կ'ըս-
պանուի։ Հայկազնոց հարատութեան վերջին թագաւորը կ'ըլլայ
Վահէ։

Զարգացման բաժին — Կարելի եւ կարեւոր է աշակերտնե-
րուն ծանօթացնել Հերակլէսի արկածները կամ բաջագրծութիւն-
ները, խօսիլ նաև Ծիրկաթինի կազմութեան մասին ամփոփ, Աղեք-
սանդրի կեանքին ու արշաւանքներու մասին եւայլն։

ՔՆՆԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Ժ. Բ. Գ. Ա. Ա.

ՎԱՆԵԱՆ Ա. Բ. Ջ. Ա. Գ. Ր. Ո. Խ. Ի. Խ. Ն. Ե. Ր


Մինչեւ հիմակ սորվեցանք Հայոց աւանդական պատ-
մութեան առաջին մասը, այսինքն՝ Հայկազնոց Հարբա-
տութիւնը։ Այսօր համառօտ կերպով պիտի սորվինք
նաև Հայաստանի ծշմարիտ պատմութեան առաջին մասը։

Հին ժամանակ ոչ զիր կար, ոչ տպագրութիւն,
Մարդիկ չէին կրնար իրենց ժամանակ պատահած գէպ-
քերը գիրի ասնել։ Իրենց նշանաւոր թագաւորներուն,
մեծ պատերազմներուն և քաջութիւններուն վրայ չէին
կրնար պատմութիւններ գրել։

Հիմակ մինք դպրոցներ ունինք, հոն ուսուցիչները
իրենց աշակերտներուն կը պատմեն իրենց ազգին պատ-
մութիւնը և աշակերտները միտք պահելով կը սորվին։
Հին ժամանակ զպրոցներ և ուսուցիչներ ալ չի կային ։
Բայց ատոր փոխարէն հին ատեն կային գուսաններ,
երգիչներ (աշուղ), որոնք գիւղէ գիւղ և քաղաքէ քա-
ղաք պատելով հին մարդերու պատմութիւնը երգի
ձեւով կը պատմէին։ Անոնք կ'իրգէին հին քաջերու
գործերը՝ հանդիսաւոր տօներու միջոցին։ Ունէին այլ և
այլ քաղցրածայն նուագարաններ, ինչպէս թառը։

Դուսաններէն զատ տունին ծերունիները, ձմեռ
ժամանակ, երկար իրիկունները, իրենց բոլորտիքը
կ'առնէին իրենց փոքրիկները և անոնց կը պատմէին
սիրուն հէքեաթներ, կը պատմէին Հայկի, Արամի,

Արայի, Տիգրանի և այլ պատմութիւնները։ Տղաքներն ալ բերնէ բերան, լսելով կր սորվէին ու մեծնալով իրենց զաւակներուն կը պատմէին։



Թառ

Անոնց բոլոր պատմածները կը կոչուին Աւանդական Պատմութիւն, որովհետեւ որդւոց որդի իրարու աւանդուած պատմութիւններ են անոնք։

Բնական է որ զիրի չառնուած և բերանացի աւանդուած պատմութիւնը բոլորովին ճիշտ չըլլար։ Որովհետեւ բերնէ բերան, կամաց կամաց կը փոխուի։ Պապիկը պատմած ժամանակ մէկ երկու աղուոր բառեր կը գործածէ, տղան երբ կը մեծնայ իր պապիկին բառերը կը գործածէ, բայց ինքն աէ երկու երեք աղուոր բառեր և խօսքեր կ'առելցնէ։ Այսպէս հարիւր, երկու հարիւր տարի ետքը առաջին պապիկին պատմածէն բոլորովին տարբեր կերպով կ'ոկախն պատմել։ Ասոր համար է որ Աւանդական Պատմութիւնը ամէն կերպով ճիշտ չի կրնար ըլլալ։

Ուրեմն աւանդական պատմութիւնը սորվելէն ետքը, մենք պէտք է սորվինք նաև մեր ազգին բուն պատմութիւնը։

Գիտենք արտէն աւանդական պատմութենէն որ մեր ազգին հիմնադիրը Հայկ՝ առաջին անգամ Հայաստանէն դուրս՝ հեռուն կը դոնուէր։ Ան իր բոյոր ընտանիքը ժողվեց, իր սերունդի մարդերը հաւաքեց և եկաւ Հայաստան ու հոն բնակեցաւ։ Հայաստանի մէջ կային արդէն օտար ցեղէ բնակիչներ, որոնք Հայկին հընազանդեցան, Հայերու լեզուն սորվեցան և եղան Հայ։ Հայաստանի այդ հին բնակիչները ո՞վ էին, ի՞նչ լեզու կը խօսէին, ի՞նչ սովորութիւններ ունէին, մարդի գիտեր։ Աւանդական պատմութիւնը բան մը չըսեր անոնց մասին։ Բայց մենք հիմակ զիտենք այդ բոլորը։

Հայ առաջնորդներու կամ նահապետներու միջոցաւ Հայերը Հայաստան գալէն առաջ՝ Հայոց երկիրը բնակողները կը կոչուէին Խալլիխներ կամ Ուրարտուցիներ։

Ուրարտուցիները շատ նշանաւոր ժողովուրդ էին։ Սնոնք ունէին քաղաքներ, գիւղեր, թագաւորներ։ Անոնց թագաւորները զիտէին քարի վրայ զիրեր զրել տալ։ Վանի մէջ և Հայաստանի ամէն կողմերը այդ տեսակ արձանագրութիւններ շատ կան։ Առաջ մարդ չէր կրնար կարտալ զանոնք, բայց հիմա կը կարդացուին և կը հասկցուին։ Այդ գիրերը գրուած են քարերու վրայ փորուելով, փոքրիկ զամբի, բևեռի նման նշաններով, այդ պատճառով կոչուած են բեւեռաձև զիրեր։

Տեսէք թէ Ուրարտուցիները ինչպէս մէկ, երկու կը զրէին։ Վերէն վար քաշուած գամ մը կը նշանակէր միկ, երկու գամը՝ երկու, երեք գամը՝ երեք, երեք գամին տակ լայն զլուխ գամ մը՝ յորս, ծուռ դարձած գամի գլուխ մը՝ տալ ևայն։

1	¶	18	¶¶¶
2	¶¶	19	¶¶¶
3	¶¶¶	20	¶¶
4	¶¶¶	21	¶¶
5	¶¶	30	¶¶
6	¶¶	40	¶¶
7	¶¶¶ կամ ¶¶¶	50	¶¶
8	¶¶¶ կամ ¶¶¶	60	¶
9	¶¶¶	70	¶¶
10	¶	80	¶¶
11	¶¶	90	¶¶¶
12	¶¶¶	100	¶—
13	¶¶¶	120	¶—¶
14	¶¶¶	200	¶¶—
15	¶¶¶	1000	¶—
16	¶¶¶	2000	¶¶—
17	¶¶¶		

ՈՒՐԱՐՏԱԿԱՆ ԹՌԻԱՆՇԱՆՆԵՐ

Տեսէք նաև միւս էջին վրայ գրուած բեւեռաւ-
ձև գիրերը, որոնց մէջ վերէն վար մարդու պէս կանգ-
նած դամբ կը նշանակէ՝ մարդ, երկու պղտիկ դամբ
ծուռ՝ իրարու վրայ դարձած, կը նշանակէն աշխարհ,

¶ Մարդ	—¶ տէր
¶ Աշխարհ, երկիր	—¶ բոլոր, ամենայն
¶ նշան յոգնակիի	¶ երկիր
¶ թագաւոր	¶ Ardini Աստուած, Օր.
¶ փայտ, ծառ	—¶ Աստուած
¶ թագաւոր	¶ ¶ չուր
¶ յոգնակիի նշան	¶ ¶ ոչխար
¶ կին	¶ ¶ երշանիկ
¶ քաղաք	¶ ¶ տեղ, վայր
¶ եզ	¶ ¶ գոմեց, ցուլ.
¶ մեծ	¶ ¶ Toisba, Աս- տուած
¶ մեծազօր	
¶ տուն, տաճար	¶ ¶ գետ
¶ ազգ, ժողովուրդ	¶ ¶ պալատ, տա- ճար
¶ Արձանագրու- թիւն	¶ ¶ պահանա- քար
¶ զու	¶ ¶ գրուած քար
¶ գուռ (քաղաքի)	¶ ¶ թագաւոր
¶ աշ	¶ ¶ պալատ
¶ մարդիկ, ժողո- վուրդ	¶ ¶ ¶ կին
¶ միս	¶ ¶ ¶ գառն.

ՈՒՐԱՐՏԱԿԱՆ ԳԱՂԱՓԱՐԱՆՇԱՆՆԵՐ

Ինչպէս երկինքը ու երկիրը, որ իրարու վրայ դարձած վրաններու լը նմանին. ջուրի նման, գետի նման իրարու ետեւէ հոսող գամերու նշանները կը նշանակեն ցուր, զետ ևն. :

Առաջ, երբ գիր չիկար տակաւին, մարդիկ քարերու և ծառերու վրայ կը շինէին պատկերներ, որոնք յետոյ գիրերու փոխուեցան: Օրինակ. տուն ըսելու և գրելու համար կը շինէին տունի պատկեր մը, մեղու ըսելու համար կը շինէին մեղուի պատկեր մը, երկինքի համար՝ երկինքի նման կլոր պատկեր մը: Բայց որովհետեւ պատկեր շինելը շատ գժուար էր և ժամանակի կարօտ էր, կամաց կամաց սկսան պարզել ու դիձերու վերածել: Մյսպէս մեղուի և երկինքի պատկերները սաձեւափախութիւնները կրեցին և պարզուեցան:



Երկինք

Հայաստանի մէջ գտնուած բազմաթիւ արձանաւորութիւնները, ամէնքն ալ բեւեռաձեւ են, որոնք կը հասկցուին, բայց լեզուն զիտցուած չէ: Անոնց իմաստը կարելի է հասկնալ բայց չէ կարելի գիտնալ թէ ի՞նչ լեզուով գրուած են: Օրինակ, ինչպէս 10 թուանշանը բոլոր ազգերն ալ կը դրեն, կը հասկնան, բայց տարբեր կը հնչեն. Հայերը կ'ըսեն տար, Թուրքերը՝ օն, Յոյները՝ տիժ, Ֆրանսացիները՝ տիզ: Անանկ ալ գիտունները բեւեռազիրերուն իմաստը կը հասկնան, բայց ինչ լեզուով գրուած ըլլալը չեն կրնար իմանալ, որովհետեւ հիմակ կորսուած է Ուրարտուցիններու լեզուն:

Ա. Մ. Փ Ո Փ Ո Խ Մ

Հին ատեն չի կային զիր, գպրոց, ուսուցիչ եւ տպագրութիւն: Մարդիկ պատմաւթիւն չէին կրնար գրել: Գուսանները, երգիչները եւ ծերունիները բերնէ բերան կ'աւանդէին հին պատմութիւնները: Անոնց պատմածները կը կոչուին Աւանդական Պատմութիւն, որ բոլորովին ճիշդ չի կրնար ըլլալ: Աւանդական պատմութեան համեմատ, երբ Հայերը Հայաստան եկան՝ բնակեցան, ոնոն զտան տեղացի ժողովուրդ մը, որ հնազանդեցաւ եւ խառնուեցաւ Հայերուն: Այդ ժողովուրդը զիտենք հիմակ որ կը կոչուէին Խալդիներ կամ Ուրարտուցիններ: Անոնք նշանաւոր էին. ունէին թագաւորներ, որոնք զիտէին արձանագրութիւններ գրել տալ: Անոնց զրած զիրերը բեւեռի կամ գամի նման ըլլալուն համար կոչուած են բեւեռաձեւ զիրեր: Անոնց լեզուն չենք զիտեր բայց կը հասկնանք իմաստը:

Զարգացման բաժին. — Մասնաւոր ուշագրութեան առարկայ գարծնել զիրը, ցուցնել անոր կրած դիմայեղումները, պատկերազիր, մեհենազիր, գաղափարազիր, սեպազիր, վանկազիր եւն: ևւն:

Փ. Դ. Ա. Ս

ՈՒՐԱՐՏՈՒԻ ԹԱԳԱՀՈՐՆԵՐԻ, ԱՐԱՄԻ

Ուրարտու և Նախի կը կոչուէր Խաղիներու բնակած երկիրը, որ յետոյ կոչուեցաւ Հայաստան։ Վանայ ծովն ալ կը կոչուէր՝ Նախիի ծով։

Ուրարտուի մէջ կային բազմաթիւ թագաւորներ և իշխաններ։ Ամէն քաղաք, ամէն գիւղ իր իշխանն ունէր։ Ամէն իշխան կամ թագաւոր կը կառավարէր իր գիւղը կամ քաղաքը։

Այս թագաւորները ու իշխանները երբեմն երբեմն իրարու հետ կոիւներ կ'ընէին։ Մէկ քաղաքին թագաւորը միւս քաղաքի թագաւորին վրայ կը յարձակէր և անոր յաղթելով կը գրաւէր անոր քաղաքը։

Այսպէս իրենց մէջ միշտ կոիւ կար ու բաժնուած էին։ Այնպէս որ երբ դուրսէն զօրաւոր թշնամի մը գար՝ ամէնքն ալ կը յաղթուէին։

Բայց Ուրարտուի թագաւորներուն մէջ նշանաւոր մէկը ելաւ, անոր անունն էր Արաւիկ։

Արամէ ամուր բերդաքաղաք մը ունէր, Շուգունիա անունով, որ Վանայ ծավուն քովերը կը գտնուէր։ Արամէ մասնաւոր մարդեր զրկեց Ուրարտուի և Նախիի թագաւորներուն և ըստ։

—Եկէք միարանինք, Երբ իրարու մէջ բաժնուած ըլլանք, տկար կ'ըլլանք և Ասորեստանի թագաւորները մեր երկիրները արշաւելով՝ մեզի կը յաղթեն։ Եթէ միանանք՝ զօրաւոր կ'ըլլանք և կրնանք դիմադրել մեր ամէնքի թշնամիին։


Արամէի խելացի խօսքերը լսելով, թագաւորներէն և իշխաններէն շատերը խօսք տուին և միարանեցան։ Միւս իշխաններն ալ միարանելու վրայ էին։

Ասորեստանի թագաւորը կը կոչուէր այն ատե Սաղմանանար, որ երբ լսեց թէ Արամէ իրարու կը միացընէ բոլոր մանր թագաւորները և կը պատրաստուի իր վրայ յարձակելու, ժողվեց իր զինուորները և արշաւե գէպի Նախի և Ուրարտու։



Շուգունիացիները կը դիմադրեն Սաղմանանարի

Մէկ քանի գիւղեր ու քաղաքներ այրեց, բաւական ժողովուրդ ջարդեց և հասաւ Շուգունիայի մօտերը։ Հոն լեռներուն մէջ Արամէի զինուորները յարձակեցան Սաղմանանարի վրայ։ Անոնք ունէին փոքրիկ, կլոր վահաններ, երկար նիզակներ ու սուրեր։



Շուգունիացիները յաղթեցին և Սաղմանասար
ստիպուեցաւ ետ քաշուիլ։ Ան կը կարծէր թէ վահայ

Սարբանատ զնի կը մասուցանի Վահայ ծովու ասուածին
իւ առն կը կանգնի նոյն ծովու մօս

ծովուն աստուածը իրեն դէմ բարկացած է։ Հին ատեն
Ուրարտուցիներուն պէս Ասորեստանսիհներն ալ կը հա-
ւատային թէ բոլոր գետերը ու ծովերը իրենց աստ-
ուածները ունին, ամէն քաղաք, ամէն տեղ և ամէն
դաշտ ու լեռ իրենց աստուածներն ունին։ Ուստի
պէտք է պաշտել զանոնք։ Եթէ մէկը այդ աստուած-
ներէն մէկուն պատիւ և զոհ մատուցած չըկար, կը
բարկանար այդ աստուածը և թշնամութիւն կ'ընէր։

Այս պատճառով Սաղմանասար կարծեց թէ Նախ-
րի երկրին աստուածը իրեն դէմ բարկացած է, ասոր
համար ինքը յաղթուեցաւ։ Եւ որովհետեւ Վանայ ծովը
Նախրին ծով կը կռչուէր, գնաց անոր մօտ։ զոհեր մոր-
թել տուաւ անոր մէջ բնակող աստուածին և իրեն ար-
ձանն ալ փորել տալով կանգնեց անոր քով։

Սաղմանասար թագաւորը գնաց Նինուէ, նոր զօրք
ժողվեց և նորէն յարձակեցաւ Ուրարտուցիներուն
վրայ։ Արամէ նորէն անոր դէմը ելաւ և թոյլ չտուաւ
որ Սաղմանասար իր երկիրը մանէ և բոլոր ովիշն գրաւէ։

Արամէ աշխատեցաւ դարձեալ փոքրիկ թագաւոր-
ները միացնել։ Այս անգամ արդէն յաջողելու վրա եր,
երբ հիւանդացաւ ու մեռաւ։

ԱՄՓՈՓՈԽ

Հայաստանի հին անունն էր Ուրարտու եւ Նախրի։ Այն երկրին
մէջ պատճառով ու քաղաք իր թագաւորն ունէր։ Այդ փոքրիկ
թագաւորները իրարու հետ անմիաբան էին եւ կը կռուէին, այդ
պատճառով՝ տկար։ Արամէ նշանաւոր իշխան մը եղաւ, որ ուզեց
միացնել բոլոր թագաւորները։ Բաւական յաջողեցաւ կռուեցաւ

Սաղմանասարի դէմ ու յաղթեց: Սաղմանասար վանայ ծովի աստուածին զի՞ ընել տուաւ: Արամէ իր նպատակին՝ մէջ յաջողելու վրայ էր, երբ մեռաւ:

Զարգացման բաժին. — Եեշտել հիներու բազմաստուածունեան մասին, տեղական աստուածներու դերը, հին ժողովուրդներու մէջ տանուտէրներու, նահապետներու, նախարարներու եւ իշխաններու դերը եւլն.:

Ժ. Դ. Ս. Ս

ՍՈՐԻՈՒԽԻՍՏԻ ԵՒ ՄԵՆՈՒԱ

Արամէի մեռներէն ետքը նշանաւոր թագաւոր մը եղաւ անոր թոռը Սարդուրիս:

Սարդուրիս չատ խելացի ու քաջ թագաւոր մը եղաւ: Ան իր միծ հօրը նման աշխատեցաւ բոլոր մանր իշխանութիւնները իրարու միացնել, դաշնակից ըսել և միացած ուժով կուռիլ Ասորեստանցիներուն դէմ: Ան բաւական յաջողեցաւ. շրջակայ բոլոր իշխանները հետեւեցան Սարդուրիսի խորհուրդին և ալստամբեցան Ասորեստանի թագաւորին դէմ:

Սալմանասար թագաւորը այս բոլորը տեսնելով չատ մեծ հողի մէջ ինկաւ: Անմիշապէս զօրք ժողվեց և իր քաջ զօրապետներէն մէկին տալով զրկեց Ուրարտու: Զօրապետը եկաւ, պատերազմեցաւ, բայց չարաչար յաղթուեցաւ Սարդուրիսի և անոր հետ միացած իշխաններու զինուորներէն:

Այն ժամանակ Սաղմանասար ստիպուեցաւ դարձ-

եալ զօրք ժողվել և ինքը անձամբ յարձակիլ դաշնակիցներուն վրայ: Բայց Սաղմանասար վախցաւ ուղղակի Սարդուրիսի հետ կոռւելէ. Ուրարտու չզնաց, այլ Սարդուրիսի դաշնակից ուրիշ փոքրիկ թագաւորներու դէմ ելաւ, անոնց երկիրը արշաւեց: Անկէ ետքը, միծ բան մը չիրնալով ընել, դարձաւ Ասորեստան:

Սարդուրիս միւս կողմէն սկսաւ իր երկիրը ընդարձակել: Վան քաղաքը, որ փոքրիկ թագաւորի մը կը պատկանէր, գրաւեց և իրեն մայրաքաղաք ըրաւ: Սարդուրիս կոչուեցաւ «թագաւորներու թագաւոր», ուրվհետեւ իրեն հպատակեցան չատ մը մանր թագաւորներ:


Ուրարտուի թագաւորներուն մէջ առաջին անդամ Սարդուրիսն էր որ իր երկիրներուն մէջ քարէ արձանաներ կանգնել տուաւ և անոնց վրայ բեւեռաձեւ զիրերով իրեն անոնը և գործերը գրեց: Եթէ Սարդուրիսի այդ արձանագրութիւնները չըլլային, մենք բան մը չպիտի գիտնայինք ո՞չ իրեն և ո՞չ Արամէի վրայ:

Սարդուրիս նորոգեց և գեղեցկացուց նաև վան քաղաքը, չինեց նշանաւոր չէնքեր, տաճարներ և այլն, որով չինարար թագաւոր մը եղաւ:

Սարդուրիսի նման քաջ, խելացի և չինարար թագաւորներ եղան անոր որդին և թոռը, Որդին կը կոչուէր իսպուինիս, իսկ թոռը, ու իսպուինիսի որդին էր, կը կոչուէր Մենուաս: Մանաւանդ Մենուասը չատ նշանաւոր եղաւ:

Անոնք երկուքն ալ հետզհետէ իրենց երկիրը ընդարձակեցին: Յարձակեցան Ուրարտուի արևմտեան, հարաւային և տրեելեան կողմերը, զրաւեցին քաղաքներ և գիւղեր: Ասորեստանի թագաւորներն անդամ վախցան և չիմարձակեցան դէմ ելնել: Այնպէս որ Մենուաս մտաւ Ասորեստանցիներուն երկիրը և մէկ մասը գրաւեց: Իր անցած տեղը որ լեռներու մէջէն նեղ անցք մը,

Կիրճ մըն էր և Քելիշինի կիրճ կը կոչուի այժմ, արձան
կանգնեց և անոր վրայ իր քաջութիւնները գրել տուաւ։
Մինչեւ հիմակ այդ արձանազրութիւնը կանգուն կը մնայ:



Մենուասի արձանագրուրիւնը Քելիշինի մէջ

Մենուասի իր գրաւած երկիրներէն բազմաթիւ ժո-
ղովուրդ գերի տարաւ դէպի Ռւրարտու և հոն բնակեցուց։
Դրաւեց ճոխ գանձեր որով հարստացուց և ճոխացուց
Վանք։ Եինեց ջրմուղներ, որոնց միջոցաւ հեռու տեղերէ
առատ ջուր բերաւ Վան։ Անոր բոլոր գործերը նշանաւոր
եղան, մինչեւ հիմակ հիմնալի են անոր շինած չէնքերը,
որ կը գտնուին Վան, փորուած ժայռերուն մէջ։

Եինեց նաև իր անունով քաղաք մը և կոչեց զայն
Մենուասիեր։ Հիմակ կը կոչուի Մանազիեր, որ շին-
ուած է Եփրատ գետին քովերը։ Այս քաղաքը մայրա-
քաղաքն էր Հայոց Մանաւազեան նախարարութեան։

Ա. Մ Փ Ռ Փ Ո Ւ Մ

Արամէէն ետրը նշանաւոր եղաւ անոր թռու Սարդուրիս, որ
իր մեծ հօրը նման աշխատեցաւ միացնել մոնր իշխանները։ Սաղ-
մանասար իր զօրապետը զրկեց ան որ դէմ, բայց զօրապետը յաղ-
թուեցաւ։ Սաղմանասար ինք դէմ ելաւ, բայց վախցաւ Սարդու-
րիսի հետ կուռելէ։ Սարդուրիս Վանը զրաւեց եւ մայրաքաղաք
լրաւ։ Առաջին անգամ բեւեռածեւ արծանազրութիւն կանգնեց։
Իրմէ ետքը նշանաւոր եղան Խափուինս մանաւանդ Մենուաս։ Ա-
նոնք ընդարձակեցին իրենց երկիրը եւ արձանազրութիւններ կանգ-
նեցին։ Մենուաս չինեց նաեւ Մանազիեր բազարը։


Զարգացման բաժին։ — Աշակերտներուն ուշազրութիւնը հը-
րաւիրել Շամիրամի վերագրուած շինութիւններուն վրայ, որոնք
Ռւրարտուի թագաւորներուն մեծազրութիւններն են։ Դիտել
տալ բերդի մը արժէքը հին ժամանակ, բերդի շինութեան ժեւը,
դիրքը եւայլն։

Ժ. Ե. Դ. Ա. Ս

ՈՒՐԱՐՑՈՒԻ ՎԵՐՋԻՆ ԹԱԳԱՌԱՅՐՆԵՐԸ

Մենուասի յաջորդեց իր որդին Արզիշիս, որ երբ
գահը բարձրացաւ իր հօրը գրաւած երկիրները զրեթէ
բոլորն ալ ապստամբեցան։

Արգիշտիս ստիպուեցաւ մի առ մի խոնարհեցնել
զանոնք։ Ընդարձակ արձանագրութիւն մը թողած է,



Արգիշտիսի արձանագրութիւնը

որ կը կոչուի Տարեգրութիւնի Արգիշտիսի: Այդ արձանագրութիւնը կը կոչուի նաև Մհերի դուռ:

Իր ապստամբները խոնարհեցնելէն ետք, կ'արշաւէ

նաև իր թշնամիներուն երկիրները և շատ տեղեր կը գրաւէ: Ինք կը պատմէ թէ Ուրիուս անուն քաղաքէն գերի տարած է 19,000 մանուկ, 10,000 մարդ, 23,000 կին, 1,600 ձի, 35,000 եղ, 10,000 ոչխար ևայն, իր երկիրը կը ճոխացնէ, կը կանգնէ մեհեաններ արձանագրութիւններ, կը շինէ կամուրջներ, ջրմուղներ ևն. : Արգիշտիս Ուրարտուի ամենէն նշանաւոր թագաւորը կ'ըլլայ:

Արգիշտիսին ետք նշանաւոր թագաւորներ եղան Սարդուրիս Բ., Ուուսաս Ա., Ուուսաս Բ. ևայն:

Սարդուրիս Բ. իր մեծ հայրերուն նման միացաւ փոքր թագաւորներուն հետ և ուղեց կռուիլ: Ուրարտուցիները լեռնաբնակ մարդեր էին. անոնք լաւ գիտէին լեռներուն վրայ կռուիլ: Խոկ Ասորեստանցիները դաշտի մէջ կը բնակէին. լաւ գիտէին դաշտի վրայ կռուիլ, լեռներու վրայ չէին կրնար պատերազմիլ. Ուրարտուցիներն ալ դաշտերուն վրայ չէին կրնար: Այս պատճառով Սարդուրիս Բ. երբ Ուրարտուէն դուրս բաց դաշտի վրայ կռուեցաւ Ասորեստանցիներուն հետ, յաղթուեցաւ: Ասորեստանի թագաւորն էր Թագարթիայասար:

Ուուսաս Ա. երբ գահը ելաւ ուղեց իր հօրը յաղթուելուն վրէժը լուծել: Զօրքեր ժողովեց, դաշնակից եղաւ ուրիշ թագաւորներու հետ: Անոր բարեկամ թագաւորներէն մէկն էր Ուրգանա, որուն մէկ խոշոր կնիւ անուած է:

Ասորեստանի թագաւորը՝ Սարգոն, յարձակեցաւ Ուուսասի դաշնակիցներուն վրայ: Ան չի համարձակեցաւ ուղղակի կռուիլ Ուուսասի հետ: Արշաւեց Ուրզանայի երկիրը:

Որպէսզի Ուրգանայի դինուորները յաղթեն, Ուու-



Ուրգանալի կնիքը

սաս իր ևաղի աստուածը զրկեց զինուորներուն քով, որ զոհ մասուցանեն և ան պաշտպանէ զիրենք։ Բայց պատերազմի միջոցին Սարգսն գերի բռնեց ևաղի աստուածը։

Ուռսաս երբ լսեց որ իր աստուածը գերի ինկերէ, սոսկալի վշտացաւ և իր սուրալ ինքզինքը սպանանեց։ Հին ատեն կը հաւատալին թէ մէկուն աստուածը երբ գերի ինար, աստուածին տէրն ալ գերի ինկտէ կ'ըլլար։


Ուռսաս Ա. Էն ետքը Ուրարտուի թաղաւորները մեծ գործեր մը կատարած չեն։ Ուռսաս Բ. Ի. օրով Սենեքերիմի երկու հայրասպան որդիները փախան Ուրարտու։

Անկէ ետքը Ուրարտուի թագաւորներն ու ժողովուրդը հետզհետէ տկարացան, մինչեւ որ Հայերը եկան Հայաստան և իրենց հնագանդեցուցին Ուրարտուի բնաւկիները։

Ա. Մ. Փ Ռ Փ Ա Խ Մ

Մենուասի յաջորդեց Արգիւսիս։ Անոր մէկ արծանագրութիւնը կը կոչուի Տարեգրութիւնը Արգիւսիսի։ Բազմաթիւ գերիներ եւ աւար-

կը բերէ Վան։ Կ'ըլլայ շինարար թագաւոր մը։ Անոր կը յաջորդէ Սարդուրիս Բ., որ կը յաղթուի թագամթփաղասարէն։ Ուռսաս Ա. կը դաշնակցի նաեւ Ուրգանայի հետ։ Սարգոն կը յարձակի եւ



Մանազկերտի բերդը Ուռսաս Բ. Ի. արձանագրութեամբ

գերի կը տանի թալի աստուածը։ Ուռսաս, իր աստուածին զերի տարուիլը լսելով, անծնասպան կ'ըլլայ։ Ուռսասէն ետք Ուրարտու կը տկարանայ, մինչեւ որ Հայերը կուգան ու կը գրաւեն զայն։

Զարգացման բաժին.— Մանրամասն կերպով ծանօթացնել պատմութեան տեսակներու մասին, օրինակ՝ տիեզերական պատմութիւն, ազգային պատմութիւն, տարեգրութիւն, կենսագրութիւն եւն։

Ժ. Դ. Ա. Ս

ՈՒՐԱՐՏՈՒՑԻՒՆԵՐՈՒ ԿՐՈՆԸ ԵՒ ԲԱՐԲԵՐԸ

Ուրարտուցիները հեթանոս էին և կը պաշտէին բազմաթիւ աստուածներ։ Անոնք կը հաւատային թէ ամէն գիւղ և ամէն քաղաք իր աստուածն ունի, ամէն լեռ, ամէն աղբիւր, գետ, դաշտ իրենց աստուածներն ունին։ Եւ անոնք այդ բոլոր աստուածները կը պաշտէին։


Կը շինէին խոչոր մեհեաններ։ Մեհեանին առջև խոչոր սիւներով գաւիթներ կային. սիւներուն և պատերուն վրայ դրուած էին կլոր, զարդարուն վահաններ, փորուած էին բեւեռածե գիրեր, աստուածներու արձաններ և այլն։

Տեսէք պատկերին մէջ, Ուրարտուցիներուն մեհեանին մէջ գործածուած սպասները կ'երեւին։ Երկու հոգիներ ձեռքերնին բռնած են մէջմէկ բուրվառ, որով խունկ կը ծխէին։ Այդ երկուքին մէջտեղ դրուած է չորս ոտքով աշտանակ մը։ Մարդ մըն ալ ուսը առած է մեծ աման մը, որ է աւազանը։ Այդ աւազանին մէջ Ուրարտուցիները, իրենց աստուածներուն զոհեր մատուցանելէն առաջ և ետքը, կը լուացուէին։

Ուրարտուցիները թէւ շատ աստուածներ ունէին, բայց այդ աստուածներուն ամէնքն ալ հաւասար չէին։ Կային մեծ ու փոքր աստուածներ։


Մեծ աստուածները երեք հատ էին. առաջինն էր Խաղի, որ լուսինի աստուածն էր, երկրորդը՝ Արդինի, արեւի աստուածը, իսկ երրորդը՝ Տիկիշաս, ողի և կայծակի աստուածը։

Անոնք կը պաշտէին նաև աստուածուհի մը, որուն անունն էր Շամիրամ։ Շամիրամ դիցուհին զատ կը



Ուրարտական մեհեանին սպասները


պաշտէին ուրիշ կարեւոր աստուած մը, որուն անունն էր Մարդուկ։ Այդ աստուածը իրեն հետ ունէր նաև չորս փոքր աստուածներ, որոնք կէս մէջքէն չուն էին, կէսէն՝ մարդ։ Ուրարտուցիները կը հաւատային թէ այդ



Շամիրամ դիցուհին

չորս աստուածները կ'իջնեն պատերազմի դաշտին վրայ, և ով որ քաջ է, անոր վէրքերը կը լիզեն ու կը կեն՝ դանացնեն։ Այդ չորս աստուածները կը կոչուէին Առշեկներ։

Իրենց աստուածներուն զոհ կը մատուցանէին ոչ խար, եղ, ձի, ուզտ եւայլն։ Ուղար շատ հեռու տեղեւ-



Երկսապատ ուղսեր

թէ կը բերէին։ Տեսակ մը ուղար կար որ երկու կուզ, սապատ ունէր կոնակին վրայ, այդ տեսուկ ուղար ալ կը զոհէին։

Ուրարտուցիները շատ բարեպաշտ քաջ մարդեր էին։ Լեռնցիի ուն չարքաշ էին։ Կ'ուղէին միշտ աղատ ըլլալ և ուրիշին չպատակիլ։ ասոր համար միշտ կը կոուէին թշնամիներուն դէմ։

Բայց որովհետեւ Հայաստան եկող Հայերը աւելի խելացի էին և կրթուած, անոր համար Ուրարտուցիները հպատակեցան անոնց։ Հայերուն հետ խառնուեցան, ինամի եղան, անոնց լեզուն սորվեցան և կամաց կամաց Հայ եղան։

ԱՄՓՈՓՈԽՄ

Ուրարտուցիները կը հաւատային թէ ամէն գիւղ, բաղար, ծով, զետ, զաշտ իր աստուածն ունի։ Անոնք կը շինէին խոշոր մեհեաններ, սինազարդ Մեհեանին մէջ կը զործածէին բուրգառներ, աւազաններ եւայլն։ Կային մեծ եւ փորք աստուածներ։ Մեծ աստուածներն էին Խալդի, Արդինի, Տէփեսա։ Կը պաշտէին նաեւ Շամիրամ զիցուհին, ինչպէս նաեւ Մարդուկ աստուածը իր չորս փորք աստուածներուն հետ։ Այդ չորս աստուածները կէս չուն կէս մարդ էին, կը կոչուէին Առլեզ որոնք մեռելները կը կենդանացնէին։ Կը զոհէին ոչիսար, ծի եզ, ուզտ եւայլն։ Ուրարտուցիները բարեպաշտ, բաշ, ազատասէր մարդիր էին։

Զարգացման բաժին. — Ծանօթութիւններ տալ ուղտերու մասին։ Մատնանշել Մարդուկի եւ Առլեզներու ու Արայի աւանդավէպին ունեցած նմանութիւնները։

ԺԷ. Գ. Ս. Ս

ՀԻՆ ՀԱՅԵՐԸ, ԿՐԹՆԸ ԵՒ ԲԱՐՔԵՐԸ


Հայերը Հայաստան եկան դուրսէն։ Աւանդական պատմութեան համեմատ հարաւէն եկան, իսկ ճշմարիտ պատմութիւնը կ'ըսէ թէ արեւմուտքէն եկան։

Հայերը ցեղակից են Թրանսացիներուն, Գերմանացիներուն, Անգլիացիներուն, Ռուսերուն, Յոյներուն եւայլն։ Այդ բոլոր ժողովուրդները առաջ, հին ժամանակ մէկ տեղ մք կը բնակէին։ յետոյ իրարմէ բաժնուեցան և գաղին հաստատուեցան իրենց երկիրները։

Մեր պատերն ալ անոնցմէ բաժնուելով անցան Տարտանէին (Չանավ յալի) նեղուցէն, մտան Փոքր Ա-

Թիա : Երկար ժամանակ մնացին հոն : Յետոյ բնակեցան Սեբաստիոյ մշտերը (Սվաղի նահանգ), և վերջապէս մտան Ուրարտու, որուն անունը փոխեցին և դրին Հայաստան :

Երկար տարիներ անցան . Հայերը տուն տեղ չինեցին Հայաստանի մէջ, կանգնեցին դիւդիր ու քաղաք-




Գետափոր տուն Հայաստանի մէջ

Ներ, մեհեաններ ու պարտներ : Ունեցան բազմաթիւ նահապեաններ ու իշխաններ, որոնք կառավարեցին երկիրը :

Հին Հայերը լոդանըապէս իրենց տունները կը փոքին ժայռերու և հողին մէջ : Խոշոր որաններ կը շինէին և սենեակներ, ուր կը բնակէին : Խոշոր ջրհորի բերանի պէս դուռներէ կը մտնէին ներս : Երկու դուռ կ'ունենային . մէկը՝ մարդոց համար, իսկ միւսը՝ կենդանինե-

յու համար : Կենդանիներն ալ կը բնակէին հողին մէջ փորուած այդպիսի սենեակներու մէջ :

Դիտէին գարեջուր շինել ու խմել : Անոնց խմած գարեջուրը շատ բարկ (սերդ) էր : Խոշոր գուրերու մէջ լեցուցած կ'ըլլային, ուրկէ երկար և մէջը ծակ եղէդ-ներով գարեջուրը կը ծծէին ու կը խմէին :



Հայկական օնախի բուխերիկ

Անոնք կը պաշտէին երկինքն ու երկիրը, կը յարգէին նաև կենդանիներն ու ծառերը, որովհեան, կը տեսնէին որ ծառերը ինքնիրեն կ'ածին ու կը մեծնան . կը կարծէին թէ անոնց մէջ հոգի կայ, ինչպէս որ մարդուն մէջ հում կենալով կը մեծնայ : Ամենէն աւելի կը պաշտէին սօսի (դավագ) ծառը և ինքզինքնին կը նուի-

ըէին անոնց, որովհետեւ կը կարծէին թէ անոր տերեւ-
ներուն խշրտոցները իրենց մեռնող հայրերուն հոգինե-
րուն ձայնն է : Անոր տերեւներուն ասափիւնէն գուշա-
կութիւններ կ'ընէին :

Հայերը կը պաշտէին նաև Վահագն աստուածը, որ
քաջութիւն և իմաստութիւն կուտար զինքը պաշտո-
ղին : Անիկա արշալոյսին ծագող արեւին աստուածն էր :

Անոնք կը յարգէին նաև իրենց օճախը և իրենց
հայրերուն հոգիները : Երբ սեղան նստէին, սեղանին
վրայ տեղ մը պարապ կը ծգէին, և այդ պարապ տեղը
կը դնէին պնակով կերտկուր, հաց : Ան մեռնող հայրե-
րուն բաժինն էր : Հայերը կը հաւատային թէ մեռնող
հայրերու հոգիները կուգան և կերտակուրին հիւթը կը
ձաշակեն, բայց նիւթը չեն ձաշակեր :


Հին Հայերը երբոր հաստատուեցան Հայաստան,
սկսան երկրագործութիւն ընել և անստուններ պահել:
Ունէին ոչխարներ, եղներ, կովեր, մանաւանդ ձիեր:
Կը հանէին գինի, իւղ, թուղ, նուռ, սերկեւիլ, ձիթա-
պտուղ. անտառներէն կը հանէին տախտակ, փայտ
եւայլն :

Այս բոլոր արդիւնքները մաս մը իրենց պէտքե-
րուն համար կը գործածէին և մաս մըն ալ կը տանէին
օտար երկիրներ և կը ծախէին, վաճառականութիւն
կ'ընէին : Որպէս զի ձամբան գողերուն չհանդիպին և
չկողոպտուին, կարաւաններով կը ճամբորգէին :

Բայց ամէնէն աւելի գետերուն վրայէն կը ճամ-
բորգէին լաստերով : Լաստերը կը շինէին ուռենիներէ
(սկօխւտ), կը հիւսէին և վրան ալ կաշիով կը պատէին :
Գետին հոսանքին կը ծգէին և ոտքի վրայ կեցած մար-
դեր երկար փայտերով կը զեկավարէին նաւը :

Երբեմն ալ տիկիերով կը շինէին . արկերը օդով կը


լեցնէին, իրարու կը կապէին, վրան թւթեւ տախտակ
կը դնէին և անոնց վրայ իրենց բեռները կը ընողնէին :



Եփրատ գետը՝ Եւ լաստը

Իւրաքանչիւր նաւի մէջ կը գանուէր էշ մը, մեծ
նաւերաւն մէջ՝ ա՛լ աւելի : Անոնք կ'երթային Բաբելոն,

հօն կը ծախէին իրենց վաճառքը, նաւին փայտերը և
յարդն ու կը վաճառէին և կաշիները էշերուն կռնակը
բեռցնելով, ցամաքով եւ կը դառնային: Դեսով չէին



Տիկով լաս կամ ֆելիք

կրնար երթաւ, որովհետեւ հոսանքը թոյլ չէր տար: Երբ
Հայաստան դառնային, նորին նաւեր կը չինէին և
դարձեալ կ'երթային Բաբելոն:

ԱՄՓՈՓՈՒՅ

Հայերը ցեղակից էին Եւրոպայի զրիթէ բոլոր ժողովուրդնե-
րուն, որոնք առաջ մէկտեղ կ'ապրէին, վերջը բաժնուեցան: Հա-
յերն ալ բաժնուելով անցան Տարտանէլին Փոքր Ասիա եւ Եկան
Հայաստան: Հոն շինեցին զիւղեր, բաղարներ, շէնքեր Եւայլն:
Երենց տուները փորուած կ'ըլլային ճայռերու կամ հողին մէջ:
Կը գործածէին զարեցուք: Կը պաշտէին երկինքն ու երկիրը, ծա-
ռերը, սախն, Վահագնը, օճախը: Կը յարգէին հայրերուն հոգի-
ները: Հայերը կ'զրադէին երկրագործութեամբ: Վաճառականու-
թին ալ կ'ընէին կարաւաններով եւ լաստերով՝ զետի վրայէն:

Զարգացման բամին. — Բաւական մանրամասն ծանօթու-
թիւններ տալ Արիական, Սեմական եւ ուրիշ ցեղերու մասին:

Ճ. Ք. Գ. Ա. Ս

ՀԱՅԵՐԸ ՄԱԿԵԴՈՆԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹԵԱՆ ՏԱԿ

Երբ որ Վահէ մեռաւ, Հայաստանը ինկաւ Մեծն
Աղեքսանդրի իշխանութեան տակ:

Աղեքսանդր Մակեդոնացին երբ տէր եղաւ Հա-
յաստանի, անոր վրայ կուսակալ դրաւ Մինրամ անու-
նով օտարական իշխան մը:

Մեծն Աղեքսանդր դեռ երիտասարդ էր, երբ մե-
ռաւ: Անոր զօրապետները սկսան անոր գրաւած բոլոր
երկիրները իրենց մէջ բաժնել և կառավարել: Հինգ
մեծ զօրապետներ էին, որ իրենց մէջ բաժնեցին երկիր-
ները: Անոնցմէ մէկն էր Ակեւելու, որ կամաց կա-
մաց իր ձեռքին տակ առաւ Ասիական երկիրները:
Հայաստանը երկու մասի բաժնուեցաւ այն ատեն:
Մեծ Հայք և Փոքր Հայք: Այդ երկու մասերուն վրայ
իրարու ետեւէ ոկտան իշխուլ օտար եւ հայ իշխաններ
կամ կուսակալներ:


Հայերը մանաւանդ Մեծ Հայքի իշխաններ, կու-
զէին անկախ ըլլալ, ատոր համար մէկ քանի անդամ
ապստամբեցան: Բաւական յաջողեցան: Որովհետեւ գրե-
թէ կէս մը անկախ եղան:

Այդ նշանաւոր իշխաններէն մէկն էր Եղուարդ կամ
Աղուարդ: Ան շատ քաջ մարդ էր, հայրենասէր և ա-
զատասէր: Ան ժողվեց հայ կտրիճներ, զէնք տուաւ
անոնց, քաջալերեց և ապստամբեցաւ:

Բայց Սելեւկոս պատերազմեցաւ Աղուարդի դէմ:
Հայերը շատ քիչ էին և գրեթէ շատ զէնք չունէին,
ատոր համար կէս մը յաղթուեցան: Ուստի հպատա-
կեցան Սելեւկեաններուն, բայց կէս մը անկախ եղան:

Մեծ Հայքի նշանաւոր իշխաններէն մէկն էր նաև Արտաշէս: Անոր օրով Փոքր Հայքի վրայ իշխան էր Զարեհ:

Արտաշէս քաջ իշխան մը եղաւ: Ուզեց Հայաստանի երկու մասերն ալ միացնել: Անիկա նախ աշխա-



Անիկա

տեցաւ սիրելի բլլալ Հայերուն՝ ամէն կերպով: Կանոնաւորեց իր բանակը և ապստամբելով ինքզինքը անկախ հռչակեց: Թագաւոր եղաւ ու իր անունով դրամ կտրել տուաւ:

Անոր ժամանակ կարքեղոնացի հռչակաւոր զօրապետ մը՝ Անիկա: Հռոմայեցիներէն յաղթուելով փախաւ և եկաւ Հայաստան, Արտաշէսին մօտ:

Արտաշէս սիրով լընդունեց զայն և իր պալատին մէջ պահեց: Ան իրեն հիւր եկող այդպիսի նշանաւոր մէկը մարդու չէր յանձներ: Աննիբալի հետ ինչոյքներ կը սարքէր, որսի կ'երթար:

Անգամ մը որսի ժամանակ Աննիբալ գեղեցիկ տեղ մը տեսաւ. Երասխ դեմք և Մեծանօր գետակը իրար խառնուած տեղը: Խորհուրդ տուաւ անոր որ այդ տեղ քաղաք մը շինէ. երեք կողմը ջուր և մէկ կողմ ալ ապառաժ բլուրներ ըլլալով անառիկ քաղաք մը կրնար ըլլալ:

Այդպէս ալ եղաւ: Արտաշէս շինեց ամուր պարիսպներով ու բերդերով քաղաք մը, որուն անունը Պրաւ Արտաշաս, այսինքն Արտաշէսի խալաֆ:


Արտաշէս երկար ժամանակ իշխանութիւն վարելէն և երկիրը խաղաղ կերպով կառավարելէն ետքը, երբ կը պատրաստուէր Փոքր Հայքն ալ իրեն իշխանութեան կցել, մեռաւ:

Ա. Մ Փ Ռ Փ Ո Ւ Խ Մ

Ղահէի մահէն ետք Մեծն Աղեքսանդր Հայոց վրայ կուսակալ զրաւ Մինան անուն օտար մէկը: Աղեքսանդր մեռնելէն ետք իր երկիրը հինգ մասի բաժնուեցաւ, հինգ զօրապետներու միջեւ, որնցմէ մէկն էր Անեւկոս: Ան իր իշխանութեան տակ առաւ Հայաստանը: Հայ իշխան մը եդուադ կամ Ակուարդ, ապստամբեցաւ եւ կէս անկախ եղաւ: Հայաստան երկու մասի բաժնուեցաւ, Մեծ Հայք, Փոքր Հայք: Մեծ Հայքի իշխանն էր Արտաշէս, Փոքր Հայքին՝ Զարեհ: Արտաշէս ապստամբեցաւ եւ եղաւ թագաւոր: Անիկալի խորհրդով, շինեց Արտաշաս քաղաքը երասխի եւ Մեծամօրի միացած աեղը:

Զարգացման բաժին. — Բաւական մանրամասն ծանօթութիւններ տալ Աղեքսանդրի յաջորդներու կամ զօրապետներու մասին. Անտիգոնոս, Պտղոմէոս, Լիւսիմարոս, Սելեսկոս եւ Կամասին. Անտիգոնոս, Պտղոմէոս, Լիւսիմարոս, Սելեսկոս եւ Կամասին. Աննիբալի, Կարբեդոնի եւ փիւնիկեան պատերազմներուն ալ ծանօթացնել աշակերտները.

ԱՐՇԱԿՈՒՆԵԱՅ ՀԱՐՍՏՈՒԹԻՒՆ
(ԱՐՄԵԴԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ)



Ժ. Թ. Դ. Ա. Ա

ՊԱՐԹԵՒՆԵԲԼ ԵՒ ՎԱՐԵՐԱԿ

Հայաստանի արեւելեան կողմը, կասպից ծովին հարաւային և արեւելեան եզերքներուն վրայ ժողովուրդ մը կը բնակէր։ Այդ ժողովուրդը կը կոչուէր Պարքեւ։


Կ'ըսեն թէ Պարթեւները նախապէս այդ երկիրը չէին բնակեր։ անոնք կ'ապրէին Միջին Ասիայի մէջ։ երբ բարբարոս ժողովուրդներ յարձակեցան իրենց վրայ, թողուցին իրենց հայրենիքը և եկան բնակեցան կասպից ծովին հարաւային կողմերը։ իրենց երկիրէն աքսորուած ըլլալնուն համար ալ կոչուեցան Պարքեւներ, որովհետեւ Պարքեւ՝ ախորակալ կը նշանակէ։

Պարթեւները թափառական ժողովուրդ մըն էին։ Անոնք քաջ ձի հեծնել գիտէին և կրնային աղեղ նետել թէ առջեւէն և թէ կոնակի կողմէն։ Երբոր պատերազմէին ու յաղթուէին ետ կը դառնային, բայց ետ դարձած ատենն ալ չէին դադրեր նետեր նետելէ։

Անոնք աննշան ազդ մըն էին առաջ, հպատակեցան Մարաց, Պարսից և Մեծն Աղեքսանդրի։ Սելեւկոսի ժամանակ անոր իշխանութեան տակ ինկան։ Բայց ձանձրանալով Սելեւկեան իշխանութենէն ուզեցին ապստամբիլ և ազատ ըլլալ։

Անոնց մէջ նշանաւոր իշխան մը կար. այդ իշխանին անունն էր Արշակ։

Արշակ խելացի և քաջ ըլլալով, իրեն ազգը ոտք հանեց, զինուորները կրթեց, կանոնաւորեց և ապրատամբեցաւ։ Եղաւ Պարթեւներուն առաջին թագաւորը Պատերազմեցաւ դրացի ազգերուն և Սելեւկեաններուն դէմ և յաղթեց անոնց։ Հիմը դրաւ Պարթեւական իշխանութեան։




Արշակ թագաւոր կը պատկե իր եղբայրը Վաղարշակը

Պարթեւները կրօնքով և լրգուով նման էին թէ Պարսիկներուն և թէ Հայերուն։

Արտաշէսի մահէն ետքը Հայերը շատ խառնակ վիճակի մէջ էին։ Արտաշէսի յաջորդները քաջ, խելացի չէին, այլ՝ թոյլ մարգեր։ Այդ պատճառով Հայերը շատ դժգոհ մնալով և տեսնելով Պարթեւներուն զօրութիւնը, փափաքեցան որ Պարթեւ թագաւոր մը ունենան իրենց վրայ։

Պարինեներուն Արշակ թագաւորը ունէր եղբայր մը, որոն անոնն էր Վաղարշակ: Արշակ իր եղբայրը փառաւոր կերպով Հայոց թագաւոր պատակեց և զօրք տալով զրկեց Հայաստան:


Անոր ըստ «Սահմանք քաջաց զէնն իւրեանց», Քաջերուն սահմանը իրենց զինքն է, այսինքն քաջերը



Հայերը Մորփիւղիկեսը կ'սպանեն

որքան զօրաւոր ըլլան, իրենց զէնքով շատ երկիրներ կը գրաւեն և իրենց երկրին սահմանները կ'ընդարձակեն; Վաղարշակ Հայաստան գալով սիրով ընդունուեցաւ: Մեծ Հայքը, Կասպից ծովէն մինչեւ Սեւ ծով, մինչեւ Կովկասի լեռները, իրեն հնազանդեցան: Բայց Փոքր Ասիայի բնակիչները, որոնք Աելեւկեան իշխանութեան տակ կը գտնուէին, չուզեցին խոնարհիլ Վա-

զարշակի առջեւ: Մորփիւղիկիս անուն կապադովկիացի իշխանին առաջնորդութեամբ պատերազմեցան Վաղարշակի դէմ: Բայց պարթեւ և հայ քաջերը յարձակեցաւ սպաննեցին Մորփիւղիկէսը և անոր զօրքն ալ ցըրուեցին ու ջարդեցին:



Մար Աբաս Վաղարշակին առջեւ

Այսուհետեւ Վաղարշակ աշխատեցաւ Հայաստանը քարեկարգել: Ուզեց հասկնալ թէ իրմէն առաջ որո՞նք իշխած են Հայաստանի վրայ: Հայոց պատմութիւնը կորառած էր:

Ուստի Մար Աբաս անուն գիտնական մարդ մը, իր եղբօրը Արշակին զրկեց, նամակ մըն ալ տուաւ և ինդրեց որ ժոյլ տար Նինուէի մատենադարանին մէջ Հայոց պատմութիւնը գտնելու:

Մար Արաս գնաց նինուէ : Արշակ թագաւորը սիրով ընդունեց և հրամայեց որ անոր առջեւ մատենադարանները բանան : Մար Արաս շատ գնտուեց և վերջապէս գտաւ Հայոց աւանդական պատմութիւնը, Հայուի, Արայի և այլն պատմութիւնը, և բերաւ Վաղարշակին, որ ուրախացաւ և հրամայեց Հայոց պատմութիւնը քարերու վրայ փորագրել, որ ամէն մարդտեսնայ ու կարդայ :

Վաղարշակ ուրիշ բարեկարգութիւններ ալ ըրաւ : Սն դրաւ աղուոր օրէնքներ ու կարգեր : Իր աթոռը փոխադրեց Մծբին : Հայաստանի սահմանազլուխներուն վրայ չորս իշխաններ՝ բդէշիներ կարգեց : Բագրատունի Բագրարատ իշխանին տուաւ Արշակունի թագաւորները պսակելու իշխանութիւնը և կոչեց «Թագադիր - Ասպետ» : Արծրունի նախարարներուն տուաւ թագաւորին առջեւէն արծուէնշան դրօններ տանելու իրաւունքը, Վարաժնունի նախարարները կարգեց որսերու վերակացու : Իր պալատի կիներուն պահպանութիւնը յանձնեց ներքինիներու, որնց գլուխը կը կոչուէր Հայր Մարդակե, որ Հայկագանց սերունդէն էր : Քրմութիւնն ալ յանձնեց Վահագնի սերունդին, որոնք կոչուած էին Վահունիի:

Կանոնաւորեց նաև զինուորները և ուրիշ լաւ օրէնքներ դրաւ գողերու, յափշտակողներու և մարդապահներու դէմ :

Վաղարշակ իր պալատին մէջ ունէր երկու յուշարար պաշտօնեայ, մէկը ամէն օր պիտի յիշեցնէր բարի գործերը, իսկ միւսը՝ պատիմները :

Որոշեց նաև որ թագաւորին անդրանիկ տղան գահաժառանդ ըլլայ և թագաւորին քով մնայ, իսկ

միւս տղաքները երթան ուրիշ տեղ բնակին : Ուստի Արշակ անդրանիկ որդին և Արտաշէս թոռը իր մօտ պահեց, իսկ միւսները Հաշտեամի գաւառը դրկեց, անոնց ստացուածք ու հող տալով : Հաշտեամնք կը գըտնուէր Վանայ ծովին արեւմտեան կողմը, Զորրորդ Հայքի մէջ :

Այսպիսի բարեկարգութիւններ ընկլէ ետք, Վաղարշակ մեռաւ Մծբինի մէջ :

Ա.Մ.Փ.Օ.Փ.ՈՒ.Մ

Պարթեւները կը բնակէին Կասպից ծովուն հարաւ արեւելեան եզերը, հպատակած էին Մարթերուն, Պարսիկներուն, Աղեքսանդրի եւ Սելեւկեաններուն: Լաւ նետածիգ էին: Արշակի առաջնորդութեամբ ապստամբեցան Սելեւկեաններէն: Արշակ իր եղբայրը Վաղարշակը Հայոց վրայ թագաւոր պսակեց: Հայերը ընդունեցին, որովհետեւ իրենց թագաւորները թոյլ էին եւ Պարթեւներն ալ իրենց կրօներովն ու լեզուվը կը նմանէին Հայերուն: Փոքր Ասիացիր, Մորփիւղիկէսի առաջնորդութեամբը, չի հնազանդեցան Վաղարշակի. բայց յաղթուեցան եւ Մորփիւղիկէս սպաննուեցաւ: Վաղարշակ բարեկարգութիւններ ըրաւ. Հայոց պատմութիւնը գտաւ, նախարարները պատուեց, օրէնքներ դրաւ, յաշորդութեան համար կանոններ դրաւ:

Զարգացման բաժին . — Պարթեւ Արշակունիներու մասին կարելի է ըիշ մը աւելի լայն ժանօթութիւններ տալ:

Ա. ԳԱՍ

ԱՐԵԱԿ Ա. ԵՒ ԱՐՏԱՇԵՍ ԱՇԽԱՐՀԱԿԱԼ

Վաղարշակ մեռնելէն եաք անոր յաջորդեց իր որդին Արշակ Ա., որ տասներեք տարի խաղաղ կերպով



Արշակ սիւնը կը ծակէ նիզակով

Կառավարեց իր երկիրը, Ան իր հօրը սկսած բարեկարգութիւնները շարունակեց :

Իրեն օրով Հայաստանի հիւսիսային արեւմտեան կողմը Պոնտացիները ապստամբած ըլլալով, գէնքով դիմեց անոնց վրայ և հնազանդեցուց :

Իր յաղթութեան իրբե յիշատակ Աև ծովին եղերքը կանգնեց կոթող մը, որսւն մէջ խրեց իր բոլորատէդ (կոր երկարով) և զեռուններու (օձ) արիւնով մխուած նիզակը : Պոնտացիները երկար ժամանակ պաշտեցին այս արձանը, իրբեւ աստուածներու գործ Բայց կ'ըսեն թէ . երբ Արտաշէս կրկին անոնց վրայ պատերազմի գնաց, բարկանալով ծովը ձգեցին :

Արշակ Ա.ի յաջորդեց անոր սրգին Արտաշէս, որ հպարտ ու պատերազմասէր մարդ մըն էր : Այդ պատճառով հօրը գահը բարձրանալուն պէս սկսաւ աշխարհներ գրաւելու վրայ մտածել :

Ան սկսաւ իր բոլոր ու շաղրութիւնը դարձնել զինուորութեան վրայ, սկսաւ բարեկարգել իր բանակը, շատցնել իր զինուորները :

Անոր զինուորներուն շատութեան վրայ գաղափար մը տալու համար հիները կ'ըսէին թէ, եթէ իւրաքանչիւր զինուոր մէյմէկ քար ձգէր տեղ մը, անազին բլուր մը կը ձեւանար, և եթէ մէյմէկ նետ արձակէր, արեւին լոյսը կը խաւարէր : Անոնց թիւը համրելով կարելի չէր գտնել, անոր համար խումբ խումբ չափելով կը համրէին :

Արտաշէս այսպիսի մեծ սկատրաստութիւններ աեսնելէն ետքը, նախ ուղեց Պարթեւներու թագաւորին ձեռքէն առնել առաջնութեան իրաւունքը : Մինչեւ Արտաշէս՝ Պարթեւներու թագաւորները առաջին կ'ըլլային իսկ Հայոց թագաւորները՝ երկրորդ՝ Արտաշէս յարձակեցաւ Պարթեւներու Արշական անուն թագաւորին վրայ և յաղթելով անոր, եղաւ առաջին, «Թագաւորներու թագաւոր», իսկ Արշականը իր երկրորդը ըրաւ: Իր անունով դրամ կոխել տուաւ:

Արեւելեան կողմը հոգ չունենալով անցաւ դէպի

արեւմուտք: Պոնտացիներու Միհրդատ թագաւորին հետ
բարեկամացաւ, ու անոր հետ սկսաւ յարձակիլ արեւ-
մուտքի երկիրներուն վրայ: Գնաց մինչեւ Մարմարա
ծով, Տարտանէլէն (Չանաֆ բաղէ) անցաւ, գրաւեց ամ-
բողջ Թրակիան (Եսիրնէի գաւառը) և մտաւ Յոյներուն
երկիրը:

Հոռվմայեցիները այդ ժամանակ ուրիշ մեծ պատե-
րազմի մը բռնուած ըլլալով չկրցան Արտաշէսի դէմ ել-
նել: Արտաշէս իր գրաւած երկիրներէն բոլոր գանձերը
կը զրկէր Հայաստան: Հոն զրկեց նաև Յոյներուն և
ուրիշ ազգերու աստուածներուն կուռքերը, որոնք ար-
ծաթով, ոսկիով ու թանկագին քարերով շինուած ու
զարդարուած էին:

Արտաշէս այդչափ երկիրներ գրաւած ըլլալուն հա-
մար կոչուեցաւ Աշխարհնակալ (աշխարհներ գրաւող):

Բայց յանկարծ Արտաշէսի բանակին մէջ խոռվու-
թիւն ինկաւ. անոր զօրապետները սկսան իրար կոտո-
րել: Արտաշէս ստիպուեցաւ քանի մը զինուորներով
փախչիլ, սակայն ճամբան սպաննուեցաւ:

Հպարտ ու փառասէր թագաւորը հասկցաւ թէ իր
փառքը շատ կարծ էր, ուստի արտասուելով գոչեց.
«Աւա՛ղ փառացս անցաւորի» այսինքն՝ մէջ անցաւոր
փառքերու:

Ա. Մ. Փ Ո Փ Ո Ւ Մ

Վաղարշակի յաշորդեց իր որդին Արշակ Ա., որ իր հօրը
սկսած բարեկարգութիւնները շարունակեց: Պատերազմեցաւ Պոն-
տացիներուն դէմ եւ կոթող կանգնեց Սեւ ծովին եզերք: Իր
զակովը ծակեց զայն: Պոնտացիր պաշտեցին այս արձանը, բայց յե-
տոյ ծովը ձեցին: Արշակի յաշորդը եղաւ հպարտ ու փառասէր
Արտաշէսը: Բարեկարգեց եւ բազմացուց իր բանակը: Անոր զօրքերը

թիւով չէին համրեր ա, լ չափելով: Պարթեւներու Արշականէն աւաւ
առաջնութեան պատիւը եւ զրամ կտրեց իր անունով: Դաշնակ-
ցեցաւ Պոնտացւոց Միհրդատ թագաւորին հետ եւ զրաւեց ամբողջ
Փոքր Ասիան, Թրակիան եւ Յունաստանը: Բայց իր բանակին մէջ
խոռվութիւն իյնալով սպաննուեցաւ եւ գոչեց. «Աւա՛ղ փառացս
անցաւորի»:

Զարգացման բաժին. — Կարելի է ծանօթացնել հիներու
հաւատըր զեռուներու արեան ուժի մասին, զէնքերը ջրամուխ,
արիւնամուխ ընելու սովորութիւնը: Պողպատը ի՞նչպէս կը շինեն,
կարելի է յիշել: Յիշել նաև Խորենացիի այն ըսածը թէ Արտաշէսն
է Կրեսոսի յաղթականը: Կրեսոսի աւանդավիպի մասին կարելի է
խօսիլ, եթէ ժամանակ ըլլայ:

Ի Ա. Դ Ա. Ս

ՄԵԾՆ ՏԻԳՐԱՆ

Տիգրան Բ. Արտաշէսի մահէն ետքը ժառանգեց
անոր գահը և եղաւ Հայոց թագաւոր: Տիգրան պզտիկ
հասակէն լաւ կրթուած էր զինավարժութեան մէջ: Ան
քաջ էր, հպարտ և փառասէր:

Տիգրան իր հօրը մահուան լուրը առնելուն պէս
զօրք ժողվեց և գնաց Յոյնաց վրայ, որոնք եկեր մինչեւ
Հայաստանի սահմանները զրաւեր էին: Յոյները ցրուեց:

Իր հօրը նման դաշնակից եղաւ Միհրդատին հետ:
Միհրդատ իր կղեւպատրա տղիթիկը կնութեան տուաւ
Տիգրանի: Երկու բանակները միասին կը կռուէին: Կա-
պադովկիան գրաւելէն ետքը, Տիգրան իր դաշնակիցին
և աներոջ յանձնեց ու ինքը դարձաւ Հայաստան:

Պարթեւներու Արշական թագաւորը զօրքով Հայաստան կուգար: Տիգրանէն առաջնութեան պատիւը



Մեծ Տիգրան

եւո խլելու համար, երկու բանակները ճակատեցան Երասխի ափերուն վրայ: Արշական սաղաննուեցաւ և Պարթեւներուն երկիրին մեծ մասը ինկաւ Տիգրանի ձեռքը:

Այս ժամանակ Սելեւկեան իշխանութիւնը շատ աըկարացած էր: Երկու եղբայրներ կ'ուզէին թագաւոր ըլլալ և իրարու հետ կոխ կ'ընէին, իրարու զինուորները կը կոտորէին: Ասորիքի (Երիքատ գետին մինչեւ Միջերկրական տարածուած երկիրը, որ հիմակ կը կոչուի Սիրիա) ժողովուրդը ձանձրանալով իրենց թագաւորներուն ընտանեկան կոիւներէն, Տիգրանին զիմեց, որ իրենց թագաւոր ըլլայ կամ միջնորդէ:

Տիգրան իր ձեռքին տակ ունէր 500,000 (Կէս միլիոն) զինուոր: Ան քալեց Սելեւկեան երկիրներուն

վրայ: Տիգրանի ահեղ բանակը տեսնելով խեղճ Սելեւկեանները սարսափեցան, Տիգրան առանց լուրջ ընդդիմութեան գրաւեց Ասորիքը: Անտիոքը (Անդրաֆեա), որ Սելեւկեաններուն մայրաքաղաքն էր, Տիգրանի գլխաւոր քաղաքներէն մէկը դարձաւ, որուն վրայ կուսակալ կարդեց իր զօրավարներէն մէկը:

Տիգրան իր զէնքը աւելի առաջ տանելով հասաւ մինչև Պաղեստին (Հրեաներուն երկիրը), Պաղումային (Ալիա) քաղաքը պաշարեց և առաւ. անոր կղէոպատրաթագուհին գլխաւորեց:

Հրեաները սաստիկ երկիղի մէջ ինկան, երբ լսեցին որ Տիգրան մտադիր է իրենց վրայ արշաւելու: Ուստի երբ Տիգրան Պաղումայիսի առջև կը գտնուէր, Երուսաղէմի Աղեսիանորու թագուհին մեծամեծ ընծաներով պատգամաւոր ղրկեց անոր, յայտնելով թէ կը հպատակի Հայոց թագաւորին:

Տիգրան իր սոլոր անցած տեղերէն քաղաքներ կործանեց և անոնց յոյն և հրեայ բնակիչները քշեց Հայաստան: Յունական տասը քաղաքներէն 300,000 հոգի տարաւ բնակեցուց Տիգրանակերտի մէջ:

Անոր երկիրը այնքան ընդարձակ էր, որ բազմաթիւ ազգեր հպատակեցան անոր: Կովկասին մինչև Երուսաղէմ, Պարթեւներու երկիրէն՝ Պարսկաստանէն մինչև Միջերկրական ծով, անոր ձեռքին տակ կը գըտնուէին:

Ան կը կոչուէր «Արքայից Արքայ», այսինքն՝ բազաւորներու թագաւոր: Զորա գահազուրկ թագաւորներ թիկնապահի պաշտօն կը վարէին անոր մօտ: Երբ ձիով տեղ մը երթար՝ անոնք պարզ շապիկներ հագած անոր երկու քովէն կը վարէին ոտքով. իսկ գահը նստած ժամանակ, անոր առջև կը կանգնէին, իրեւ հնագան-

գութեան նշան՝ ձեռքերը խաչաձեւ կը կենային։ Ան յարգանք կը պահանջէր ամէնքէն, ինքզինքը Աստուծոյ տեղ կը դնէր։ Սպիտակ ու կարմիր տողերով շապիկ մը կը հագնէր և աստեղաղարդ բարձր թագ մը կը դնէր։ Անոր պալատին մէջ կային շատ մը գահազուրկ իշխաններ, որոնք պալատականի պաշտօն կը կատարէին։

Հաղարաւոր բանուորներ բերել տալով իր դրաւած երկիրներէն, չինել տոււաւ բազմաթիւ քաղաքներ ու չէնքեր։ Տիգրան այդ կերպով մեծ համբաւ մը թողուց Հայոց պատմութեան մէջ։

Ա.Մ Փ Ո Փ Ո Խ Մ

Տիգրան Բ.՝ յաջորդեց իր հօրը Արտաշէսի, որուն մահուան վրէժը լրւծեց Յոյները վանելով Հայաստանին։ Դաշնակցեցաւ Միհրդատի հետ, որուն Կղեռպատրա աղջկան հետ ամուսնացաւ։ Արշական յարձակեր էր Հայոց վրայ, Տիգրան սպաննեց զայն եւ տէր եղաւ անոր երկիրներուն։ Առանց արիւնահեղութեան տէր եղաւ Ասորիի, գրաւեց Պտղոմայիսը եւ զիխատեց անոր Կղէռպատրա թագուհին։ Երուսաղէմի Աղեմանդրա թագուհին հնագանդեցաւ անոր։ Ան 300,000 Յոյներ բնակեցուց Տիգրանակիերտ։ Հինեց քաղաքներ ու չէնքեր։ 4 թագաւորներ անոր թիլինապահներն էին։ Տիգրան ինքինը իրեւ աստուած պաշտել կուտար։

Զարգացման բաժին. — Ասորիի, Պաղեստինի, Փիւնիկէի մասին ծանօթութիւններ կարելի է աւելցնել。

Ի. Դ Ա. Ս

Տիգրան Եի ՀՌՈՎՄԱՅԵՑԻՆԵՐԸ

Տիգրանի դաշնակիցը Միհրդատ քաջ և յանդուգն իշխան մըն էր. Կ'իշխէր Սեւ ծովի հարաւային եղերքները, հիմակուան Տրապիզոնի շուրջը տարածուած երկրին վրայ։ Անոր երկիրը կը կոչուէր Պոլսու, Սեւ ծովի հին անունովը,



Միհրդատ

Միհրդատ և Տիգրան դաշնակից եղած էին. անոնք պայման դրին որ գրաւուած երկիրներուն հողը պատկանի Միհրդատի. իսկ բոլոր գանձերը, հարստութիւնները պատկանին Տիգրանի։

Երկու երկիրներուն բանակները միանալով յարձակեցան Կապադովկիայի վրայ։ Կապադովկիա կը զըտնուի կեսարիոյ շուրջը գանուած գտւառներուն մէջ։ Կապադովկիա Հռովմայեցիներու իշխանութեան տակ կը գտնուէր։ Տիգրան և Միհրդատ Կապադովկիայի իշխանը վանտեցին ու գրաւեցին երկիրը։ Բոլոր գանձերը, Թանկագին քարերով բանուած կուռքերը փոխադրեցին Հայաստան, իսկ հողը պատկանեցաւ Միհրդատի։

Միհրդատ մեծ ծրագիր մը ունէր . նա կ'ուզէր գրաւել հոռվմէական այն երկիրները , որոնք իր երկրին մօտ կը գտնուէին : Նա մտածեց խորտակել Հռվմայցւոց զօրութիւնը : Կազմակերպեց 300,000 հոգինոց ահեղ բանակ մը : Այդ բանակը պաշտպանելու համար պատրաստեց 300 նաւերէ բաղկացած նաւատորմիզ մը : Ան յարձակեցաւ Փոքր Ասիայի վրայ և հասաւ մինչեւ Բիւրամիս (Իղմիթիլլամ Նիկոմիդիայի գաւառը) : Գրաւեց նաեւ Յունաստանը և կուսակալ մը դրաւ :



Սիլլա

Հռովմայեցիները լսելով որ կապադովկիան գրաւուերէ , Սիլլա զօրապեաը զրկեցին բազմաթիւ զօրքով : Ան մտաւ Յունաստան ու ետ առաւ զայն : Միհրդատ յաղթուեցաւ և ստիպուեցաւ 80 նաւ տալ Հռովմայեցիներուն :

Ան սկսաւ նորէն պատրաստութիւններ տեմնել , նոր զօրք ժողվեց ու Տիգրանի հետ նորէն արշաւեցին և գրաւեցին ետ առած երկիրները : Այս անգամ Հռովմայեցիները զրկեցին Լուկուլլոս զօրապետը : Լուկուլլոս շատ խոհեմութեամբ առաջ քալեց , որովհետեւ կը վախնար Տիգրանէն :

Լուկուլլոս մէկ երկու անգամ կոռւեցաւ Միհրդատի հետ , բայց յաղթուելով ետ քաշուեցաւ : Սակայն ամե-

նէն ետքը յարձակելով Միհրդատի զինուորներուն վրայ . յաղթեց անոնց : Միհրդատ քիչ մնաց զերի պիտի իյնար , եթէ խորամանկութեամբ Հայաստան չփախչէր : Տիգրան երես չտուաւ Միհրդատի , բայց պահեց զայն :

Լուկուլլոս դեսպաններ զրկեց Տիգրանին և նամակ մըն ալ գրելով Միհրդատը ուղեց : Տիգրան տեսնելով որ նամակին մէջ «Հայոց թագաւոր» ըսուածէ իրեն և ոչ թէ «Արքայից արքայ» , շատ բարկացաւ , նամակը պատռեց ու Միհրդատը չյանձնեց : Այն ժամանակ Լուկուլլոս գնաց Տիգրանակերտը պաշարելու :

Տիգրան առաւ իր զինուորները և եկաւ Լուկուլլոսի վրայ : Տեսնելով Հռովմայեցիներուն քիչ ըլլալը , ըսաւ . «Ո՞վ են ասոնք . եթէ դեսպան եկած են , շատ են , իսկ եթէ պատերազմելու եկած են , քիչ են» : Եւ անհոգ կեցաւ : Լուկուլլոս առանց ժամանակ կորսնցնելու յարձակեցաւ Տիգրանի վրայ , և անոր բանակը ցրուեց : Յետոյ անմիջապէս գնաց Տիգրանակերտը պաշարեց : Քաշքը գրաւեց , որովհետեւ մէջի Յոյները մատնութիւն ըրին :


Տիգրան շուտով նոր զօրք ժողվեց , կանոնաւորեց և Լուկուլլոսի դէմ ելաւ : Լուկուլլոս յաղթուեցաւ :

Այն ժամանակ Հռովմայեցիները Լուկուլլոսին տեղ երիտասարդ զօրապետ մը զրկեցին մեծ բանակով : Այդ զօրապետին անունն էր Պոնակոս:

Տիգրան և Միհրդատ այս անգամ ալ անպատճառ կը յաղթէին , եթէ իրենց աղաքները չի դաւաճանէին :

Միհրդատ անէր Փառնակ անուն տղայ մը , որ ուղելով հօրը տեղ թագաւոր ըլլալ , մատնութիւն ըրաւ զոմէսոսի զինուորները իր հօր դէմ առաջնորդեց : Այդ պատճառով պատերազմի միջոցին Միհրդատ յաղթուելով ուերշի մը մէջ պաշարուեցաւ : Դերի շիյնալու հա-

մար թոյն առաւ խմեց՝ անձնասպան ըլլալ ուղելով։
Սակայն թոյնը չազդեց, որովհետև Միհրդատ ինքզինքը



Պոմպէոս

վարժեցուցած էր թոյնի։ Այն ատեն իր սուրովը ինքզինքը սպաննեց։

Տիգրան ալ փոքր որդի մը ունէր, որուն անունն էր Տիգրան։ Այս փոքր Տիգրանն ալ ուղելով իր հօրը տեղ թագաւոր ըլլալ, մասնեց իր հայրը և թշնամիներուն զինուորները առաջնորդեց իր հօրը բանակին դէմ։ Տիգրան տեսնելով որ լաւ չպիտի ըլլայ իր երկրին, բարեկամացաւ և դաշինք կնքեց Հռովմայեցիներուն հետ։ Պոմպէոս բարեկամ եղաւ Տիգրանի հետ։

Փոքր Տիգրանը տեսնելով որ իրեն տրուած խոստումը չեն յարգեր, բարեկամացաւ Պոմպէոսի դէմ։ բայց

Պոմպէոս պատժեց զայն և շղթայի զարնելով իրեն հետը տարաւ։

Տիգրան մեծ պատիւներ տուաւ Պոմպէոսին և մեծ քանակութեամբ դրամ բաշխեց Հռովմայեցի զինուորներուն։ Տիգրան իօսք տուաւ նաեւ անդամ մըն ալ հռովմէական երկիրները չարշաւել, բարեկամ ըլլալ և միասին պաշտպաննել այդ երկիրները արտաքին թշնամիներուն դէմ։

Տիգրան քիչ մը ժամանակ ալ հանգիստ ու խաղաղ կառավարեց իր երկիրը և մեռաւ խոր ծերութեան մէջ։

Ա. Մ Փ Ո Փ Ո Խ Մ

Միհրդատ եւ Տիգրան դաշնակցած էին պայմանաւ որ հողը մնայ Միհրդատի, զանձերը։ Տիգրանի։ Անոնց երկուքը զրաւեցին Կապաղովիին։ Հռովմայեցի դրկեցին Սիլլա զօրապետը, որ յաղթեց Միհրդատի։ Այս վերջինը նոր պատրաստութիւնով վերստին զրաւեց ետ տուած երկիրները։ Լուկուլլս զրկուեցաւ։ նաի յաղթուեցաւ, յետոյ յաղթեց Միհրդատի, որ Տիգրանի բով ֆախաւ։ Լուկուլլս Տիգրանի վրայ զնաց, Տիգրան անհոգութեամբ յաղթուեցաւ, բայց ետքը Լուկուլլոսի զօրքը ցրուեց։ Անոր տեղ զըրկուեցաւ Պոմպէոս, որ մատնիչ որդիներու շնորհիւ յաղթեց Միհրդատին եւ բարեկամ եղաւ Տիգրանին։ Միհրդատի որդին էր Փառնակ, Տիգրանինը՝ Փոքր Տիգրան։ Միհրդատ անձնասպան եղաւ, Տիգրան՝ բարեկամ Հռովմի։

Զարգացման բաժին. — Ծանօթութիւններ տալ նաւատորմիջի մասին, թոյնի գործածութեան մասին՝ նոյնիսկ բժշկութեան մէջ եւայն։

Ի. Պ. Տ. Ա. Ս

Ա. Բ Տ Ա. Ի Ա. Զ Դ Պ Ա.

Հոռվմի մէջ Ծերակոյտ մը կար որ կը կառավարէր Արկիրը : Տիգրանի ժամանակ, Ծերակոյտին հաւանութեամբ իշխանութեան գլուխ անցան երեք զօրապետներ : Այդ զօրապետներն էին ա) Յուլիոս Կեսար, բ) Պոլիկեոս և գ) Կրասոս :

Այս երեքը իրենց մէջ բաժնեցին հոռվմէական երկիրները . Յուլիոսի ինկաւ Երրողական մասը, Պոմպէոսին ինկաւ Եգիպտոսը, իսկ Կրասոսի՝ Ասիական մասը :

Կրասոս չատ ագահ և ընչաքաղց մարդ մը ըլլալով, եկաւ արեւելը : Գնաց Երուսալէմ, մտաւ տաճարին մէջ և կողոպտեց բոլոր գանձերը : Յետոյ անցաւ Միրիա (Ասորիք), միշտ գանձերը իւրացնելով :

Այս ժամանակ Տիգրան մեռած էր և անոր տեղթագաւոր եղած էր Արտավազ :

Արտավազդ կրթուած, լեզուագէտ և խելացի թագաւոր մըն էր : Ան լաւ գիտէր յունարէն իւղուն, Երբ որ գահը բարձրացաւ, իր հօրը նման ստիպուեցաւ բարեկամ ըլլալ Հոռվմայեցիներուն, յարգել իր հօրը դաշնքը Պոմպէոսին հետ :

Արտավազդ երբ լսեց թէ Կրասոս արեւելը եկած է և պիտի պատերազմի Պարթևներուն դէմ, անոր քով գնաց և խելացի խորհուրդներ տուաւ անոր : Բայց Կրասոս կարեւորութիւն չտուաւ :

Պարթևները երբ իմացան թէ Կրասոս զինուած իրենց վրայ կուգայ և Արտավազդն ալ անոր պիտի օգնէ, պատրաստուեցան . երկու բանակ կազմեցին : Մէկը

զրկեցին Հայաստան, Արտավազդի վրայ, իսկ միւսը Կրասոսի դէմ:

Արտավազդ նորէն խորհուրդ տուաւ, պատգամաւոր զրկեց Կրասոսին, որ Հայաստան գայ, մէկտեղ Կոռուելու համար : Կրասոս դարձեալ կարեւորութիւն չտուաւ : Այն ատեն Արտավազդ, հաշտութիւն ըրաւ Պարթևներուն հետ և իր մէկ քոյրը Պարթևներու թագաւորի տղուն՝ Բակուրի տուաւ իբրև կին : Սկսան հարսնիք բռնել :

Այդ միջոցին Պարթևներուն միւս բանակը, որուն զօրապետն էր Սուրէն իշխանը, յարձակեցաւ հոռվմէական զինուորներուն վրայ, ջախջախեց զանոնք և Կրասոսի տղուն գլուխը կտրեց նետեց Կրասոսին առջեւ : Հօրը գլուխն ալ կտրելով, Սուրէն զրկեց Հայաստան, Բակուրի հարսնիքին իբրև նուէր :

Պոմպէոս և Յուլիոս իրարու հակառակորդ էին, Կ'ուզէին առանձին իշխել այդ պատճառով կոռւեցան իրարու հետ : Երբ Պոմպէոս մեռաւ, իշխանութեան գլուխ անցաւ Յուլիոս Կեսար : Ան ուզելով Կրասոսի վրէժը լուծել, եկաւ արեւելք՝ Պարթևներուն դէմ : Սոսկալի ճակատամարտի մը մէջ յաղթեց անոնց . ետառաւ հոռվմէական արծուէնշան դրօնները և Հռոմ զրկեց : Կարճ լուր մըն ալ զրկեց անոնց, ըսելով . «Եկայ, տեսայ, յաղթեցի . (վիճի, վիտի, վիչի) :

Յուլիոս Կեսար մինակ կառավարեց երկիրները, բայց քանի մը տարի ետքը սպաննուեցաւ : Անոր մեռնելէն ետքը ուրիշ եռապետութիւն մը կազմուեցաւ : Այդ եռապետները իրենց մէջ բաժնեցին երկիրը : Անտոնիոսի ինկաւ Յունաստանը և արեւելքը :

Անտոնիոս Եգիպտոսի Կղէոպատրա թագուհին իրեն կին ըրաւ և անոր ձեռքը խաղալիկ եղաւ : Անտոնիոս
27—Ազգ. Պատմ. Միջին Ա.

Ասիա գտլով, ուզեց Պարթեւներուն դէմ քալել: Արտաւազդ ստիպուած էր զօրք տալ: Բայց բարեկամ ըլլալով Պարթեւներուն, չէր ուզեր կոռուիլ, երբ Անտոնիոս կարեւորութիւն չտուաւ Արտաւազդի տուած խորհուրդներուն, Արտաւազդ չօգնեց անոր:

Պարթեւները ինկան Անտոնիոսի բանակին վրայ և սոսկալի մնաս պատճառեցին: Անտոնիոս իր պարտութեան պատճառը Արտաւազդը կը համարէր, ուստի դարձաւ Եղիպտոս և ուզեց վրէժ լուծել:

Նախ խորամանկ միջոցներով Արտաւազդը իր քով հրաւիրեց, բայց ան չի գնաց: Այն ժամանակ Անտոնիոս զօրքով մտաւ Հայաստան: Այն հաւատացուց թէ Արտաւազդին բան մը չպիտի ընէ, այլ եկած է տուրք առնելու: Արտաւազդը հաւատալով գնաց անոր բանակը: Անտոնիոս վաստաբար արծաթի շղթաներով կապեց զայն և Հայաստանի գանձերը կողոպտելէն ետքը զայն իր ընտանիքով Եղիպտոս տարաւ:

Երբ որ Հոռմի մէջ իմացան Արտաւազդը խարելով գերի բոնելը, շատ բարկացան: Եռապետներէն մէկն էր Հոկտախանոս կամ Օգոստոս, որ թշնամացաւ Անտոնիոսին: Յարձակեցաւ անոր վրայ: Անտոնիոս իմանալով որ Օգոստոս բանտէն պիտի ազատէ Արտաւազդը և պիտի վերադարձնէ Հայաստան, քիչ մը ժամանակ բանտը պահեց, և օր մըն ալ երբ Արտաւազդ չխոնահեցաւ կղէոպատրայի առջև և զայն «Թագուհիներու թագուհի» չկոչեց, սպաննեց:

Անտոնիոս և Կղէոպատրա, յաղթուելով Օգոստոսէն, անձնասպան եղան: Օգոստոս Արտաւազդի որդիները առաւ և Հոռմ տարաւ, հռովմէական կրթութիւն տալու համար:

Ա. Մ. Փ Ո Փ Ո Խ Մ

Հոռմի մէջ կազմուեցաւ եռապետութիւն մը, որուն անդամներն էին Յուլիոս Կեսար, Պոմպէոս, Կրասոս: Կրասոս Պարթեւներուն դէմ եկաւ: Արտաւազդի խորհուրդներուն ուշադրութիւն չըրաւ: Պարթեւները թէ Հայաստան եւ թէ Կրասոսի դէմ զինուոր ղրկեցին: Արտաւազդ, Տիգրանի կրթուած որդին, ստիպուեցաւ բարեկամանալ Պարթեւներուն հետ եւ իր բոյրը ամուսնացնել Բակուրի հետ: Խոկ Կրասոս յաղթուեցաւ. անոր զլուխը կտրուեցաւ: Յուլիոս Կեսար Կրասոսի վրէժը լուծեց: Կազմուեցաւ երկրորդ եռապետութիւն մը, որուն մէկ անդամն էր Անտոնիոս, որ Պարթեւներէն յաղթուեցաւ, որովհետեւ Արտաւազդի խորհուրդներուն կարևորութիւն չտուաւ: Անտոնիոս խարդախութեամբ գերի բոնեց Արտաւազդը եւ տարաւ Եղիպտոս, ուր գըլխատեց զայն: Օգոստոս Արտաւազդի տղաքը տարաւ Հոռմ:

Զաւգացման բաժին. — Յուլիոս Կեսար, Պոմպէոս, Անտոնիոս, Կղէոպատրա, Օգոստոս այնպիսի դէմքեր են, որոնց մասին կարելի է քիչ մը երկար խօսիլ:

Ի Գ. Դ. Ա. Ս

Ա. Ր Շ Ա. Մ Ե Ւ Ա. Բ Դ Ա. Ա Ր

Արտաւազդի գերի տարուելէն և մեռնելէն ետքը, հայ իշխանները միանալով Մերինի մէջ իրենց թագաւոր դրին Արշամ անունով մէկը, որ Տիգրանի եղբօրուրովին էր: Արշամ ուզեց բոլորովին ազատ ըլլալ, բայց ստիպուեցաւ Հոռվմայեցիներու դաշնակից ըլլալ և տուրք տալ: Անոր օրով Հայերը առաջին անդամ հարկատու եղան Հոռվմայեցիներուն:

Արշամի օրով Երուսաղէմի մէջ թագաւոր էր Հերովդէս, որ Բեթղեհեմի մահուկները սպաննողն է: Հե-

բովդէս բարեկամ էր Հռովմայեցիներուն։ Ան շատ մը շէնքեր շինել տուաւ. ուզեց սալայատակել նաև Ասո- րիքի Անտիոք քաղաքը, որուն փողոցները տիղմով լե- ցուն էին։ Ասոր համար Արշամէն գործաւորներ ուզեց, բայց ան չի տուաւ։

Հերովդէս բարկացաւ և զօրք ժողվելով Արշամի վրայ գնաց, Արշամ ստիպուեցաւ անոր խնդիրը կա- տարել։ Արշամ 20 տարի թագաւորեց և մեռաւ։ Անոր յաջորդեց իր որդին Արքար։

Արգարի ժամանակ Օգոստոս Կայսրը մարդեր զրկեց Հայաստան, որ աշխարհագիր ընկն, բնակիչներուն անունները արձանագրեն, առորք առնելու համար։ Օգոստոս կայսրը զրկած էր նաև իր պատկերը, մեհ- եանին մէջ կախուելու համար։


Հերովդէս թագաւորն ալ իր պատկերը զրկեց Ար- գարին միասին կախուելու համար։ Բայց Արգար մեր- ժեց, Հռոմ մարդ զրկեց, որ զինքը Հերովդէսէն աղատեն։ Սակայն մարդ կարեւորութիւն չի տուաւ։ Այն ատեն Արգար ստիպուեցաւ գլուխ ծուել։

Արգար միաքը դրաւ Հռովմայեցիներուն դէմ ապլս- տամբիլ, ատոր համար իր աթոռը Մծրինէն փոխադ- րեց Եղեսիա (Աւրֆա) քաղաքը. որ զօրացուց։

Անկէ ետքը ուզեց դաշնակից ըլլալ Պարթեւներուն։ Բայց որովհետեւ այն ժամանակ Պարթեւաց թագուորը մեռեր էր և անոր երեք որդիները իրարու հետ կը կոռւէին թագաւոր ըլլալու համար, ստիպուեցաւ Պար- կաստան երթալ և զանոնք հաշտեցնել։ Երեք եղբայր- ները հաշտաւեցան, բայց չկրցան օգնել Արգարի։

Արգարի ճամբորդութիւնը իմանալով Հռովմայեցի- ները կասկածեցան, ուստի Արգար դեռպաններ զրկեց

Երուսաղէմի մօսերը զանուող հռովմայեցի կուսակալին և համոզեց թէ Պարթեւներուն հետ դաշնակից եղած չէ։ Անոր դեռպանները ճամբան, Երուսաղէմի մէջ,



Եղեսիա կամ Ռւբիա

Հանդիպեցան Յիսուսի, որ քարսութիւններ կ'ընէր. Անոնք նկան իրենց տէրոջը պատմեցին։ Արգար հիւանդ էր, բարսութեան բռնուած էր։ Անոր համար իր եր- կիրը հրաւիրեց Յիսուսը, որ չի գնաց, խոստանալով իր Համբարձումէն ետք իր աշակերտներէն մէկը զրկել։

Իրօք Թաղէս Առաքեալը եկաւ Եղեսիա և բժշկեց Արգարը, մկրտեց զայն իր պալատականներուն։ Հետ Ամրող Եղեսիան քրիստոնեայ եղաւ։ Աղյի անունով խոյրաբարը (թագ չինող) իրեն տեղ եպիսկոպոս ձեռ- նադրելով, Թաղէս գնաց բուն Հայաստան։

Արգար անկէ ետքը սկսաւ նամակներ գրել Տիբերիոս կայսեր, Պարսից և Ասորեստանի թագաւորներուն։ Տիբերիոսին գրեց որ Պիղատոսը պատժէ. իսկ միւսներ յորդորեց որ քրիստոնէութիւն ընդունին, Բայց տակաւին պատասխան չառած մեռաւ։

Ա.Մ.ՓՈՓՈՒՄ

Արտաւագդի մահէն ուտք Մծրինի մէջ թագաւոր կը պատկանի Արշամ, Տիգրանի եղրորորդին։ Ան կը հպատակի եւ տուրք կուտայ Հռովմայեցւոց։ Հերովդէսի հետ կը զժոտի, չի տալով անոր իննդրած գործաւորները, բայց բւնի ոյժին առջեւ կը խոնարհի։ Անոր կը յաջորդէ Արգար, որ նոյնպէս կը զժոտի Հերովդէսի հետ եւ կը խորհի ապստամբիլ, բայց չի յաջողիր։ Կը շինէ Եղիսաբան, ուր կը փոխազդէ իր աթոռւը։ Յիսուսի հետ յարաբերութեան կը մտնէ եւ թաղէոսէն կը մկրտուի։ Նամակներ կը գրէ Տիբերիոսի եւ ուրիշներու, բայց պատասխան չառած կը մեռնի։


Զարգացման բաժին.—Ծանօթութիւններու առատ մթերք կրնան հայթայթել Հերովդէս, Տիբերիոս եւայն։

Ի.Ե. Գ.Ս.Ս

Ա.Ն.Ա.Ն.Ի.Ն, ՍԱ.Ն.Ա.Տ.Ր.ՈՒ.Կ ԵՒ ԵՐՈՒ.Ա.Ն.Դ

Արգարի մեռնելէն ետքը Եղեսիայի մէջ թագաւոր եղաւ անոր որդին Անանուն։ Իսկ Վաղարշակի, սերունդէն Սանատրուկ անուն մէկը թագաւոր եղաւ Հայաստանի վերին մասերուն վրայ։

Անանուն քրիստոնէութիւնը ուրացաւ և սկսաւ քրիստոնեաները հալածել։ Նահատակեց Աղոյի խոյրաշրաը, որ չէր ուզած թագ շինել Քրիստոսի չի հաւատացող անարժան գլուխին համար։



Ա. Սանդուկիս

Սանատրուկ թաղէոս առաքեալէն քրիստոնեայ եղած և մկրտուած էր։ Անոր Սանդուկիս կոյսն ալ հաւատացած էր։ Բայց Սանսատրուկ, նախարարներուն թե-

Եադրութիւնովը, ուրացաւ քրիստոնէութիւնը և ինքն ալ սկսաւ Անանունի պէս, հալածել քրիստոնեաները : Ս. Թաղէոս առաքեալը և Սանդուխտ կոյսը հահատակել տուաւ, ինչպէս նաև ուրիշ շատեր :

Ապա գօրք ժողվեց որ երթայ Անանունը Միջազգեածնի հալածէ և անոր երկիրն ալ զրաւէ, երբ Սանատրուկ պատրաստութեան մէջ էր, Անանուն իր պալատը նորոգած տաեն սիւնի մը տակ մնալով մեռաւ, Եղեսիացիները դեսպան դրկեցին Սանատրուկի, խոսացան քաղաքը և գանձերը յանձնել :

Սանատրուկ Եղեսիա մանելով Աբգարի սերունդը, բացի աղջիկներէն, սուրէ անցնել տուաւ, իսկ Աբգարի կինը Հեղինէն, որ կառանցի էր, իր հայրենիքը դրկեց, Հեղինէ երտւաղէմ գնաց ու շատ բարիք ըրաւ աղքատներուն և հոն թաղուեցաւ :


Սանատրուկի ժամանակ նշանաւոր էր Երուանդ անուն իշխանը, որ մօրը կողմէն Արշակունի էր և Սանատրուկի սիրելի :

Երուանդ Հայաստանի հիւսիսային գաւառներուն կուսակալ էր և բոլոր նախարարներուն սիրելի ըլլալ Կ'աշխատէր : Երբ Սանատրուկ որսի ժամանակ նետով մը սպաննուեցաւ, յաջողեցաւ Հայոց թագաւոր ըլլալ . Բայց Բագրատունի նախարարը յանձն չառաւ անոր գլուխը թագ դնելու :

Ատոր համար Երուանդ սուրէ անցնել տուաւ Սանատրուկի բոլոր սերունդը, Միայն Արտաշէս անուն մանուկ մը, իր ստնուին ձեռքով, աղատեցաւ : Սմբատ Բագրատունին իմանալով Արտաշէսի ազատուիլը, լեռներուն մէջ գնաց գտաւ զայն և Պարսկաստան փախցուց : Պարթեւներու թագաւորը սիրով ընդունեց զանոնք :

Երուանդ աշխատեցաւ Արտաշէսը ձեռք ձգել, Պարթեւ Թաղաւորին գրելով թէ Արտաշէս Սանատրուկի որդին չէ, այլ Մարաստանցի հովիսի մը տղան : Սմբատին ալ խոստումներ ըրաւ, բայց չի յաջողեցաւ :

Ապա իր իշխանութիւնը ապահովելու համար, բարեկամ եղաւ Հոռվմայեցիներուն հետ, անոնց ապավ Միջագետքը . իսկ իր մայրաքաղաքը Արմաւիրէն փոխաղբեց Երասխ գետին մօտ շինած իր նոր քաղաքը, որ կոչուեցաւ Երւանդաշատ: Քաղաքը ամուր կերպով շինեց Երասխի հիւսիսային կողմը և Ախուրեան գետին արեւելեան կողմը :



Երուանդաշատ

Երուանդաշատէն դէպի հիւսիս, Ախուրեանի եղերքը շինեց Բագրատն քաղաքը, ու աստուածներու արձանները հոն փոխաղբեց : Քուրմերը իր կողմը շահելու համար իր Երուազ եղբայրը քրմավետ կարգեց : Շինեց նաեւ Երուանդակերտ քաղաքը որ որսի անտառ մըն ալ անկել տուաւ, որ կոչուեցաւ Ծննդոց անտառ:

Առատաձեռնութիւններով, խնջոյքներով չի կրցաւ
իր կողմը շահիլ բոլոր նախարարները:

Ս. Մ Փ Ո Փ Ո Ւ Մ

Արգարի յաջորդեց Անանուն, ուրացող, որ սպանեց Աղոյի
խոյրաբարը: Ինք ալ սիւմի մը տակ մնաց եւ մեռաւ: Սանատրուկ
Արշակունի թագաւոր եղաւ բան Հայաստանի, ըրբատոնէութիւնն
ուրացաւ եւ նահատակից Թաղէոսն ու Սանդուխտ կոյսը: Ար-
գարի սերունդը սրէ անցուց: Որսի ժամանակ նետէ մը սպան-
նուեցաւ: Երուանդ, մօրմէն Արշակունի՝ յաջորդեց Սանատրուկի
եւ անոր սերունդը սրէ անցուց: Ազատեցաւ Արտաշէս, որ տար-
ուեցաւ Պարսկաստան: Երուանդ շինեց Երուանդաւասը, Երուան-
դակերը, Բագարանը եւ Ծննդոց Անտառը:

Զարգացման բաժին. — Թաղէոսի, Սանդուխտ կոյսի նա-
հատակութիւնը ընդարձակելի նիւթ կրնան կազմել:

Ի Զ. Գ Ա Ս

ԱՐՏԱՇԵՍ Բ. ԵՒ ԱՐՏԱԽԵՍԶԴ Բ.

Մինչդեռ Երուանդ կ'աշխատէր իր դահը ամրացը-
նել, Արտաշէս և Սմբատ Բագրատունի սիրելի ըլլալով
Պարթեւներու թագաւորին, օգնութիւն ստացան ու մեծ
բանակով եկան Հայաստան:

Երուանդ իմացաւ և սկսաւ պատրաստութիւններ
տեսնել, երկու բանակները իրարու ճակատեցան Եր-
ուանդաշատէն հիւսիս, Ախուրեան գետին մօտ: Հայ
նախարարներ Արտաշէսի կողմն անցան և սկսան Եր-
ուանդի դէմ կռուիլ: Պատերազմը սոսկալի եղաւ:

Մուրացան Արգամ նախարարը, որ շատ զօրք ու-
նէր և քաջ էր՝ Երուանդի կողմն էր: Արտաշէս մարդ
զրկեց անոր գաղտնի և խոստացաւ իր երկրորդն ընել:

Կթէ իր կողմը անցնի: Արգամ ընդունեց և հեռացաւ
Երուանդէն:


Երուանդ մնաց միայն վրացի զօրքերով, որոնք



Արտաշէս Բ.

Հղիմացան ու փախան: Կռուին մէջ մէկ քանի քաջեր,
որոնք Երուանդին խօսք տուած էին Արտաշէսը սպան-
նել, յարձակեցան ու քիչ մնաց որ Արտաշէս մեռնէր:

Արտաշէսի ստուգուն որդին Գիսակ անոնց դէմը ելաւ և



Արտաշէսի պատկերացություն

աղատեց իր տէրը, բայց սուրէ մը իր դէմքին կէսը
կտրուեցաւ ու մեռաւ:

Երուանդի ստիվուեցաւ փախչիլ: Սմբատ հալածեց
զայն և սպաննեց: Արտաշէս հրաման ըրաւ որ պատ-
ուեն Երուանդի դիմակը, արձան մը կանգնեն անոր
վրայ, որովհետեւ մօրմէն Արշակունի էր:

Սմբատ Երուանդի գանձարանէն գտաւ Սանատրուկի
թագը և փառաւոր կերպով պսակեց Արտաշէսը: Այն թա-
գաւորը ըլլալէն ետքը իր խոստումը կատարելով իրեն երկ-
բորդ ըրաւ Արդամ իշխանը և իրաւունք տուաւ յա-
կընթակապ պսակ դնել, ականջներուն օղ և մէկ ոտքին
կարմիր կօչիկ, ոսկի դգալ, պատառաքաղ ու բաժակ
գործածելու: Սմբատին տուաւ թագաղրութեան իրա-
ւունքը և կարգեց սպարապետ: Գիսակի Ներսէս տղան
նախարարներու կարգը դասեց և կոչեց Դիմաքսեան
նախարարութիւն: Թամնկագին ընծաներ դրկեց Պար-
թեւներու թագուորին, չնորհակալութիւն յայտնելով:

Հռովմայեցիները զրգով յարձակեցան Հայաստան
իրենց տուրքը ուղելու համար: Արտաշէս ստիվուեցաւ
հաշտուիլ ու բարեկամանալ, տուրք տալ խոստանալով:

Քիչ ետքը կովկասէն բարբարոս ժողովուրդ մը
յարձակեցաւ Հայաստան: Այդ ժողովուրդը կը կոչուէր
Աղանձներ: Անոնց հետ ուրիշ լեռնցի վայրենի ցեղեր ալ
միացած էին: Արտաշէս անմիջապէս հաւաքեց իր զօր-
քերը և կուր գետին եղերքը անոնց դէմն ելաւ: Ալան-
ները յաղթուեցան, գետին միւս կողմը փախան, անոնց
արքայորդին ալ գերի ինկաւ: Ալանաց թագաւորը ու-
ղեց հաշտուիլ, բայց Արտաշէս յանձն չառաւ:

Այն ատեն թագաւորին աղջիկը Սարենիլի գետին
ափը եկաւ և հեռուէն համոզեց Արտաշէսը որ իր եղ-
բայրը աղատէ: Արտաշէս Սաթենիկի իմաստուն խօս-
քերէն հրապուրուելով հաշտութիւն կնքեց և Սաթե-
նիկն ալ իրեն կին տռաւ: Փառաւոր հարսանիք մը


սարքուեցաւ, ուր փեսին և հարսին վրայ մարդարիտ ու ոսկի կը թափէին :



Սարքիկ տիկին

Արտաշէս անկէ ետք սկսաւ շէնցնել երկիրը, ու բիշ երկիրներէ գաղթականներ բերել տուաւ և բնակե-

ցուց Հայոստան։ Շինեց կամուրջներ, մեհեաններ, պալատներ, ճամբաններ։ Անոր օրով Հայաստանի մէջ չի կար ափ մը հող որ մշակուած չըլլար։ Այդ պատճառով շատ սիրուեցաւ ան ժողովուրդէն :



Ան ունեցաւ բազմաթիւ որդիներ։ Սաթենկէն առջնեկ տղայ մը ունեցաւ, որուն անունն էր Արտաշաղի, որ չար մէկն էր։ Արտաւագդ նախանձելով Արտաղի,

Արտաշաղ յուղականութիւնը

գամի և Սմբատ Բագրատունիի վրայ, քսութիւններով ու զրպարտութիւններով անոնց ձեռքէն առաւ իշխանութեան իրաւունքն ու երկիրները։ Արտաշէսի միւս տղաքն ալ իրենց եղբօր վրայ նախանձեցան և սկսան կոռվիլ։ Արտաշէս մեծ դժուարութիւն քաշեց, զանոնք հաշտեցնելու համար։



Արտավագդ վիճը կը զլորի

Անդամ մը ուզեց դարձեալ ապստամբիլ Հռովմայեցիներէն, բաւական յաշողեցաւ. յաղթեց մէկ երկու անգամ, բայց ի վերջոյ ստիպուեցաւ բարեկամ ըլլալ։ Անդամ մը երբ Պարթեւները և Հռովմայեցիները հաշտեցնելու համար Պարսկաստան կ'երթար, ճամբան հիւանդացաւ և մեռաւ. Փառաւոր թաղում մը կատարեցին։ Անոր գահը ոսկիէ էր և թանկաղին քարերով։ Թաղած ատեն շատեր ինքզինքնին սոլաննեցին անոր գերեզմանին վրայ։

Արտաշէս 41 տարի թագաւորեց։ Անոր յաջորդեց իր որդին Արտավագդ Բ. որ հազիւ քանի մը օր թագաւորեց, որովհետեւ երբ անդամ մը ձի նստած որսի կ'երթար, յանկարծ ձիով մէկտեղ խոր վիճի մը մէջ ինկաւ։

Ա.Մ Փ Ո Փ Ո Ւ Մ

Արտաշէս Պարթեւներուն օգնութեամբ կուզայ Հայաստան եւ կուռելով կը յաղթէ երուանդի, որովհետեւ Արգամ եւ ուրիշ նախարարներ իրեն կողմը կ'անցնին։ Թագաւոր ըլլալէ ետք իր երախտագիտական պարտքը կը կատարէ։ Հռովմայեցիները Հայաստան կուզան, Արտաշէս կ'ստիպուի տուրք վճարել. Ալանները կ'արշաւեն Հայոց վրայ, կը յաղթուին կուրի մօտ։ Սաթենիկի հետ կ'աշխատի։ Դարձեալ կ'ուզէ Հռովմայեցիներէն ապստամբիւ, բայց չի յաջողիր։ Կը մեռնի ու կը թաղուի փառաւոր հանդէսով։ Անոր կը յաջորդէ չարն Արտավագդ Բ. որ վիճը կը զլորի իր ձիով։

Զարգացման բաժին.—Հին Արփականներու մէջ կամաւոր մահերը՝ թագաւորներու զերեզմանին վրայ, սովորական էին։

Բ Է. Գ Ա. Ս

ՏիրԱՆ Ա., ՏիգԹԱՆ Գ., ՎԱՂԱՐԾԵՒ ԵՒ ԽՈՎՅՈՎ Ա.

Արտաւագդի մահէն ետք, անոր յաջորդեց իր եղբայրը ՏիրԱՆ Ա., որ ինքզինքը ինչոյցներու և որսորդութեան տուաւ, փոխանակ երկիրը բարեկարգելու։ Անդամ մը ճամբան ձիւնին տակ մնալով մեռաւ։

Տիրան ալ Արտաւազղի նման որդի չունենալով
անոր յաջորդեց իր եղբայրը Տիգրան Գ., որ նշանաւոր
գործ մը չկրցաւ ընել : Միայն թէ Պարթևներուն հետ
բարեկամ ըլլալով, միասին յարձակեցաւ հռովմէական
երկիրներուն վրայ, յաղթեց : Բայց յոյն իշխանուհիի
մը կողմէ խարդախութիւնով բռնուեցաւ ու բանալ
նետուեցաւ : Հռովմայեցիներուն կայսրը մեծ զօրքով
Հայաստան եկաւ, գրաւեց և Տիգրանին ալ ներելով
աղատ արձակեց : Տիգրան 42 տարի թագաւոր եղաւ :

Տիգրանի յաջորդեց իր ոռջին Վաղարշ, որ իր անունով
մէկ երկու քաղաքներ շինեց : Այդ քաղաքներէն մէկն
էր Վաղարշաւան, որ կը գտնուէր Երզրումի արևելեան
կողմը, Երասին և Մուրց գետերուն իրար միացած տե-
ղը : Այդ քաղաքը հիմակ գիւղ մըն է, որ կը կոչուի
Քեօյիրիւ իօյ : Վաղարշ բոլորպվին հիմն նարոգեց նուև
ուրիշ գիւղ մը և անոնը գրաւ Վաղարշապատ, որ հի-
մակ ալ կը գտնուի, Էջմիածնի քովիկը : Իր աթոռը
փոխադրեց այդ քաղաքը, որ բերդերով ամրացուց :

Վաղարշ Հայոց տարեմուտախն՝ Նաւասարդին առա-
ջին օրը ազդային մեծ տօն մը հաստատեց, ամէն տարի
մեծ հանդէսով կը տօնուէր Բաղաւանի մէջ Հայոց
Ամանորի աստուածը : Բագաւան շինուած է Եփրատի
եղերքը, Բագրեւանի գաւառին մէջ . հիմակ այս գա-
ւառին անունն է Աղաշիեր :

Վաղարշի վերջին տարիները կովկասի հիւսիսային
ազգերը յարձակեցան Հայաստան : Վաղարշ զօրք ժողո-
վեց և դէմ գնաց անոնց, յաղթեց, բայց երկրորդ ան-
գամ կռուած ատեն սպաննուեցաւ :

Անոր որդին Խոսրով Ա., անմիջապէս զօրք ժող-
վեց և յարձակեցաւ թշնամիին վրայ, իր հօրը վրէժը
լուծելու համար : Վանաեց զանոնք Հայաստանէն, յաղ-
թեց և տուրք առնելով դարձաւ իր երկիրը :

Անկէ ետքը Խոսրով բարեկամ ըլլալով թէ Հռով-
մայեցիներուն և թէ Պարթևներուն, խաղաղութեամբ
կառավարեց իր երկիրը :

Այս միջոցին Պարսկաստանի մէջ մեծ դէպք մը
պատահեցաւ : Արտաշիր անուն մէկը, որ Պարսկաստանի
մէկ մասին իշխանն էր, ապստամբեցաւ Պարթև թա-
գաւորին Արտաշանի դէմ : Արտաշիր Սասան անուն մար-
դու մը թոռն ըլլալով կը կոչուէր Սասանեան, իր դեր-
դաստանն ալ այդ անունը առաւ :

Պարթև թագաւորները տկարացած էին . ինքզինք-
նին ուրախութեան և խնջոյքի տուած էին, ժողովուր-
դը բնաւ չէին հոգար : Իրենց հին հայերուն կրօնքին
կարեւորութիւն չէին տար : Այդ պատճառով ժողովուր-
դը անոնցմէ դժգոն էր : Ուստի երբ Արտաշիր Սասան-
եան ապստամբեցաւ, ամէնքն ալ անոր կողմը սկսան
բռնել : Արտաւան ու զեց պատերազմիլ և Սրտաշիրը
ջախչախնել . բայց չի յաջողեցաւ և սպաննուեցաւ : Այն
ժամանակ Արտաշիր եղաւ Պարսկաստանի թագուոր և
Սասանեան իշխանութեան հիմնադիր :

Մեծն Խոսրով երբ լսեց Արտաշիրի ապստամբիլը և
իր արիւնակից Արտաւանի դէմ կուսիլը : Չտապեց ա-
նոր օգնութեան հանսելու : Բաւական տուած գնաց, երբ
լսեց որ Արտաւան մեռեր է : Տրտմութեամբ ետ դար-
ձաւ և սկսու պատերազմի պատրաստուիլ :

Մեծն Խոսրովի հետ միացան Արտաւանի հաւատա-
րիմ զինուորները, Մարերը, Վարցիները և ուրիշ ազ-
գեր, Հռովմայեցիներն ալ օգնութեան եկան : Խոսրով
երկու անգամ յարձակեցաւ Արտաշիրի վրայ, որ յաղ-
թուելով ստիպուեցաւ փախչիլ մինչև Հնդկաստան :

Արտաշիր խորամանկութեամբ դիմեց : Անակ Պահ-
լաւունի պարթեւ իշխանը Հայաստան զըկեց, որ դա-

ւազրութեամբ սպաննէ։ Անակ ընտանիքով և զօրքով
եկաւ Խոսրովի մօտ, իրը թէ Արտաշիրէն փախչելով։
Խոսրով սիրով ընդունեց զայն։

Օր մը Խոսրով որսի գացած էր. Անակ խարէու-
թեամբ թագաւորը հեռացուց նախարարներէն, իրրեւ
թէ գաղանի բան մը ըսելու համար, գաշոյնով մա-
հացու կիրազով վիրաւորեց զայն ու փախաւ։ Նախա-
րարները հասան գաւաճանին ետեւէն, բռնեցին զայն և
Երասի գետը նետեցին։

Խոսրով մեռած ատենը հրաման ըրաւ սուրէ ան-
ցընել Անակի սերունդը, ուրկէ միայն Գրիգոր անուն
մանուկը աղասուեցաւ իր ստնտուին ձեռքովը և տար-
ուեցաւ Կեսարիա։

Ա. Մ Փ Ո Փ Ո Խ Մ

Արտաւազի մահէն ետք իրարու յաջորդեցին Տիրան Ա.,
Տիգրան Դ., Վաղարշ եւ Խոսրով Ա.։ Տիրան ծիւնի տակ մնաց մե-
ռաւ. Տիգրան խարէութեամբ յօյն իշխանուին մը բռնուեցաւ.
բայց յետոյ ազատեցաւ։ Վաղարշ շինեց Վաղարշաւան եւ Վա-
ղարշավաս բաղարները, հաստատեց նաւասարդի տօնը։ Սպան-
նուեցաւ հիւսիսի ազգերու դէմ կուռած ատեն։ Խոսրով Ա. յաղ-
թեց հիւսիսային ազգերուն։ Անոր օրով Արտաշիր Սասանեան ա-
պբստամերեցաւ եւ սպաննեց Արտաւան պարթեւ թագաւորը։ Խոս-
րով բազմաթիւ օգնականներով յարձակեցաւ եւ փախցուց Ար-
տաշիրը։ Անակ Պահլաւունի դաւով սպաննեց Խոսրովը Անակի ըն-
տանիրէն ազատուեցաւ միայն Գրիգոր, որ Կեսարիա տարուեցաւ։

Զարգացման բաժին. — Պարթեւ թագաւորներու տկարաց-
ման պատմառները, Պարսիկ կրօնը եւ Սասանեաններու ծգուումը
ընդլայնուելիք նիւթեր կրնան կազմել։

Ի. Յ Ա Ս

ՄԵԾՆ ՏՐԴԱԾ

Արտաշիր երբ լսեց Խոսրովի և Անակի սպաննուի-
լը, զօրքով եկաւ Հայաստան։ Հայոց նախարարները
թէիւ կռուեցան, բայց յետոյ հնագանդեցան։ Արտաշիր
տէր եղաւ Հայաստանի։ Ան հրամայեց սուրէ սնցնել
Խոսրովի ընտանիքը։ Արտաւազդ Մանդակոնի իշխա-
նը Հոռմ վախցուց Խոսրովի որդին Տրդասը, իսկ Օտա-
Ամատունին ալ առաւ թագուորական գանձերը և Խոս-
րովիդիւնիս աղջիկը, և Անի (Քիւիսի) ամրոցին մէջ ա-
պաստանեցաւ։ Այս ամրոցը կը գտնուէ՞ Երզնկայի
արեւմտեան կողմը, Եփրատի եղերքը։

Արտաշիր Հայաստանի տէր գաւանալով հրամայեց
որ Արմզգական կրակլ վասուի ամէն տեղ ու Հայերը
պաշտեն զայն։ Աշխատեցաւ երկիրն ալ բարեկարգել։

Այդ միջոցին Տրդաս կը մեծնար հռովմէական բա-
նակին մէջ։ Իր ուժովը և քաջութիւնովը մեծ անուն
հանեց։ Անգամ մը վայրի ցուլի մը եղջիւրները մէկ
ձեռքով բանեց, ոլորեց վլորը և սպաննեց։ Անգամ մէն
ալ կառարշաւաւ ատեն իր հակառակորդը կտորքէն վար
ձգած էր զինքը, ան վազեց և մրցորդին կառքին ետե-
փ անիւները բանելով կառքը կեցուց։ Ուրիշ անգամ
մէն ալ Գոթաց Հոչէ թագաւորին հետ մենամարտեցաւ,
յաղթեց և Հոռվմայեցւոց կայսրին առջև տարաւ։

Անոր այս քաջութիւններուն համար կայսրը մեծ
պատիւներ տուաւ՝ զօրք յանձնեց որ երթայ իր հօրը
գահին վրայ նստի։ Կեսարիայի մէջ անոր միացան շատ
մը հայ նախարարներ։ Գրիգորն ալ անոր քարտուղա-
րը (գրադիր) եղաւ։ Մտան Հայաստան։ Օտա Ամատու-

Նին Տրդատի յանձնեց արքունի գանձերը և կոսրովի-
դուխազ:



ՕՏՄ ԿՐ ԽԱՆՁԻ ԽԵՎՈՒԽԵՎՈՒԽԵՎՈՒ Ի ԳԱԲԱԼՄ



ՄԵԾՆ ՏՐԴԱՏ

գաւորին և անոր Աշխեն դուստրը կնութեան ուղեց :
Փառաւոր հանդէռով կատարուեցաւ հարսնիքը և Աշ-
խէն եղաւ թագուհի Հայոց :


Տրդատ յաղթեց Պարսիկ զինուորներուն, զանոնք
վոնտեց Հայաստանէն և եղաւ թագաւոր :
Սմբատ Բագրատունի իշխանը դրկեց Ալանաց թա-



Աժակն բազումի

Տրդատ իր յաղթութիւններուն համար Երիզա (Երգնելա) գնաց չնորհակալ ըլլալու Հայոց աստուածուհի Անահիտին, և հրաման ըրաւ իր քարտուղար Գրիգորին որ ծաղկեպսակ մը դնէ աստուածուհիին արձանին ոտքը: Գրիգոր մերժեց: Տրդատ չարչարեց զայն: Բայց երբ իմացաւ թէ Անակի որդին է, Խոր Վիրապը նետել տուաւ: Գրիգոր երկար տարիներ ապրեցաւ հոն, որով—

հետև ծերուկ կին մը ամէն օր հաց կը ձգէր անոր ։ Շատ ժամանակ վերջը այդ Վիրապին վրայ շմուած է վանք մը:



Խոր Վիրապի վանքը

Այդ միջոցներուն քանի մը կոյսեր չուոմէն փախչելով եկան Հայաստան: Առոնց մէջ էր Հոփիսիսին, զոր Դիոկլետիանոս իրեն կին առնել կ'ուզէր: Տրդատ երբոր իմացաւ անոնց գալուստը, մարդ զրկեց փրնուեց ու գտաւ: Անոր գեղեցկութեանը հաւնելով ուզեց իրեն կին առնել, բայց Հոփիսիմէ մերժեց: Այն ատեն Տրդատ նահատակել տուաւ զայն և իր ՅԵ ընկերները:

Անոնց մէջ կը գտնուէր նաև Ս. Գայլիանի կոյսը: Տրդատ ատոր վրայ հիւանդացաւ և յիմարանալով կենդանիներու պէս լեռները կը թափառէր: Խոսրովին դուխտ երազ տեսաւ և գացին Գրիգորը հանեցին Վի-

բապէն : Ան բժշկեց թագաւորը և քարոզեց ու ամէնքն ալ քրիստոնեայ դարձան :

Անմիջապէս սկսան քանդել մեհեանները և կուռքերը ու անոնց տեղ տաճարներ կանգնել : Ս. Գրիգոր Կեսարիա զրկուելով եպիսկոպոսապետ ձեռնադրուեցաւ այն տեղի Դեւոնդ մետրոպոլիտէն (եպիսկոպոս) և ուրիշ եպիսկոպոսներէ : Հայաստան դառնալով իր հետ բերաւ Ս. Յովհաննէս Մկրտչի և Աթանազինէսի նըշխարները, Եփրատ գետին մէջ մկրտեց թագաւորն ու բոլոր բազմաթիւ Հայեր, որոնց թիւն էր 4 միլիոն հոգի :

Անկէ ետքը հիմնուեցան դպրոցներ, որոնց մէջ կը սորվեցնէին յունարէն, և ասորերէն, որովհետեւ դեռ հայերէն գիր չի կար :

Ս. Կուռաւորիչ իր գործը աւարտելէն ետքը, կ'ուզէր առանձնանալ և աղօթել : Ուստի կ'երթար այրի մը մէջ կը փակուէր : Եւ որպէս զի ժողովուրդը առանց հովինի չի մնայ, իր երկու որդիները Կեսարիայէն բերել տալով, կրտսերը՝ Արքատակէսը եպիսկոպոս ձեռնադրեց և իր տեղը դրաւ : Ինք ալ քաշուեցաւ Սեպուհ լեռան Մամեայ այրը, ուր ճգնալով մեռաւ : Հովիւները գանելով անոր դիակը կը թաղեն նոյն այրին մէջ :

Իսկ Տրդատ լսելով որ Կաստանովիանոս կայսրը քրիստոնեայ եղած է, զնաց Հոռոմ ու բարեկամացաւ : Անօր բացակայ եղած ատենը Պարսիկները և հիւսիացին բարբարս ազգերը, որոնց առաջնորդ էր Գեղրեհնե, յարձակեցան Հայաստան : Տրդատ շուտով դարձաւ ու իր թշնամիները սարսափով փախցուց երկրէն :

Անկէ ետքը Տրդատ տեսնելով որ նախարարները զինքը չեն յարդեր, քրիստոնեայ չեն ուզեր մնալ, նեղ-

ուեցաւ ու ինքն ալ քաշուեցաւ Մամեայ այրը : Նախարարները գացին և թունաւորեցին զայն :

Ա. Մ Փ Ո Փ Ո Խ Մ

Արտաշիր գրաւեց Հայաստանը: Խորովի ընտանիքը կոտորեց: Ազատեցան միայն Տրդատ ու Խոսրվիդուխ: Տրդատ Հռովմէական բանակին մէջ մեծաւ ու բաշտ թիւներ ըրաւ: Կայսրը զօրք տըւաւ իրեն: Եկաւ Հայաստան Պարսիկները վնասեց եւ եղաւ թագաւոր: Ամուսնացաւ Աշխէնի հետ: Գրիգորը չարչարեց, Գրիգորէն բժշկուեց Հռովմէական կոտերը: Ցիմարացաւ, Գրիգորէն բժշկուեցաւ եւ բրիստոնեայ եղաւ: Շինեցին եկեղեցիներ եւ դպրոցներ: Գրիգոր ձգնեցաւ Մամեայ այրը: Իր տեղ փոխանորդ կարգեց Արքատակէս որդին: Տրդատ Հռոմ զնաց, շուտով դարձաւ կուռելու համար Պարսից ու Գեղրեհնինի դէմ: Ապա նզնեցաւ: Նախարարները թունաւորեցին զինքը:

Զարգացման բաժինն .— Նայելով աշակերտներու մտրի պաշարին, կարելի է մանրամասնել Տրդատի ու Գրիգորի յարաբշութիւնները եւալին:

Ի Թ. Դ Ա. Ս

ԽԹՄՐԹՎ. Բ. ԵՒ ՏԻՌԱՆ Բ

Տրդատի մահէն ետքը հայ նախարարները կը սկսին իրարու հետ կոռուիլ, զիրար կոտորել և երկիրը տկարացնել: Այդ կոփւներուն մէջ իսպառ ջնջուեցան Բլրանումեանց, Մանաւազեանց, և Որդունեանց նախարարութիւնները:

Հայոց կաթողիկոսը և մէկ քանի նախարարներ տեսնելով այդ դժբախտութիւնը, հոռվմէական կայսեր օգնութեամբը, թագաւոր կը պատկեն Տրդատի որդին Խուրով Բ.Ը. Խոսրով թոյլ մէկն էր. որսի և խնջոյք-ներու ետեւէ էր: Ազատ գետին եղերքը (Ազատ գետը կը թափի Երասմի մէջ) տնկել տուաւ անտառ մը, որ իր անունովը Խուրովիներ կոչուեցաւ: Շինեց նոյնպէս Դուին քաղաքը, և իր աթոռը հոն փոխադրեց:

Խոսրովի թուլութիւնը տեսնելով Պարսից թագաւորը կը զրդոէ հիւսիսային լեռնականները, որոնք կ'արշաւեն Հայոց երկիրը. բայց Վահան Ամառունի իշխանը Օշականի մօտ կը յարձակի անոնց վրայ և կը ջարդէ ու կը փախցնէ:

Խոսրով գրգռուած Պարսից թագաւորին հասցուցած վնասներէն՝ կը մերժէ տուրք տալ: Պարսից զօրքը կը մտնէ Հայաստան. բայց Հայերը կը յաղթեն շնորհիւ Վայէ Մանրակունի քաջ սպարապետին:

Խոսրովի մահէն ետքը անոր տեղ թագաւոր կը պսակուի Տիրան Բ., որ Խոսրովի որդին էր: Տիրան ալ թոյլ ու ապիկար մէկն էր, որ գահը բարձրանալուն պէս հաշտուեցաւ Պարսից թագաւորին հետ և սկսաւ տուրք տալ թէ՛ Հոռոմներուն և թէ՛ Պարսիկներուն:

Հոռոմներու կայսրն էր այն առևն Յուլիանոս, որ Ուրացող կոչուեցաւ քրիստոնէութիւնը ուրանալուն համար: Յուլիանոս պատերազմի գնաց Պարսիկներուն դէմ և Տիրանէն պահանջեց, որ օդնէ իրեն: Տիրան ստիպուեցաւ օդնել որ Հոռոմները Եփրատ գետէն անցնին: Յուլիանոս իր պատկերը զրկեց Տիրանի որ արքունի եկեղեցին մէջ կախէ, իբրեւ երկրորդ աստուածի պատկեր:

Ս. Գրիգորի որդին Արիստակէսը մեռնելէն ետքը

անոր յաջորդեր էր միւս որդին Վրբանէս: Վրբանէս առ մուսնացած ըլլալով որդի ունէր: Վրբանէսի մահէն ետքը անոր յաջորդեց անոր որդին Յուսիկ: Երբ Տիրան ստացաւ Յուլիանոսի պատկերը և ուզեց կախել եկեղեցին մէջ, Յուսիկ թոյլ չտուաւ. առաւ պատկերը և պատուեց ու կախկրտեց: Տիրան վախցաւ Յուլիանոսէն, զայրանալով հրամայեց բրածեծ ընել Յուսիկը, որ մեռաւ:

Յուլիանոս Պարսիկներուն չկրցաւ յաղթել և պատերազմին մէջ սպաննուեցաւ: Պարսից թագաւոր Շապոհ Հոռոմները հալածելէն ետքը, Տիրանը բարեկամաբար իր մօտ կանչեց, աչքերը փորել տուաւ և Արագած լեռան մօտերը գտնուած Կուաշ գիւղը աքսորեց զայն:

Ա. Մ Փ Ո Փ Ո Կ Մ

Տրդատի յաջորդեց որդին Խուրով Բ., որ շինեց Դուինը ու Խուրովակեր անտառը: Անոր օրով հիւսիսային ազգերն ու Պարսիկները արշաւեցին Հայաստան, բայց ետ մղուեցան: Խոսրովի յաջորդեց իր որդին Տիրան Բ., որ բարեկամ եղաւ թէ՛ Պարսից եւ թէ՛ Հոռոմներուն: Յուլիանոսի պատկերին համար Յուսիկը սպաննել տուաւ: Շապոհ Տիրանի աչքերը փորել տուաւ:

Զարգացման բաժին.—Կաթուկ մասնաւորաբար աշակերտներու ուշադրութիւնը հրաւիրել Հոռվմայեցի եւ Հոռոմ յորչոր ջումներուն վրայ: Հոռոմները ո՞չ Հոռվմայեցի էին եւ ո՞չ Յոյն:

ԱՐՇԱԿ Բ. ԵՒ ՄԵԾՆ ՆԵՐՍԵՍ

Պարսից թագաւորը Հայոց սիրտը շահելու համար Տիրանի տեղ անոր Արշակ որդին Հայաստանի թագաւոր պատկեց :

Հռոմներու կայսրը երբ իմացաւ Արշակի թագաւոր ըլլալը և Պարսից հետ բարեկամանալը, դեսպան զրկեց Արշակին և յորդորեց որ Պարսից դաշնակցութենէն ետ կենայ և իրեն հետ միանայ : Արշակ Հռոմներու դեսպանները անվատութեամբ ետ դարձուց : Ատոր վրայ կայսրը բարկացաւ և սպաննեց Տրդատ եղբայրը, որ Տիրանի օրոնվ պատանդ տրուած էր : Թէսդոս զօրապեան ալ բազմաթիւ զօրքով Հայաստան զրկեց :

Արշակ վախցաւ և Յուսիփի թռո Ներսէս կաթոս զիկոսը իբրեւ միջնորդ Պոլիս զրկեց : Կայսրը զիջու և իր մօտ գտնուած պատանդներ արձակելով, կայսերական տունէն Ողիմսվիադա անունով օրիորդը Արշակին կնութեան ուղարկեց :

Պարսից Շապուհ թագաւորը լսելով շատ բարկացաւ : Ուզեց Արշակը պատժել : Բայց Հռոմներուն հետ դարձեալ պատերազմի բանուած ըլլալով, Արշակէն օգնական զօրք ուղեց : Արշակ վախցաւ ու զօրք տուաւ : Այս ժամանակ իրեն թշնամի եղաւ Հռոմներու կայսրը, որ Թէսդոս զօրապեալ նորէն Հայաստան զրկեց :

Արշակ կայսեր սիրտը առնելու համար դարձեալ իբրեւ դեսպան զրկեց Մեծն Ներսէսը : Կայսրը Արշակի նամակը առնելով չի կարդաց անդամ և Մեծն Ներսէսն

ալ աքսորեց : Ներսէս յետոյ ազատեցաւ իր աքսորէն, երբ Հռոմներու կայսրը փոխուեցաւ :



Մեծն Ներսէս

Արշակ չար և անսպարկեցաւ կեանք մը կը վարէր, այդ պատճառով միշտ Մեծն Ներսէս կը յորդորէր զայն և երկեմն ալ կը յանդիմանէր :

Պոլիսի մէջ սպաննուած Տրդատը որդի մը ունէր, որուն անունն էր Գնէլ ազատուելով եկաւ բնակեցաւ կուաշ աւանը, կուրացած Տիրանի մօտ : Տիրան երբ իմացաւ իր տղուն Տրդատի մահը, շատ ցա-

ւեցաւ, և իր բոլոր կալուածները իր թոռան՝ Գնէլի պարգևեց : Գնէլ ամուսնացաւ Փառանձեւ անուն գեղեցիկ ու խելացի իշխանուհիի մը հետ :

Այս բոլորին համար շատերը սկսան նախանձիլ Գնէլի վրայ : Տիրիք և Վարդան անուն իշխանները նախանձելով գացին Արշակին և քառոթիւններ ըրին Գնէլի վրայ : Հօին թէ «Գնէլ կը խորհի գքեզ սպաննել և թագաւոր ըլլալ» : Արշակ հաւատաց և Գնէլի կալուածները ձեռքէն առաւ : Ապա ու զելով անոր գեղեցիկ կինը յավշտակել, խորհեցաւ սպաննել դժբախտ Գնէլլ :

Անգամ՝ մը երբ մեծ տօն կը կատարուէր, և Գնէլ իր կնոջ հետ եկեղեցի կ'երթար, Արշակի հրամանով զինուորները բանեցին Գնէլը և տարին սպաննելու : Փառանձեմ մազերը փետելով եկեղեցի վազեց, Մեծն Ներսէսի ոտքն ինկաւ և ինսլրեց որ ազատէ Գնէլը : Մեծն Ներսէս ժամերգութիւնը կիսատ ձգեց և գնաց թագաւորին վրանը : Արշակ սուտ քուն ձեւացուց : Այդ միջոցին դահճճները եկան լուր բերին թէ Գնէլը սպաննուեցաւ : Մեծն Ներսէս անիծեց Արշակը և վրան հեռացաւ :

Արշակ յետոյ Փառանձեմ իրեն կին առաւ : Փառանձեմ շատ փառասէր էր : Ան ուզեց թագաւորին առաջին կինն ըլլալու համար Ռդմալիադան սպաննել . ուստի Մշիւմիկ քահանային միջոցաւ թունաւորեց զայն հաղորդութեան ժամանակ :

Արշակ նախարարներուն հետ ալ թշնամացաւ : Ան ուզեց Արշակաւան անունով քաղաք մը չինել Մասիսի սատրոտը, և որպէսզի չուտով բազմամարդանայ, հրաման հանեց որ այնտեղ ապաստանող յանցաւորները պատիմէ ազատ ըլլան : Քիչ ատենէն Արշակաւանը լեցուեցաւ գողերով, աւազակներով, չարագործ-

ներով : Նախարարները բարեացան և յարձակելով կոտորեցին քաղաքին բնակիչները :

Նախարարները դիմեցին նաև Պարսից թագաւորին և ինդրեցին որ Արշակը պատմէ : Ան ալ Արանողան անուն զօրապիտը գորքով դրկեց Հայաստան : Արշակ



տեսնելով որ իրեն չեն օգներ նախարարները, ուզեց նուէրներով սիրաշահի Ալանողանը, բայց օգուտ ըրաւ : Գերի բանուեցաւ ու տարուեցաւ Պարսկաստան :

Շապուհ պահանջեց նաև Փառանձեմը և մեծ նախարարներուն կիները, որ պարսից Դուռը տանին։ Նախարարները հասկցան Շապուհի միտքը, առին իրենց ընտանիքները և փախան Հոռոմներու երկիրը։ Փառանձեմն ալ թագաւորական գանձերը առնելով ամրացաւ Արտազերս բերդը։ Այս բերդը կը գտնուէր այժմեան Աճի քաղաքի աւերակներու մօտերը։

Շապուհ բարկանալով Արշակը բանտարկեց Անուշ բերդին մէջ և բաղմաթիւ զօրքավ հրամայեց պաշարել Արտագերս արոցը։ Բերդը դրաւուելով թագուհին գերի տարուեցաւ Պարսկաստան, ուր ցիցի վրայ հանուեցաւ։ Արշակ երբ լսեց այս բոլորը, անձնասպան եղաւ Անուշ բերդին մէջ։

Ս. Մ. Փ Ա Փ Ո Ւ Մ

Շապուհ Տիրանի տեղ թագաւորեցոց Արշակը, որուն դէմ զինուոր զրկեց Հոռոմներու թագաւորը։ Արշակ խոնարհեցաւ եւ ամուսնացաւ Ողիմափաղայի հետ։ Արշակ ցովի ու հեշտասէր էր։ Գնէլի կալուածները գրաւեց եւ սպաննել տալով զայն, անոր Փառանձեմ կինը իրեն հարճ առաւ։ Մեծն ներսէս անիծեց զինը։ Ան շինեց Արշաւականը, չարազործներու քաղաքը։ Շապուհ Ալանոզանի միջոցաւ բռնեց Արշակը, որ Անուշ բերդին մէջ անձնասպան եղաւ, լսելով իր կնոջ Փառանձեմի գերի բռնուիլը եւ սպաննուիլը։

Զարգացման բաժին.—Կարելի է յիշել Ռաֆֆիի «Սամուել»ը եւ Արտագերսի պաշարումէն ընթերցում ընել կամ անկէ օգտուելով պարզ լեզուով ներկայացնել բերդին պաշարումը։

Լ. Ա. Դ. Ա. Ա

Մ Ե Բ Ո Ւ Ի Ժ Ա Ն Ե Կ Պ Ա Պ


Արշակ Բ.ի մահէն ետքը Հայաստանի նախարարները սկսան իրարու հետ գժտիլ և խոռված թիւններ յարուցանել։ Շապուհ միտքը զրաւ Հայոց թագաւորութիւնը կործանել և երկիրը միացնել Պարսկաստանի։ Տեսնելով որ Հայոց կաթողիկոսը և նախարարներէն շատերը Հայաստան չեն գտնուիր, իր աղջիկը Մերուժան Արծրունի հայ նախարարէն հետ ամուսնացուց և խոռոշացաւ զայն թագաւոր պատկել Հայոց, եթէ Հայաստանը նուածէ և պարսից կրօնքին դարձնէ։

Մերուժան հաւանեցաւ և բազմաթիւ զօրքերով դիմեց Հայաստան։ Անոր հետ մէկտեղ էր նաև Վահան Մամիկոնեան նախարար։ Մերուժան եկաւ և սկսաւ բոլոր արժանաւոր եկեղեցականները բռնել, կալանաւորել և պարսկաստան զրկել։ Այսեց բոլոր իր ձեռքը ինկած յունարէն գիրքերը։

Մեծն Ներսէս այդ ժամանակ Պոլիս կը գտնուէր։ Ան լսելով բոլոր այդ ցաւալի էկպքերը, խնդրեց Հոռոմներու կայսրէն որ պաշտպանէ Հայերը և Պապը թագաւոր պատկէ։ Պապ Արշակի որդին էր, Փառանձեմ թագուհիի տղան։ Կայսրը հաւանեցաւ և Պապը, Մեծն Ներսէսը ու փախած նախարարները բաղմաթիւ յոյն զինւորներով Հայաստան զրկեց։

Մերուժան Հայոց և Հոռոմներու միացած ուժէն զարհութեցաւ և Պարսկաստան փախաւ։ Շապուհ շատ զօրք ժողվեց ու դարձեալ Մերուժանը Հայաստան զրկեց։

Պապի հետ մէկտեղ եկող հոռոմ զօրապետին անունն
էր Տերինտիանո, որ նոր օգնական զօրք ստանալով Մե-
րուժանի դէմն եղաւ : Պատերազմը տեղի ունեցաւ Զի-
րաւ դաշտին մէջ, Նստա լեռան մօտ : Լեռան վրայ եղած
էին Պապը և Մեծն Ներսէսը, որ բազկատարած կ'աղօ-
թէր Սատուծոյ :



Մերուժան Շամբուրով կը պատկուի

Կոխուը սոսկալի եղաւ : Բայց վերջապէս պարսիկ
զինուորները յաղթուեցան ու սկսան փախչիլ : Մուշեղ
Մամիկոնեան պատերազմին մէջ քաջութիւններ դործեց
և վիրաւորեց Աղուանից Աւոնայր թագաւորը :

Մերուժան սկսաւ փախչիլ : Սմբատ Յաղթատունի
քաջ իշխանը հասաւ Մերուժանին ետեւէն, որոն ձին
վիրաւորած ըլլալով հա միացած էր : Բոնից զայն :

Հրաշէկ շամփուրը պապի ձեւով բոլորեց անոր գլխին
դրաւ՝ ըսելով .

— Ահաւասիկ կը պապի մքեզ, Մերուժան, որով-
հետեւ զուն կը փափոքէիր Հայոց թագաւոր ըլլալ, և
ես իբրև թագաղիր ասպետ պէտք է հայրական պաշտոնս
կատարեմ :

Այսպէս սպաննուեցաւ դաւաճան Մերուժանը : Իսկ
անոր ընկեր Վահանն Մամիկոնեանը ատիւց առաջ սպան-
նուած էր իր հարազատէն :


Պապ իր բարերարներուն չնորհակալ ըլլալու հա-
մար, պատուեց զանոնք : Բայց չոտով ինքզինքը տուաւ
զեղիս ու անառակ կեանքի մը : Ներսէս կը յորդորէր
զայն, բայց անօրուտ : Պապ ուղելով ազատուիլ Մեծն
Ներսէսի յանդիմանութիւններէն, թունտուրեց զայն,
վերջէն աւ զղջալով մեծ սուդ բրու ու լացաւ : Բոլոր
ժողովուրդը սպաց Մեծն Ներսէսի մօնը, որովհետեւ
ամէնուն սիրելի եղած էր ան իր բարի գործերով ու
խորհուրդներով :

Պապ Հոսովմներուն դէմ ալ ապերտիստ գտնուեցաւ :
Պոլիսի մէջ խոռված թիւններ ծագած էին, ատկէ օկ-
տուելով Պապ Հոսովմներու զօրքերը Հայաստանէն վարն-
տեց և սկսաւ պատերազմի պատրաստուիլ : Հոսովմներու
զօրապետը նոր զօրք ժողվելով անմիջապէս յարձակեցաւ
և Պապը բոնելով Պոլիս տարաւ : Հան գլխատուեցաւ :
Պապ թագաւորեց 7 տարի :

Զափահաս որդի չունէր Պապ, այդ պատճառով Հո-
սովմներու կայսրը Հայոց թագաւոր պապիկց Պապի եղ-
բօրորդին Վարագուած, որ մնած անուն հանած էր Լոնդո-
րացացիներու դէմ մղուած պատերազմին մէջ :

Վարագուած Հայաստան զալով Պապի օրինակին

հետեւեցաւ, ուզեց Հոռոմներուն տակ չմնալ: Շապուհ
Բ. Պարսից թագաւորին մարդ դրկեց և խնդրեց որ իր
աղջիկը իրեն կնութեան տայ և դաշնակցի:



Վարագիտաս հինգ Լոնգորաւացիմեն կ'ականնեկ

Կայսրը իմացաւ այս բանը: Հոռոմ զօրապետին լուր
դրկեց Վարագգատար բռնել և Պոլիս դրկել: Վարագգատ
յուսալ ով թէ սկիտի կրնայ ինքզինքը արդարացնել, իր
կա մքով գնաց: Բայց Թէոդոսի երեսն անգամ չնայեցաւ,
այլ շղթայել տուաւ և աքսորեց զայն Թուղիս (հաղանա)՝
կղզին:

Ա. Մ Փ Ո Փ Ո Ւ

Շապուհ Մերուժան եւ Վահան Մամիկոնեան Շուրացող նա-
խարարները կը դրկէ Հայաստան. Ներսէսի խնդրանքով Պապ թագա-

ւոր կը պսակուի կայսրէն, որ զինուոր կուտայ անոր: Մերուժան
վախնալով կը փախչի: Նոր զօրքով կուզայ եւ կը կուուին Զիրաւ
դաշտին մէջ: Մերուժան Շամփուրով կը պսակուի: Պապ մոլիկեանք
մը կը վարէ, կը թունալորէ Մեծն ներսէսը, կ'ըմբոստանայ Հո-
ռոմներու դէմ, բայց Պոլիս տարուելով կը զիսատուի, Վարագ-
գատ կը յաջորդէ անոր, բայց Պապի պէս կը բռնուի եւ կ'արսոր-
ուի հեռաւոր կղզի մը:

Զարգացման բաժին. — Կարելի է ծանօթութիւններ տալ ոչ
միայն իսլանտայի մասին, այլեւ ընդլայնել Մերուժանի եւ Վահանի
գործերուն պատմութիւններ:

Լ. Բ. Գ. Ս. Ս

Ա. Բ. Շ. Ա., Վ. Ա. Ա. Բ. Շ. Ա. Խ. Ա. Վ.


Թէոդոս կայսրը որպէս զի հայերը չապատամբին՝
Վարագգատի տեղ թագաւորեցուց Պապին երկու որ-
դիները՝ Արշակ Գ., և Վարագակ Բ., որոնք Պոլիս պա-
տանդ էին: Արշակ իր աթոռը հաստատեց Պոլիսի, իսկ
Վարագարակ Երիզա:

Վարագարակ նոյն տարին մեռաւ, որով Արշակ Գ.
մինակը թագաւորեց բալոր Հայաստանի վրայ:

Թէոդոս ալ մեռաւ: Անոր երկու որդիները թագա-
ւոր եղան: Անոնք թոյլ ու ակար մարդեր էին: Պարսից
թագաւորին հետ համաձայնեցան և Հայաստանը երկու
մասի բաժնեցին: Արեւելեան ընդարձակ մաս մը Պար-
սից ինկաւ իսկ արեւմտեան մասը Հոռոմներուն:

Արշակ Գ. չուզեց հեթանոս թագաւորի տակ մնալ

և անցաւ Հոռոմներու կողմը. իրեն հետ բազմաթիւ նախարարներ։ Շապուհ ստիպուեցաւ Հայաստանի իր մասին վրայ թագաւոր դնել Խոսրով Գ. Արշակունի իշխանը։



ԱՐՄԵՆԻ ՀԱՅՈՒԹՅԱՆ ԹԻՎԻ ԿԱՐԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Խոսրով Գ. խելացի մարդ մըն էր։ Ան իր կողմը շահեցաւ բոլոր հայ նախարարները։ Երբ որ Արշակ մեռաւ։ Հոռոմներու մասի հայ նախարարները հպատակեցան Խոսրովի։ Կայսրն ալ ընդունեց որ Խոսրով ըլ-

լայ բոլոր Հայաստանի թագաւորը, միայն թէ իրեն տուրք տայ։

Շապուհ կասկածեցաւ Խոսրովի վրայ։ Երբ որ առանց իր հաճութեան Մեծն Ներսէսի որդին՝ Ս. Սահակ Պարթևը կաթողիկոս կարգեց, աւելի կասկածեցաւ և բարկացաւ։ Խոսրով այն ատեն ուզեց բարեկամ ըլլալ Հոռոմներուն և միայն անոնց տուրք տալ։ Շապուհ երբ իմացաւ այս բանը, իր Արտաշիրի որդին մեծ զօրքով Հայաստան դրկեց։ Խոսրով տեսաւ որ Հոռոմները չեն օդներ, գնաց Արտաշիրի մօտ, որ դատաստան ըրաւ, գահէն զրկեց և չզթայի զարնել տուաւ, տարաւ Պարսկաստան։ Խոսրով 5 տարի թագաւորեց։

Ս. Մ Փ Ո Փ Ո Ւ Մ

Թէոդոս Վարազդատի տեղ թագաւորեցուց Արշակ Գ. եւ Վարեակ Բ. որ մէկ տարիէն մեռաւ։ Պարսիկները եւ Հոռոմները Հայաստանը բաժնեցին երկու մասի։ Հոռոմներու բաժինին վրայ Արշակ, Պարսից բաժնին վրայ Խոսրով Գ. Արշակունի իշխանը դըրկուեցան։ Արշակի մահէն ետք Խոսրով տիրեց բոլոր Հայաստանի բայց Շապուհ կասկածելով իր տղուն Արտաշիրի միջոցաւ բռնեց զայն եւ գերի տարաւ Պարսկաստան։

Զարգացման բաժին. — Սահակ Պարթենի դէմքը կարելի է քիչ մը աւելի որոշ կերպով ծանօթացնել։

Ա. Դ. Դ. Ս. Ս

ՎԱՐԱՄՇԱՊՈՒՀ, ՇԱՊՈՒՀ ԵՒ ԱՐՏԱՇԵՍ Գ.

Պարսից արքան Խոսրովի տեղ թագաւոր կարգեց
անոր եղբայրը Վռամշապուհ, որ խոհեմ, իմաստուն
թագաւոր մը եղաւ։ Սիրելի եղաւ թէ՛ Հայերուն, թէ՛
Հոռոմներուն և թէ՛ Պարսիկներուն։


Անոր օրով Հայոց կեանքը նոր ոգի մը առաւ, եր-
կու նշանաւոր անձերու չորսիւ, այդ անձերն էին Ս.
Սահմակ և Ս. Մեսրոպ Մաշրուց, Անոնք տեսնելով որ
Հայերը գիր և գրականութիւն չունին, Հայոց եկեղե-
ցիներուն մէջ անգամ յունարէն և ասորերէն կը կար-
դային, որոշեցին Հայոց գիրերը գանել։ Վռամշապուհ
թագաւորն ալ սիրով միացաւ անոնց հետ և միասին
աշխատեցաւ։

Երկար տանջանքներէ ետքը Ս. Մեսրոպ գտաւ հա-
յերէն գիրերը և անկէ ետքը սկսան թարգմանել Ս.
Գիրքը և ուրիշ բազմաթիւ գիրքեր։ Բացին դպրոցներ,
ուր աշակերտներուն կը սորվեցնէին հայերէն գիրերն
ու գիրքեր թարգմանել։ Այդ աշակերտները կոչուեցան
Թարգմանիչներ։ Անոնց մէջ նշանաւոր եղան Դեւոնդ
երէց, Յովսէփ, Եղիշէկ, Կողբացի, Կորիւն Սքանչելի,
Յովսան Եկեղեցացի, Մովսէս Խորենացի և այլն։

Մովսէս Խորենացին առաջին անգամ գրեց Հայոց
աւանդական պատմութիւնը և շատ նշանաւոր մէկը
եղաւ։ Անոր Ընկերներէն էին Եղիշէ, Դաւիթ Ան-
յաղիթ և այլն։

Անոնց շրջանը կոչուեցաւ Ոսկեդար։

Այդ բոլոր աշակերտները ուսում սորվելու համար



Մովսէս Խորենացի

գային Պոլիս, Աղեքսանդրիս, Աթէնք և ուրիշ քա-
ղաքներ։

Վռամշապուհ խաղաղ կերպավ կառավարելով 21
տարի թագաւորելէն ետք մեռաւ։ Ս. Վահակ հայրա-
պետին խնդրանքով Խոսրով Գ. Ը դարձեալ թագաւո-

բական գահը բարձրացաւ: Բայց հաղիւ տարի մը թագաւորելով մեռաւ,

Պարսից թագաւորն էր այն ժամանակ Յազիւրս Ա., որ ուղելով ջնջել Հայոց թագաւորութիւնը, իր որդին Շապուհը Հայոց վրայ թագաւոր դրաւ: Հայերը չսիրեցին Շապուհը, որ կ'անարգէին Շիրակի որդի» և «ինամարդի» անուանելով: Մյսպէս 4 տարի մնալէն ետքը, երբ լսեց որ հայրը հիւանդացեր է, զնաց Պարսկաստան գահը ժառանգելու:

Շապուհ Պարսկաստանի թագաւոր եղաւ, բայց շուտով սպաննուեցաւ ու անոր յաջորդեց Վուան: Վուան զօրք զրկեց Հայաստան, որ ապստամբ նախարարները խոնարհին, բայց տեսնելով որ անօդուած է, Վուանչապուհի փոքր որդին Արտաշէսը թագաւոր պսակեց և անոր անունն ալ փոխելով Արտաշիր դրաւ:

Բայց երիտասարդ թագաւորը իր անկարգ կեանքով ատելի եղաւ նախարարներուն: Սահակ կաթողիկոսը քանի մը անդամ իրատեց զայն, բայց անօդուած նախարարները խորհուրդ ըրին որ երթան Պարսից թագաւորին, խնդրեն որ Արտաշէսը հրաժարեցնէ և պարսիկ մարզպան (կուսակալ) մը զրկէ: Ս. Սահակն ալ դիմեցին: բայց ան մերժեց ըսելով.

— Քա՞ւ լիցի, ես իմ հիւանդ ոչխարը չեմ փոխեր առողջ գաղանին հետ, որուն առողջութիւնը մեղի մնաւակար է:

Բայց նախարարները իրենց որոշումը գործադրեցին, գացին իրենց թագաւորը ամբոստանեցին, իբրեթէ Հոռոմներուն հետ բարեկարացած ըլլայ: Վուան Հայոց թագաւորը և կաթողիկոսը իր մօտ կանչեց և առանց անոր խօսքերը լսելու գահազորկ ըրաւ երկուքն ալ, պարսիկ մարզպան մը զրկեց Հայաստանի իբրեւ կա-

ռավարիչ, Սուրմակ անունով փառասէր քահանան ալ՝ կաթողիկոս:

Այսպէս վերջացաւ Հայաստանի Արշակունեաց թագաւորութիւնը 430 թուականին: Քիչ ետքը մեռան նաև Ս. Սահակ և յետոյ Ս. Մեսրոպ Մաշթոց:

Ա. Մ. Փ. Ռ. Փ. Ռ. Խ. Մ.

Խորովի յաջորդեց Եղբայրը Վ. ռամեապուն: Որ խոնեմ էր եւ սիրելի ամենուն: Ս. Սահակ եւ Ս. Մեսրոպ Վ. ռամեապունի հետ աշխատեցան հայերէն գիրը գանելու, զգրցներ բացին, աշակերտներ հացուցին, Ս. Գիրը եւ ուրիշ մատեաններ թարգմանեցին: Վ. ռամեապունի տեղ Շապուն պարսիկը եղաւ թագաւոր, որ չփրուեցաւ Հայերէն, Շապունի յաջորդեց Արտաշէս Գ. կամ Արտաշիր, ցաւ Հայերէն, Շապունի յաջորդեց Արտաշէս Գ. կամ Արտաշիր, որ նախարարներու զրպարտութիւնով: Ս. Սահակի հետ, զահազուրկ եղաւ 430ին: Մյսպէս վերջացաւ Հայոց Արշակունեաց հարստութիւնը:

Զարգացման բաժին. — Մեսրոպ Մաշթոցի եւ թարգմանիչ աշակերտներու զերը ընդլայնելի զեղեցիկ նիւթեր են:



2399

2013

5

